

ԿԸ ԽՆԴՐՈՒՄ ՆԿԱՏԻ
ՈՒՆԵՆԱԼ ՇԵՏԵՒԵԱԼԸ.

ՆԱԽԱՊԵՍ ՏՊԱԳՐՈՒԱԾ
ԿԱՄ ՀԱՄԱՅԱՆՅՈՎ ԼՈՅՍ
ՏԵՍԱԾ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՉՂՐԿԵԼ

«ԲԱԳԻՆ»
ԱՐՏԱՏՊՈՒՄ ՉՂՆԵՐ:



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ
ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Գրականություն - Արուեստ - Իմացական Աշխարհ

ՎԱՐԻՉ ԽՄԲԱԳԻՐ
Յակոբ Պալեան

ԸԱՐՏՈՒՂԱՐ
Նազո Գէորգեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Սարգիս	
Կիրակոսեան	(Լիբանան)
Մովսէս	
Հերկեղեան	(Լիբանան)
Շուշիկ	
Տասնապետեան	(Լիբանան)
Յակոբ	
Տէր Ղուկասեան	(Լիբանան)
Զաքար	
Քէշիշեան	(Լիբանան)
Անուշ	
Թրուանց	(Հայաստան)
Արքմենիկ	
Նիկողոսեան	(Հայաստան)
Հրանդ	
Մարգարեան	(Մ. Նահանգներ)
Աւետիս	
Հաճեան	(Մ. Նահանգներ)
Յարութիւն	
Պէրպլերեան	(Գանատա)

ԷԶԱԴՐՈՒՄ
Անի Փէիլիվանեան-Սարգիսեան

Հասցէ՝
Պուրճ Համուտ
Շաղղոյեան կեդրոն
Բ. յարկ
E mail:
pakin@hamazkayin.com
Հեռ. 00961 1 241072

Տպագրութիւն՝
Համազգայինի
«Վահէ Սէթեան»
տպարանի

Յրուումի կեդրոն՝
Համազգայինի
Գրատարած,
Շաղղոյեան կեդրոն,
Պուրճ Համուտ
Հեռ. (01)241263/4
Ֆաքս՝ (01)260329
Փոստարկղ՝ 80 1096
Պուրճ Համուտ
Email: imphamaz@inco.com.lb

Բ | Զրատարակութիւն՝
Համազգայինի
Կեդրոնական Վարչութեան

ԲԱԳԻՆ

ՅՈՒՂԻՍ, ՕԳՈՍՏՈՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 2013

ԾԱ. ՏԱՐԻ, ԹԻՒ 3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

■ ՓՈՒՆԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ ՖՐԱՆՍԱՅԻ ԳՐՈՂԻՆ ՎԷՊԸ՝ ԻՐԱՌՈՒԹԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ - Յ. Պ.	1
■ ՄԱՀ ԼԵՒՈՆ ԱՆԱՆԵԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՌԹԵԱՆ ԲԱԶՄԱՄԵԱՅ ՆԱԽԱԳԱՀ «ՆԱՄԱԿ՝ ԹՈՒՐԶ ԲԱՐԵԿԱՄԻՍ» - ԼԵՒՈՆ ԱՆԱՆԵԱՆ	3 4
ՑԱԽԱԿՑԱԳԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ԿՏԱԿԸ - Յ. Պ.	9 10
■ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ ԹԱԽԱՆՑԱՆԶ ԹՂԹԻՆ - Արքահամ Ալիքեան ՀԵԶ ԻՐԻԿՈՒՆ - Արքահամ Ալիքեան ԱԳՈԱԲԸ - Արքահամ Ալիքեան ԵՐԲ ԱՐԵՒՆԵՐԸ ԿԸ ԼԵՐՂԱՆԱՆ... ԿԸ ՏԻՐԷ ԿԱՄԸԸ ՄԱՅՈՒՄՆ - Ս. Կիրակոսեան ՀԱԼԷՊ ՀԱԼԷՊ - Մարուշ	12 13 14 17 21
■ ԱՐՉԱԿ ՍԻՐՈՒՆ - Մարուշ Երամեան ՀՐԵԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆ - Իշխան Զիֆթեան ԶՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԾ ԶԿՆԵՐԻ ՏԵՍԱԿ - Սուսաննա Յարութիւնեան ՍԵՒ «ՄԵՐՍԵՂԵՍԸ» - Հրաչ Բեգլարեան	23 28 32 38
■ ԹԱՏՐՈՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱԴԻՆ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆԸ - Պերճ Ֆազլեան	46
■ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՀԻՍԼԷՐԻ ԽՈՅԱՐԱՐՈՒՅԻՆ - Յ. Պ.	49
■ ԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ԳԱՂԱՓԱՐԱՆՕՍԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԶԱՂԱԶԱԿԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵԶՐԵՐՈՒ ԻՐԱՐԱՆՑՈՒՄԻՆ ԵՒ ԾՓՈԹԻՆ ՄԵՋ - Յ. Պ.	66
■ ԻՄԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԸՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ - Յովհաննէս Զատիկեան	69
■ ՄՐՅԱՆԱԿ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԵՒՈՆ ՇԱՆԹ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ	72
■ ԱՐՈՒԵՍ ԺԻՐԱՅՐ ԲԱԲԱԶԵԱՆ ՍՓԻՒՌԻ ՄԵՋ ԲԵՄԻ ԾԱՌԱՅԵԼՈՒ ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ - Յ. Պ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԵՄԵՐՈՒ ՎՐԱՅ ԱՐԴԵՆ ԱՆՈՒՆ ՆՈՒԱՃԱԾ ՍԻՄՈՆ ԱՐԳԱՐԵԱՆ ԿԸ ՎԿԱՅԵ ԺԻՐԱՅՐ ՓԱՓԱԶԵԱՆԻ ՄԱՍԻՆ	73 80

ՆՈՂԵՐ ԼՈՒԱՆԱԿԱՐ

«ՎԱՐԻՆԷ», ՏԵԳՐԱՆ ԶՈՒՄԱՃԵԱՆԻ ՕՓԵՐԱՆ,
ԲԵԱՆԴՐՈՒԹԻՒՆ ԺԻՐԱՅՐ ԲԱԲԱԶԵԱՆԻ



ISSUES & PERSPECTIVES

Հեղինակ՝ ԱՐԱՄ Ա.
Անթիլիաս-2013



ՆԱՄԱԿԱՆԻ

Հեղինակ՝ ԱՐՄԵՆ ԴԱՐԵԱՆ
Երեւան - 2010



THE ARMENIAN PRESS IN EGYPT

Հեղինակ՝ ՏՈՔԹ. ՍՈՒՐԵՆ Ն. ՊԱՅՐԱՄԵԱՆ
Եգիպտոս - 2013



ԴԴՈՒՄԻ ՀԱՍ

Հեղինակ՝ ԶԱՀՐԱՍ
Իսթանպուլ - 2013



ՍՈՒՑՈՒՄԾ ԷՋԵՐ

Հեղինակ՝ ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ
Հատոր Գ.
(1961-1966)
Երեւան, 2013



ՃԱԿԱՏԱԳՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ՍՈՒՑՈՒՄԾՆԵՐԸ

Հեղինակ՝ ՇԱՀԱՆԴՈՒՄՆ
Պէյրուս - 2013



ԽԱՌՆԱԿ ՕՐԵՐ ՀԱԼԷՊԻ ՄԵՋ

Հեղինակ՝ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ
Հալեպ - 2013


Միջազգային պատժական ատեանին կրնա՞նք ներկայացրնել ֆրանսացի գրողի վեպին մէջ տեղ գտած խենթութիւնները, երբ շահախնդրուած ուրացումները լսելու տրամադիր մարդիկ կան, նոյնիսկ եթէ անոնց վրայէն դար անցած է: Բայց նախ մենք տեղեակ պէտք է ըլլանք: Իսկ լաւ պիտի ըլլայ, որ դատ-դատաստանի կողքին, տեսնենք, թէ ինչպէ՞ս խենթութիւնը գրականութիւն կ'ըլլայ:

Ֆրանց-Օլիվիէ Ժիգպերթ, որ միաժամանակ մեծ լրագրող է, գրած է ինքնատիպ վեպ մը, «Հիմլերի Խոհարարուհին», լոյս տեսած 2012-ին, «Կալիմար» հրատարակչատունէն (տեսնել «Բագին»-ի այս համարի 49էն 65 էջերը, ուր ամփոփ կերպով ներկայացուած են գրողը եւ ընդարձակ հատուածի մը հայերէն թարգմանութիւնը):

Պատմութեան գիրք չէ այս վեպը, պատմավեպ ալ չէ: Էապէս վեպն է հայ աղջնակի մը, ինչպէս իր սերնդակիցներէն շատերու, իր, իր ժողովուրդին եւ նախորդ դարու իրադարձութիւններուն ողիսականն է, վկայութիւն, որ յուշագրութիւն չէ, քանի որ ֆրանսացի գրողի յուշերուն մաս չեն կազմեր այդ իրադարձութիւնները: Աղջնակ՝ որ դարուն մէջէն կ'անցնի դար մը ապրելով, մինչեւ խոր ծերութիւն, միշտ պահելով կեանքի սերը: Պատումները «մարդկութեան» ողիսականն են, հայկա-

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ՖՐԱՆՍԱՅԻ ԳՐՈՂԻՆ ՎԵՊԸ՝ ԻՐԱՒՈՒԹԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ



կանեն անդին, շարտուած ժամանակակից մարդկութեան առջեւ, որ ինքզինք չի տեսներ իր անցեալին մէջ:

Կողմնապաշտութիւն թող չհամարւի այն, որ միայն հատուած մը թարգմանաբար ներկայացուած է: Ի հարկէ մեզի հոգեկան բաւարարութիւն կը պատճառէ, երբ օտար գրողը, առանց սքողելու դառն իրականութիւնները, պաստառին վրայ կը փռէ մեր ցաւերը, առանց մեր ճոռոճմ գգացականութիւններուն: Ասոր կողքին, ուշագրաւ է կեանքը գրականացնելու օրինակելի օրինակը: Մեր ապրած անլուռ ողբերգութիւնը դրուագումով եւ բազմաշերտ հոգեբարոյական արտայայտութեամբ գրականացուած է: Եթէ թոյլ տրուի ըսել, այս վէպը արդիական դիպաշար մըն է արուեստի, եւ որքա՛ն փափաքելի պիտի ըլլար, որ ան նկարահանուէր սպիտակ պաստառի կախարդներէն մէկուն կողմէ, առանց գրողը եւ իր գործը աժան քաղաքական քարոզչութեան ծառայեցնելու:

Լաւ պիտի ըլլար գիրքը հայերէնի թարգմանել:

Լաւ պիտի ըլլար գայն ներկայացնել որպէս գրական երկ, կարելիութիւն ընծայելով, որ գրասէրները, հայեր եւ օտարներ, իրենց «ընթերցում»ը կատարեն, արտայայտուած կարծիքներով չբաւարարուին: Վստահ եմ, որ մարդիկ նոյն «բաներ»ը պիտի չտեսնեն: Դարու մը խենթութիւնը կայ հոն, երբ «մարդը մարդ կերաւ», հակառակ բնութեան մէջ ընդունուած նոյնիսկ գազանական կարգին: Գայլը գայլ չ'ուտեր:

Ի հարկէ, ընթերցողը երբեմն գայ-

թակղալի պիտի գտնէ կարգ մը կացութիւններ եւ պատկերներ: Չափազանցուած սեռային արտառոցութիւններ, մանաւանդ երբ իրականութիւնները կը սիրենք գաղտնիացնել: Բայց վէպը միթէ հայելի մը չէ՞, զոր կը պտտցնենք ժամանակին, ընկերութեան, մարդոց եւ հոգիներու վրայ:

Եւ դարը այդ հայելիին մէջ արուեստով ցուցնելը գրականութիւն է:

Գիրքը հայածնունդ հերոսուհիին «սական» է, դարերու խորքին սկսած եւ շարունակուող «սակա»ն է մարդկութեան, սահմաններէ ասդին եւ անդին, անժանօթ եւ ծանօթ աշխարհներու մէջ:

Ծերակուտական մը, հեռաւոր երկրի մը մէջ, Ապրիլ 24-ի հանդիսութեան մը ընթացքին բեմէն «հայրաբար» ըսաւ հետեւեալը. *Never forget, never again, but forgive...*

Ֆրանց-Օլիվիէ Ժիզպերթի վէպին ընթերցումէն ետք հայրական իմաստութիւնը հարկ է կրկնել՝ աւելցնելով. *How?*

Կը սիրենք յուսալ, որ ընթերցողը պիտի չբաւարարուի հատուածի մը թարգմանութեան ընթերցումով:


Պիտի անհանգստանա՞նք, մենք՝ մարդիկ, այլ ուղղութիւններով ոչ միայն նայելով, այլ նաեւ մեր հայեացքը դարձնելու համար դէպի իրականութիւնները, որոնք կը վերաբերին ոտնակոխուած իրաւունքներու եւ հոգիներու:

Տգեղութիւններն անգամ երբ լաւ կը գրականացուին, կը դառնան գեղեցիկ, ֆրանսերէն կ'ըսեն՝ *Les belles lettres*:

3. Պ., 27 Յուլիս 2013

ԼԵՒՈՆ ԱՆԱՆԵԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԲԱԶՄԱՍԵԱՅ ՆԱԽԱԳԱՀ



Բայց երկիրը բնակարան
չէ, որ ուզած պահին փոխես
կամ փոխանակես:

ԼԵՒՈՆ ԱՆԱՆԵԱՆ
13/10/1946 - 03/09/2013

Լեւոն Անանեան ծնած էր 1946-ին, Տաւուշի Կողբ գիւղը: Աւարտած էր Երեւանի պետական համալսարանի բանասիրական ճիւղը: Աշխատակցած է պարբերականներու եւ միաժամանակ խմբագրած է «Մանկավարժ» թերթը: 1975-ին մաս կազմած է «Գարուն» գրական ամսագրի խմբագրութեան եւ 1990-ին ընտրուած «Գարուն»-ի գլխավոր խմբագիր: 1992-ին հիմնած է «Ապոլոն» հրատարակչութիւնը, որ առաջին անգամ իրենց բնագրէն թարգմանելով հայ ընթերցողներուն ներկայացուցած է համաշխարհային գրականութեան ստեղծագործութիւններ: 2001-ին ընտրուած է Հայաստանի գրողներու միութեան նախագահ եւ մինչեւ մահը վարած է այդ պաշտօնը: Դասախօսած է Երեւանի պետական լրագրական համալսարանին մէջ: Գրած, կազմած եւ խմբագրած է բազմաթիւ գիրքեր: Ունի հարիւրաւոր հրապարակախօսական յօդուածներ, գրած է բազմաթիւ յառաջաբաններ: Լեւոն Անանեանի ստեղծագործութիւնները թարգմանուած են ռուսերէնի, անգլերէնի, վրացերէնի եւ այլ լեզուներու: Ան անդամ էր միջազգային երեք ակադեմիաներու: 2008-ին իրեն շնորհուած է Հայաստանի Հանրապետութեան մշակոյթի վաստակաւոր գործիչի կոչում:

Գիրքեր.

«Յուշանուէր» (տարբեր բանաստեղծութիւններ), Երեւան, «Չանգակ» հրատարակչութիւն, 2006: Գիրքին մէջ գետեղուած են նաեւ անգլերէն եւ ռուսերէն թարգմանութիւնները:

«Դիմակայութիւն» (հրապարակային ելոյթներ), Երեւան, «Ամարաս», 2006:

* * *

Գրողներու Միութեան վաստակաշատ նախագահ ԼԵՒՈՆ ԱՆԱՆԵԱՆԻ նամակը ուղղուած իր թուրք բարեկամին, կը հրատարակենք իր մահուան առիթով՝ որպէս պատգամ ժամանակակից եւ գալիք սրտի եւ մտքի բոլոր մարդոց:

«ՆԱՄԱԿ ԹՈՒՐՔ ԲԱՐԵԿԱՄԻՍ»

2015 թուականին կը լրանայ մարդկութեան պատմութեան ամենամօթալի էջերից մէկի՝ XX դարի առաջին ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցը: 1915 թ. Օսմանեան Թուրքիան իր պատմական հայրենիքից տեղահանեց, ապա եւ գաղթի ճանապարհներին բնաջնջեց շուրջ 1,5 միլիոն հայ: Հայոց ցեղասպանութեան փաստն արդէն ճանաչել ու դատապարտել է երկու տասնեակից աւելի պետութիւն, այդ թում՝ Ռուսաստանի Դաշնութիւնը, Ֆրանսիան, Յունաստանը, Արգենտինան եւ այլն: Եւրոպական մի քանի երկրում քրէօրէն պատժում են ցեղասպանութիւնը մերժելու փորձերը: Դատապարտման գործընթացը շարունակում է, սակայն Թուրքիայի Հանրապետութիւնը յամառօրէն որդեգրել է Հայոց ցեղասպանութեան ժխտման քաղաքականութիւնը:

* * *

« Թէպէտ ես վկայում եմ իմ անձի մասին, իմ վկայութիւնը ճշմարիտ է, որովհետեւ գիտեմ, թէ որտեղից եկայ եւ ուր եմ գնում»:

Աւետարան ըստ Յովհաննէսի, գլուխ, 14

«Ո՛վ մարգարէ, սուրբ պատերազմ մղի՛ր... կեղծարարների դէմ եւ խիստ եղի՛ր նրանց նկատմամբ, նրանց տեղը դժոխքն է...»

Դուրան

Մենք ծանօթացանք պատահաբար, միջազգային մի գրական փառատօնի օրերին: Զրոյցի ընթացքում պարզուեց՝ դու թուրք գրող ես, ես՝ հայ: Այն ժամանակ (եւ հետագայ մեր հանդիպումներին) շատ բան չհասցրի ասել, բայց չասուած խօսքերը գուղձի պէս խցանում են կոկորդս, ուստի եւ գրում եմ այս նամակը որպէս խոստովանանք ու երկխօսութեան հրաւեր: Գրում եմ, որպէսզի թօթափեմ յիշողութեամբ պարտադրուած ատելութիւնը, սրբեն-աղբանոց նետեմ իւրաքանչիւր թուրքի մէջ իմ ժողովրդի թշնամուն տեսնելու կանխադրոյթը, որը չի լքում մեզ շուրջ 100 տարի... Դիշտ այդքան ժամանակ է, ինչ մենք ներկան ապրում ենք անցեալի մէջ, բայց պիտի լայնախոհութիւն դրսեւորենք գոնէ ապագան ազատագրելու այդ նոյն անցեալի մղձաւանջից:

Արդէն գիտես՝ ազգանունս Անանեան է, որ ստուգաբանում է ան-անի-եան, այսինքն՝ Անին կորցրած, անանի հայ: Իմ նախնիները 1319 թ. Հայաստանի 11-րդ մայրաքաղաք Անիի մեծ երկրաշարժի արհաւիրքի պատճառով գաղթել են իրենց տոհմիկ բնօրրանից, լքել հազարումի եկեղեցիների շքեղ ոստանը եւ եկեղծուարել են Հիւսիս-արեւելեան Հայաստանի Կողբ գիւղում: Իմ տոհմաձառը սերում է Հայոց Բագրատունեաց իշխանական զարմից՝ մինչեւ մէկամեայ իմ Անի թոռնուհին, եւ ամէն պատեհ առիթով հայթորքական փակ սահմանի փշալարերի միջով փնտռում եմ պապենական տանս աւերակները... հեռադիտակով: Եւ ամէն անգամ նախանձով եմ նայում քուդ անհոգ հովուին ու քաղաքի կիսաքանդ պարսպի ստուերում անհոգօրէն մական-

դած ոչխարի հօտին...

Չէ՛, ինձ ճիշտ չհասկացար, սա ընդամենը ազգային գենի (ծին, gene, «Բ.») մեջ անթելուած կարօտախտի մուխն է՝ ֆրանսերէն «Force majeure» ձեւակերպումով, բայց ո՛չ այն պահանջատիրութիւնը, որ արդէն ինը տասնամեակ, քուն թէ արթմնի խռովում է Հայոց ցեղասպանութեան 1,5 միլիոն զոհերի (որ հիմա բնական վերարտադրութեամբ կը հատէր 5 միլիոնի սահմանագիծը) եւ նոյնքան էլ տարագիրների աշխարհապիտ շառաւիղների հոգիները՝ սպասելով իր արդար լուծմանը:

Աստծոյ սիրոյն, միայն թէ դու էլ չկրկնես Թուրքիոյ պաշտօնական յանկերգը, իբր, 1893-1923 թթ. հայերի ցեղասպանութիւն չի եղել, այլ սոսկ ցաւալի ջարդեր... եւ որ (բացայայտ ցինիզմ) Առաջին համաշխարհային պատերազմի խառնաշփոթից օգտուելով՝ հայերն իրենք են կոտորել «անպաշտպան» թուրքերին... Եւ մանաւանդ որ պէտք է ճշմարտութեան բացայայտումը յանձնել պատմաբանների յանձնախմբի դատին:

Պատմութիւնն իր դատավճիռը վաղուց է կայացրել. տոննաներով փաստաթղթեր, հայ եւ օտար ականատեսների սահմոկեցնող վկայութիւններ, կինովաւերագրեր, բռնագաթուած ու աւերուած շէներ, ամայացած հողեր, կրօնափոխ եկեղեցիներ...

Սիրիայի Տէր-գօր անապատում այսօր էլ այցելուների աչքը կուրացնում է հայ անթաղ տարագիրների կմախքների ֆոսֆորը...

Աշխարհը վաղուց գիտի անհերքելի ճշմարտութիւնը, Էրդողանն էլ գիտի, Օբաման էլ, վստահ եմ՝ նաեւ դու: ԱՄՆ պետքարտուղար տիկին Բլինքոնն էլ գիտի, թէպէտ «ժողովրդավարութեան միջնաբերդ» Մալիտակ տնից երկակի ստանդարտներ է ձեւում՝ անկեղծութեան պա-

հին խոստովանելով. «ցաւօք, դիւանագիտութեան մէջ յաճախ պետական շահերն աւելի կարեւոր են, քան ճշմարտութիւնը»:

Ամերիկեան Կոնգրէսն ու Սենատն էլ գիտեն, թէեւ ամէն անգամ գցել-բռնելով քարկտիկ են խաղում, տաքուիովի մէջ պահելով մի ողջ ժողովուրդ՝ Հայոց ցեղասպանութեան հարցը օրակարգ մտցնելու քաղաքական անբարոյ առեւտրով... Երկդիմի, եռադէմ, բազմադիմակ խաղ...

Գուցէ ընդհատե՞նք դիմակահանդէս՝ զաւեշտախաղի աւանդոյթը, երբ աշխարհի աչքին թոզ փչելու համար Վանում վերականգնում է Ախթամարի Սուրբ Խաչ եկեղեցին՝ առանց խաչի ու պատարագի եւ զուգընթաց՝ Անիի քրիստոնէական Մայր տաճարում նամագի ծէս է արում. իսկական ծաղր քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակած աշխարհի առաջին երկրին (301թ.): Այսօր իրերն ու երեւոյթներն իրենց անուններով կոչելու ժամանակն է, ժամանակն է ոչ թէ բարոյականութեան խրատներ կարդալ, այլ ապրել բարոյական սկզբունքներով: Հէնց այս հայեցակարգն էլ ընկած է ՄԱԿի Գլխաւոր ասամբլիայի «ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխելու եւ դրա համար պատժի մասին «կոմվենցիայ»ի (համաձայնագիր, «Բ.») (1948 թ.) հիմքում, որի տակ, ի դէպ, դրուած է նաեւ Թուրքիայի Հանրապետութեան ստորագրութիւնը, եւ որն ասես շարադրուած է Հայոց ցեղասպանութեան օրինակով:

Բայց բնաւ քեզ յայտնի հանրագիտաբանային ճշմարտութիւնները չեն պատճառ, որ գրում եմ այս նամակը: Երբ ամիսներ առաջ իմ հրաւերով Երեւան այցելեցիր, հարցրիր.

- Ի՞նչ խորն է նստած ատելութիւնը հայ մարդու մէջ, մի՞թէ 21րդ քաղաքակիրթ դարում հնարաւոր է սրբագործել

անցեալի ողբերգութիւնը, երբ արդէն նորանկախ երկիր ունէք եւ այսքան գեղեցիկ մայրաքաղաք:

Որքա՞ն համահունչ էր հարցոյ թուրքական «Հիւրիէթ» թերթի թղթակցի զարմանքին.

- Ինչպէ՞ս հասկանալ՝ Արարատ լեռը օտար երկրի տարածքում է, բայց գրեթէ բոլոր հայ պոետները գովերգում են իբրեւ հայոց Մայր լեռ...

Ես նրան պատասխանեցի.

- Արարատը մեր էութեան մէջ է, թերեւս հէնց մեր էութիւնն է, որ ոչ ոք չի կարող մեզնից օտարել: Արարատը մեր ինքնութեան յիշողութիւնն ու վերածնութեան խորհրդանիշն է: Իսկ եթէ անկեղծ լինենք, լուսինն էլ ձերը չէ, բայց կեռ եաթաղանի պէս թառել է թուրքական դրօշի վրայ...

Ես գիտեմ մի անհերքելի ճշմարտութիւն, որ փոխանցում է սերնդէ սերունդ: Բերանացի գիտեմ, ինչպէս մեսրոպեան հիմնաւորց այբուբենը (405 թ.): Դա գիտեն բոլոր հայերը՝ հասարակ հողագործից մինչեւ երկրի նախագահ. Յեղասպանութիւնը վաղեմութեան ժամկետ չունի, ինչպէս որ մեր ազգային ցաւի յիշողութիւնը՝ մթագնելու որեւէ հեռանկար: Հիմա դուք եկել, յորդորում էք մոռանալ անցեալը:

Ինչպէ՞ս մոռանալ 1,5 միլիոն անմեղ զոհերին եւ գաղթի կարաւանները, որոնց ժառանգները չեն կորցնում իրենց պատմական հայրենիքում վերահաստատուելու յոյսն ու հաւատը:

Մոռանալ 1915 թ. Ապրիլի 24-ի բարթոլիմէոսեան գիշերը, երբ այլատեսացութեան կացնի մի հարուածով գլխատուեց արեւմտահայ մտաւորականութեան սերունդը՝ Սիամանթօ, Դանիէլ Վարուժան, Ռուբէն Մեւակ, Ժամանակ անց՝ Գրիգոր Զօհրապ...

Մոռանալ հայ հոգեւորական, ջարդերի ականատես Գրիգորիս Պալաքեանի

«Հայերու Գողգոթան» եղերերգութիւնը (1924 թ.), որի խորագիրն իսկ կանխում է թեմայի մասին հարցումը:

Մոռանալ արաբ ժողովրդի սրտացաւ բարեացականութիւնը, որն ապաստան տուեց եղեռնապուրծ հայ խլեակներին՝ իր մի կտոր հացը կիսելով օտարազգի մերձաւորի հետ:

Մոռանալ նորվեգիացի մեծ մարդասէր Ֆրիտճոֆ Նանսէնին, որ Ազգերի լիկայի որոշմամբ (1924 թ.) «նանսէնեան անձնագիր», այսինքն՝ աշխարհաքաղաքացու վկայական տուեց տարբեր երկրներում անհայրենիք դեգերող, Մեծ եղեռնից մազապուրծ 320 հազար հայի:

Մոռանալ աստրիացի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրերը» (1934 թ.) վէպը՝ թուրքական բանակի դէմ հայ բնակչութեան յուսահատ, բայց հերոսական ինքնապաշտպանութեան մասին...

Մոռանալ Ադուլֆ Հիտլերի լկտի ինքնարդարացում-հրահանգը հրեաների կոտորածի առիթով, գործի անցէ՛ք, հիմա ո՞վ է յիշում հայերի ցեղասպանութիւնը (1938 թ.):

Ո՞ր մէկը թուեմ...

Յիշում եմ, փոքր էի ու երբ հագում էի, Անուշ տատս, որ բարութեան եւ կարեկցանքի մարմնացում էր, անմիջապէս վրայ էր բերում.

– Առողջութիւն քեզ, թող թուրքի լամուկը հազայ:

Մի օր հարցրի. այ տատ, ի՞նչ է արել մեզ անձանօթ թուրքի տղան, որ պատեհանապատեհ անիծում ես:

Եղեռն չտեսած արեւելահայ տատս լռելեայն հայեացքը ցած խոնարհեց, բայց երբ հերթական անգամ տրապիզոն-ցի գաղթական Միհրանին հաց էր տալիս, պատմեց զագրելի եղելութիւնը: Միհրանն այնքան նիհար էր, որ անգամ անունն էին սղել եւ Մրան էին կոչում: Նա անցել էր ցեղասպանութեան դժոխքի բոլոր պա-

րունակներով. 1915 թուին նրա աչքի առաջ կացին-եղանով գազանաբար խոշտանգել էին վեց երեխաներին, սուինահարել կնոջը, կրակել նրա վրայ, տունը թալանել ու հրդեհել... Քուրդ հարեւանը ծանր վիրատուր Միհրանին թաքցրել էր մաքրագույն, խնամել եւ ապա ամրանը եայլաները հասցնելով՝ փրկել նրա կեանքը:

Հիմա էլ, տասնամեակներ անց, ոսկոր ու կաշի Մրանը երազներումս այցելում է ինձ, մուրացկանի ուսապարկում անբաժան ածինասափորը՝ մի բուռ մոխիր իր հրկիզուած օջախից, եւ շուրթերին իր որբացած բարբառը.

- Քիչիկ մը հաց կու տա՞ս...

Դէմքի խորշոմներից առուակներով հոսում էր արցունքը, եւ նրա հետ լալիս ու հեծեծում էր կորուսեալ Վանայ ծովը:

Եթէ հնար լինէր փոխել հարեւանին, իմ ժողովուրդը կը հաւաքէր ունեցուածքը, համաշխարհային քաղաքակրթութեանը տուած իր մշակութային արժէքները եւ կը գնար ուր աչքը կտրէր: Բայց երկիրը բնակարան չէ, որ ուզած պահին փոխես կամ փոխանակես:

Եթէ իմանայիք, թէ ինչ տառապանք է ամէն առաւօտ բաց վերքի նման տեսնել Արարատը, եւ յիշել, յիշել... Երեւի վաղուց էիք բուլդոզերներով քանդել ու պատգարակներով տեղափոխել բիրլիական լեռը հաւասարեցնելով հողին...

Եթէ...

Սակայն, պատմութիւնը պայմանական եղանակ չի հանդուրժում:

Օրերս թուրքական կայքերից մէկում իրաւապաշտպան Էրոզ Էոլքորայը ուշագրաւ դիտարկում էր արել, թէ ինչու՞ Հայոց ցեղասպանութիւնը տակաւին քաղաքական «թաբու» է, չէ՞ որ ժամանակակից Թուրքիան, ի դէմս Նոր հանրապետութեան հիմնադիր Քեմալ Աթաթուրքի, պատասխանատուութիւն չի կրում Օսմանեան

կայսրութեան գործած երիտթուրքական ոճրի համար: Իսկապէս, ինչո՞ւ...

Նա թուարկում է երեք պատճառ, որոնք անցեալ դարասկզբի Թուրքիան պորտալարով կապում են մեր օրերի հետ: Առաջինը «Թուրքիան՝ թուրքերին» ծրագիրն էր, որով Անատոլիան մաքրուեց հայ, յոյն, հրեայ, քրիստոնեայ եւ այլ տարրերից: Նրա կարծիքով, այդ հողերի վրայ վերջին 96 տարում իրագործուել է 10 ցեղասպանութիւն (չորսը բաժին է հասել քրդերին), որոնցից ամենագանգուածայինն ու կազմակերպուածը Հայոց ցեղասպանութիւնն էր:

Երկրորդն առնչում է Ազատագրութեան պատերազմի հետ, որի ֆինանսական աղբիւրը բոլշեւիկեան Ռուսաստանի տրամադրած զէնքի եւ դրամի օգնութիւնից գատ, հայերից բռնազաւթուած ինչքն ու հարստութիւնն էր:

Եւ վերջապէս երրորդ պատճառը՝ Հայոց ցեղասպանութեանը մասնակից ոճրագործները, ում ձեռքերը թաթախուած են անմեղ արեան մէջ, նորահիմն հանրապետութեան կառավարական եւ դիւանագիտական ընտրեալների ցանկում էին: Ահա ինչու է այսօր ձախողում Թուրքիայի ժառանգորդ պետութիւնը հարցի լուծման բոլոր ծրագրերը:

Սա ես չեմ ասում, սա ասում է թուրք անկողմնակալ մտաւորականը, յաւելելով, որ Թուրքիայի պետութիւնը միայն մի ելք ունի ուրացութեան խաւար փակուղուց՝ ապաւինել ապաշխարանքի լոյսին: Այլապէս ամէն անգամ Հայոց ցեղասպանութիւն եզրը լսելով, մշտապէս կորցնելու է ողջախոհութիւնը՝ յայտնուելով խելակորոյս վիճակում: Իսկ խելակորոյս պետութիւնը, իր կեղծ ժողովրդական կարգախօսներով որքան էլ երկու ձեռքով եւ երկու ոտքով թակի Եւրամիութեան դռները, այնտեղ մշտական գրանցում

չպետք է ստանայ:

Գերմանացիները խիզախեցին ճանաչել հրեական «հոլոքոստ»ը, ռուսներն էլ, 70 տարի անց, ընդունեցին լեհական Կատինը: Հերթը ձերն է: Ուրեմն, մի՛ յապաղեք վաերացնել հայ-թուրքական արձանագրությունները, որի նախաձեռնողը ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանն է:

Սակայն քաղաքականությունը թողնենք քաղաքագետներին ու պետական այրերին, մենք գրող ենք, եւ մեր պարտքն է միմեանց ճանաչեցնել երկու հասարակություններին գրի եւ խօսքի միջոցով, համոզել, որ Յեղասպանության ընդունումը ոչ թե կը նսեմացնի թուրք ազգին, այլ ընդհակառակը՝ կը վեհացնի: Քանի դեռ իրաքանչիւրիս մէջ չի կայացել Հայոց ցեղասպանության Նիւրնբերգը, աւելին՝ ոճիրը կեղծելով կամ լռութեան մատնելով, ակամայ դառնում ենք դրա մասնակիցը:

Գրքիդ շնորհանդէսին դու խօսեցիր շեմերը յաղթահարելու մասին: Շատ գեղեցիկ խօսեցիր: Ասացիր, որ շեմեր կան մաւ եւ ժողովուրդների եւ երկրների միջեւ, որոնք պետք է ոչ թե արգելք լինեն, այլ անցակէտ: Հայ-թուրքական սահմանը դեռեւս փակ է, եւ դու շատ ժամանակ կորցրիր Անկարայից մինչեւ Երեւան, մինչդեռ կ'ուզեմայիր ուղիղ թռիչքով հասնել՝ ձեր ազգային «թիրքի»ներում եւ հայ ժողովրդական տաղիկներում գովերգուող «սրտից սիրտը տանող» ճանապարհով: Երբեմն էլ շեմերի վրայ կրակ է լինում, ասացիր, եւ եթէ շեմն անցնելու վարանումը երկար տեւի, ապա օտարացման տառապանքը կարող է վերածուել հիւանդութեան, ախտի:

Աւա՛ղ, շեմն անցնելու համար բաց դուռ է հարկաւոր, իսկ դուք կրնկակոխ փակել էք բոլոր դռները՝ եւ՛ հոգու, եւ օջախի, եւ երկրի առջեւ...

Մի բան ճշմարիտ է, եթէ վաղը Յեղասպանության փաստը ԱՄՆ-ն էլ ընդունի,

խուլուհամր ձեւացող միւս երկրներն էլ, բանակցութիւնների սեղանի շուրջ հայերն ու թուրքերն են նստելու, - եւ հէնց թուրք հասարակութեանն է պատկանում վերջին խօսքի իրաւունքը:

Բարեբախտաբար, ժխտողականութեան անթափանց պատն արդէն ճաքեր է տալիս: Յեղասպանութիւնը հրապարակաւ ընդունել են Նոպէլեան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուկը, անուանի պատմաբան Թանէր Աքչամը, հրատարակիչ Ռազըպ Չարաքոլուն..., հարիւրաւոր այլ խիզախ անհատներ, ովքեր չեն ուզում հաշտ ապրել ստի ու կեղծիքի հետ:

Հրանտ Տինքի սպանութիւնը ցնցեց աշխարհը (շա՛տ բան է փոխուել գաղթական Սիւրանի ժամանակներից), եւ նրա թաղման օրը ծայր առաւ «Ես Տինքն եմ, ես հայ եմ» հանրային շարժումը: 2010 թ. Ստամբուլի կայարաններից մէկում (որտեղից 1915-ին սկսուեց հայ մտաւորականների բռնագաղթը), տեղի ունեցաւ բողոքի ցոյց եւ մոմավառութիւն: Վերջերս էլ թուրք մտաւորականութիւնը համացանցով ստորագրահաւաք կազմակերպեց Յեղասպանության ճանաչման օգտին:

Երկխօսութիւնն արդէն սկսուել է, եւ ոճրի դատապարտումը պահանջում է հասարակական բազմաձայնութիւն:

Էլի մէկ ձայն:

Քո՛ ձայնը:

Յանուն պատմական ճշմարտութեան:

Յանուն նրանց, ովքեր չեն պղծելու իրենց շուրթերն անէծքով:

Յանուն նրանց, ովքեր գալու են Պատմութեան բեռն ու Ապագայի մարտահրաւերները ժառանգելու մաքուր խղճով ու մաքուր ձեռքերով:

Յանուն մեր զաւակների, ում նոյն արեւն է ջերմացնում՝ անկախ ազգութիւնից, մաշկի գոյնից, խօսուածքից եւ բարոյական ընտրութիւնից:

ՅԱԻԱԿՅԱԳԻՐ

Հայաստանի Գրողներու Միութեան անդամ, Հայաստանի Հանրապետութեան մշակոյթի վաստակաւոր գործիչ, հրապարակախօս, թարգմանիչ եւ բանաստեղծ Լեւոն Անանեանի վաղաժամ մահուան առիթով, Լիբանանահայ Գրողներու Համախմբումի քարտուղարութիւնը Հ.Գ.Մ.-ի նախագահութեան եւ վարչութեան յղեց հետեւեալ ցաւակցագիրը:

Պէյրութ, 3 Սեպտեմբեր 2013

Հ.Գ.Մ.-ի նախագահութեան ու վարչութեան յարգարժան անդամներուն,
եւ բոլոր հայ գրողներուն,

Գրչի վշտահար եղբայրներ եւ քոյրեր,

Սրտի խոր յուզումով իմացանք Հայաստանի Գրողներու Միութեան աւելի քան տասնամեայ ժրաշան նախագահին, հայ գիր ու մշակոյթի անխոնջ գործիչին, խիզախ հրապարակախօսին, հրաշալի արձակագիրին, բարեշնորհ թարգմանիչին, մեծ հայուն եւ նոյնքան մեծավաստակ իրաւ մարդուն՝ ԼԵՒՈՆ ԱՆԱՆԵԱՆ անուն բացառիկ երեւոյթին վաղաժամ մահուան գոյժը:

Պարզապէս շանթահարուած ենք: Անդարմանելի է կորուստը: Մահուան մռայլ ու նենգ ամպերը պատած են ո՛չ միայն մեր սրտերը, այլեւ՝ իւրաքանչիւր լիբանանահայ գրողի ողջ էութիւնը: Հայ գիր ու մշակոյթի անձնուրաց ծառայ ու պատարագիչ, ճշմարտութեան, արդարութեան, գեղեցիկին ու բարիին յաղթածայն շեփորահար, վերանկախացեալ Հայաստանի Հանրապետութեան ու հայ ժողովուրդի տազնապնդով, հարցերով, բայց մանաւանդ երազներով օրն ի բուն փոթորկող, ծրագրող ու պայքարող ամբողջական հայուն եւ եզակի մարդուն վաղաժամ մահով հայ ժողովուրդը կորսնցուց մեր ժամանակներու իր արժանաւորագոյն զաւակներէն մին: Բազմաշնորհ ու բազմավաստակ աւանդապահ մը՝ որ դարերէ ժառանգուած հայկեան անպարտելի ոգին, մեր ազգային դարաւոր աւանդներն ու սրբութիւնները, հայ հողապաշտ մշակին մշտաբոլորք աշխատասիրութիւնն ու հաւատարմութիւնը, գրչի եւ գէնքի մեր հին ու նոր նահատակներուն ուխտն ու կտակը եւ նորածին մանուկներուն պայծառ հրճուանքն ու երազները իր անցաւոր մարմնին մէջ ծիածանելով՝ եղաւ արդարատենչ հայ ժողովուրդի արժանաւոր դեսպան, անկեղծ զինուոր ու զօրավար եւ հայ ոգիի մարմնացեալ ներշնչարան:

«Ես ուխտաւորն եմ
մեր սուրբ հաւատի,
Տիրոջ տաճարն եմ
պահում անառիկ,
Մեսրոպի զօրքն եմ
ես տանում մարտի,
Որ մեր մայրենին
յաւե՛րժ բարբառի»

Երգած մեր տարաբախտ գրչեղբոր գործն ու ուխտը, անկասկած, իր գործակից գրչեղբայրները պիտի շարունակեն վերանորոգ նոյն հաւատքով, միեւնոյն ու յաւելեալ նուիրումով եւ ա՛լ աւելի նպատակաւալաց վճռականութեամբ: Եւ ասիկա պիտի ըլլայ Լեւոն Անանեանի յետ մահու յաղթանակը:

Բիր յարգանք իր յաւերժածայն վաստակին եւ անմեռ յիշատակին:

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ
ՀԱՄԱՆՄԵՐՈՒՄԻ ՔԱՐՏՈՒԴԱՐՈՒԹԻՒՆ

Յ. Պ.

ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ԿՏԱԿԸ

Յիճելով

ԱՐԲԱՆԱՄ ԱԼԻՔԵԱՆԸ

**Ծն. 21 Մայիս 1928,
Ալեքսանսրեւ (Այծա՝ Թուրքիա)
Մահ՝ 15 Յուլիս 2013,
Պէրոլի, Լիբանան**



Իրաւ բանաստեղծները անգուգական գրուցակիցներ են, եթէ ցուցադրական եւ աղմուկի մակերեսային քաղաքակրթութիւնը մեզ չէ բանտարկած մեզմէ դուրս:

Բան-ա-սրեղծութեան խաղին մասնակցիլ առաջին քայլն է ազատագրութեան: Այդ մասնակցութիւնը մտածում եւ զգացում հաղորդութեան վերածող տեսարար ինքզինք նորոգող *ալշինին* է, որ կը ձգտի աննիւթական հարստութիւնները մաքրել եւ գտել իրենց հանքային աղտէն, վասն բիրեղացման:

Նիւթապաշտ եւ գործնապաշտ մեր ժամանակը ամէն օր քիչ մը աւելի կը կռանէ մեր մեզմէ դուրս բանտարկող շղթաները եւ կը կորսնցնենք մեր իսկական հարստութիւնները, մարդեղութեան առաջին ակնթարթէն մինչեւ այսօր մեր ժառանգութիւնը:

Տխուր պայմաններու մէջ հողին անգամ չյանձնեցինք բանաստեղծ Արբահամ Ալիքեանը, եւ իր դագաղը դրինք միջանցքի մը երկու կողմերը գտնուող գորոցանման դարակի մէջ: Թէեւ, Շաւարշ Նարդունի, խօսելով իր թաղման մասին, ըսած էր, որ ինք «Ֆէթիշիստ» չէ: Գերեզմանը «Ֆէթիշ» է: Արբահամ Ալիքեանի յիշատակի կոթողը քաղքենիի մարմարը չէ, այլ իր բանաստեղծութեան մէջ փայլատակող մեր ժառանգութիւն բառագանձը:

Յիշեցի հին օրերու ընթերցումներ, յիշեցի բանաստեղծին «Բարեյուսոյ Հրուանդան»ը, զոր ամբողջութեամբ կարդացած էի Փարիզի հայկական ձայնասփիւռէն: Այդ ըրած էի այն միամիտ

հաւատք-յոյսով, որ հայերէնի տողանցող բառագանձի հրավառութիւնը պատճառ կ'ըլլար, որ արթննայինք լեզուի խեղճացման մէջ թաղուած մեր սովորութիւն դարձած թմբիւրէն:

Ինք ստացած էր կտակը, պեղած էր, գտած էր գանձը: Լեզուի խեղճացման դէմ պայքարող հայ բանաստեղծ Տոն Քիշոթը... «Պարզ եւ հասկնալի գրեցէ՛ք»-ի կոչը անասատող իրաւ հայ Աբրահամ Ալիքեանը: Անոր այդ տխուր գգրոցի մը մէջ դրուելու յաջորդ օրերուն, գտայ նաեւ հայ բանաստեղծին *կտակը*:

Կտակ մը՝ որ ոչ ոսկի էր, ոչ կալուած, այլ յաւերժութեան եւ հոգիի տիրութեան հրաւեր:

Ուր քառեակներ: Կտակ՝ որ կը տրուի բոլոր անոնց, որոնք գիտեն հոգեկան ժառանգութիւն ստանձնել, որոնց համար «Կեանքը յիմարի մը կողմէ պատմուած հեքիաթ»ը չէ, այնպէս ինչպէս Շէքսպիր կը նկարագրէ:

Ամէն օր կը կարդամ այդ կտակը, յուզումով, երբեմն բարկութեամբ, քէնով:

Երբ մենք անցաւորի եւ կրկներեւոյթներու կը յանձնուինք, վիճակահանութեան տոմս կը գնենք մեր անվաղորդայն յոյսերը իրականացած տեսնելու համար, բանաստեղծը ԿԸ ԹԱԽԱՆՉԷ... Իր թախանձանքը ուղղուած է «թղթին»: Կը կտակէ թախանձելով: Ազնուութիւն՝ զոր մենք ամէն օր քիչ աւելի կը կորսնցնենք:

Այդ թախանձելու ունակութիւնը կորսնցնելով, ժամանակակիցներս կը կորսնցընենք յաւերժութեան պատգամը, լեզու եւ ինքնութիւն, կուլ կ'երթանք մակերեսայնութեան եւ մեզի հետ անյայտին կը տանինք ինչ որ մեր նախորդները ստացած էին որպէս մտքի լոյս եւ հոգեկան ժառանգութիւն եւ փոխանցած մեզի:

Բարձրաձայն կարդալ «Թախանձանք Թղթին»ը, վերստին կարդալ, տանիլ դպրոցները: Թուղթը կրողն է իմացական եւ հոգեկան ժառանգութեան, մոգական հայելի՝ որուն մէջ անցեալ եւ ներկայ կը վէտվէտան՝ իմաստ տալով մեզմէ իւրաքանչիւրի բացառիկ եւ անկրկնելի գոյութեան:

Բանաստեղծը մեռաւ: Իր «թախանձանք»ը կրնա՞նք վերածել մեր բոլորի կեանքի ոճին, որպէսզի աճին ինքնութիւնները: Առանց այդ թախանձանքին, կը շարունակենք բանտարկուիլ մենք մեզմէ դուրս:

Նոյնիսկ եթէ բացակայ էիք բաժանման տխուր եւ տխրեցնող պահուն, «Թախանձանք Թղթին»-ի ընթերցումը ոսկի առիթ է Աբրահամ Ալիքեանի հետ գրոյցը շարունակելու:

Տուէ՛ք նաեւ ուրիշներու: Իւրաքանչիւր ընթերցող եւ իւրաքանչիւր ընթերցում բանաստեղծին հետ կը շնչեն: Այդպէս է, որ բանաստեղծները կը դառնան «Պառնաս»-ի անմահներ:

«Չէ՞ որ առանց քեզ ես՝ անշահ, անճառ

Կեանքս՝ անհեթեթ ու գինս՝ գրոշ»:

Եթէ հասկնանք տարողութիւնը այս կտակին... ազգային-մշակութային վերականգնումի ճանապարհը կ'ընդգրկենք: Դիմագիծ կ'ունենանք:

ԹԱԽԱՆՉԱՆՔ ԹՂԹԻՆ

Քսան հի՛նգ տարի քո հայելու դէմ,
Օ՛, համբերութի՛ն, քսան հի՛նգ տարի:
Հերիք չէ՞ քո մէջ իմ դէմքը դատեմ՝
Մէկ հմայքի դէմ գտնեմ բի՛ւր թերի:

Գեղեցի՛կ ես դու եւ շուշանափայլ.
Մեղք է քեզ եղծել քո գովքով անգամ:
Բայց տուր ջրերիդ գուլալուել, ծփալ
Մի քիչ էլ գոնէ, ձերմա՛կ բարեկամ:

Ես գիտե՛մ, շունչս, քեզ աղօտելով,
Քեզ չի դարձնում նախկինից անբիծ,
Սակայն ի՞նչ անել, ինչպէ՞ս, եթէ լոկ
Ձեռքերս քեզնով ուռչում են ծափից:

Ի՞նչ անել, եթէ այն օրից, երբ իմ
Աշակերտական տետրից սահելով,
Վիճակեցիր ինձ քո փայլով նրբին
Տեսնել իմ հեռուն, ինչպէս ձնհալով...

Դու գիտես, թէ ես ուզեցի միայն,
Որ շարունակի խարշափել վրադ
Ծառն այն, որի դու գոյութեան վկան,
Ծնունդն ես, յուշը եւ խոստումն առատ:

Ուզեցի, որ դու չլինես յօժար
Իմ սարքած ամէն տօն ու հանդէսի,
Որ գէթ մէկ անգամ ժպտալու համար
Եօթանասուն եօթն անգամ ատես ինձ:

Ուզեցի մերթ էլ, որ գթասս մի պահ,
Անես գիշերս ցերեկիս դրօշ,
Չէ՞ որ առանց քեզ ես՝ անշահ, անձառ
Կեանքս՝ անհեթեթ ու գինս՝ գրոշ:

Ուզեցի՜... Սակայն ի՞նչ չքնաղ ես դու՝
Մեղք է քեզ եղծել քո գովքով անգամ.
Բայց տո՛ւր ջրերիդ գուլալուել, ա՛յս, տո՛ւր,
Մի քիչ էլ գոնե՛, ձերմա՛կ բարեկամ:

ՀԵՉ ԻՐԻԿՈՒՆ

Մեղմութիւնն այս, հեշտանքի պէս համակող,
Քաղցրութիւնն, ուր ձաթըռտում են ձութ ու ձիռ,
Դո՛ւ քաղեցիր բիւր այգերից հողմակոծ,
Բիւր օրերի օշինդրից դո՛ւ քամեցիր:

Հանապազորդ հացիս վրայ լոյսն այս քո
Հացս երկնած հողիս հոգին չէ՞ միայն,
Որ երջանիկ էր, երբ նոյնիսկ մէ՛կ հասկով
Իր խաչքումն էր հիւսում տօնին աւետման:

Իսկ քո կապոյտն այս պաստառոտ որմն ի վեր,
Ուր դալկաթերթ ծաղկանց հետ լուռ դէմքերի
Յառումներն են արդէն համա՛կ հրաւէր,
Ժպիտը չէ՞ այն գոհութեան գերագոյն,
Թէ՛ արտօրէն ծովածփիկ ու բարի
Իրիկնացար արդարեւ, հե՛զ իրիկուն:

1978-ին, Նոյեմբերի 11-րդ թիվով, «Բագին» հրատարակած է Էտկար Ալեն Փօի «Ագռար» բանաստեղծությունը: Այս թիվով զայն կրկին կը յանձնենք ընթերցողի ուշադրության, ի յիշատակ Աբրահամ Ալիքեանի:

ԱԳՌԱԻԸ

Էտկար Ալեն Փո*
Թարգմ. Աբրահամ Ալիքեան

Մի անգամ մութ կէս գիշերին խոկում էի խոնջ ու լռին,
Խորհախորհուրդ հատորների վրայ մեռած մի գիտութեան,
Երբ մրափում էի յոգնած մի թոյլ հարուած լսուեց յանկարծ,
Կարծես մէկն էր զգոյշ բախում, բախում դուռըս անժաման,
«Մի այցելու է, - հծծեցի - բախում դուռըս անժաման,
Լոկ այս, ուրիշ ոչ մի բան...»:

Ա՛հ, յիշում եմ յատակօրէն. Դեկտեմբերին էր սառնեղէն,
Մեռնող ամէն կոճղ յատակին գծագրում էր մի ուրուական,
Կաթոգին այգն էի տենչում, ի զուր էի իմ գրքերում
Լէնորի մահն անվերջ լացող վշտիս փնտռել մի դարման,
Հրեշտակներից Լէնոր կոչուող այն սուրբ կոյսի, որ սակայն
Անանուն է յախտեան:

Ու ծիրանի վիժակների դողն անորոշ ու տխրալի
Սարսում էր ինձ, լցնում հոգիս արհաւիրքով ցնորական.
Խիզախուելու համար սրտով, ոտքի ելայ ես կրկնելով՝
«Մի այցելու է սենեակիս դուռը թակում անայայման,
Ուշ մնացած մի այցելու թակում դուռըս անայայման,
Այս է, ուրիշ ոչ մի բան»:

Գօտեպնդուեց սիրտս տկար, չերկբայելով արդէն երկար՝
«Պարոն,- ասի,- կամ էլ տիկին, խնդրեմ, ներող եղէք միայն,
Բայց ես նիւրհում էի յուշիկ, եւ դուք այնքան մեղմ բախեցիք,
Եւ դուք այնքան մեղմ բախեցիք, բախեցիք մեղմ դուք այնքան,
Որ լոկ թուաց, թէ լսեցի»։ Իսկոյն դուռն իմ բացի լայն
Խաւար՝ ուրիշ ոչ մի բան:

Ու խաւարին աչքերս յառած՝ մնացի լուռ ու շուարած,
Անրջելով երազներ, որ չէր երազել ոչ ոք մինչ այն.
Լռութիւնն էր սակայն խորունկ, չկար շուրջս ձեւ ու շշուկ,
Արտաբերուող միակ բառը «Լէնոր» բառն էր, որ անձայն
Ես հծծեցի,- «Լէնո՛ր» կրկնեց արձագանգը անխափան ...
Լոկ այս, ուրիշ ոչ մի բան:

Ետ դառնալով դեպի սենեակ, բոցերի մէջ հոգիս համակ՝
Մի նախկինից ուժգին հարուած լսեցի ես կրկին անգամ,
- Վստահօրէ՛ն, վստահօրէ՛ն, ինչ որ բան է ձաղերիս դէմ,
Տեսնենք ի՞նչ է, ասի ես ինձ, - պարզենք խորհուրդն այս դաժան,
Թող լռելով սիրտըս մի պահ պարզի խորհուրդն այս դաժան:
Հովն է, ուրիշ ոչ մի բան:

Ու հրեցի փեղկերն ուժով, եւ աղմկոտ մի թռիչքով
Մի փառայեղ Ագռաւ մտաւ սուրբ օրերից վաղնջական,
Խոնարհութիւն չարեց բնաւ, չվարանեց ու կանգ չառաւ,
Բայց սենեակիս դրան վրայ թառեց տեսքով տիրական,
Ճիշդ Պալլասի կիսարձանի վրայ թառեց տիրական,
Թառեց, ուրիշ ոչ մի բան:

Իմ խոհանքը ցրեց յայնժամ այս թռչունը Եբենոսեան:
Իր կեցուածքը վայելչատես, կերպարանքը խիստ ու խոժոռ –
«Թէեւ կատարդ է անփետուր, սակայն գիտեմ, ստոր չես դու,
Գիշերային ափունքներից հեռու յաճող ուղետուր.
Դժոխային այս ափերին ի՞նչ է անունդ ազնաւոր»:
Ագռաւն ասաց՝ «Ներըմոր»:

Ես զարմացայ, որ մի թռչուն ինձ հասկացաւ այսպէս՝ իսկոյն,
Պատասխանն իր թէեւ մի քիչ անիմաստ էր ու անսովոր,
Քանզի պէտք է դուք իմանաք, թէ մարդկային ոչ մի էակ,
Իր սենեակի դրան վրայ դեռ չի տեսել թեւաւոր,
Անասուն կամ թռչուն թառած կիսարձանի վրայ, որ
Կոչուի այսպէս՝ «Ներըմոր»:

Բայց Ագռաւը, հանգիստ նստած՝ այս մէկ բառը միայն ասաց,
Կարծես թէ նա այդ բառի մէջ ձուլած լինէր հոգին իր ողջ:
Զարտասանեց էլ ոչ մի բան ու չչարժեց փետուր անգամ
Մինչեւ ասի՝ «Արդէն թռան ընկերներն իմ բիւրաւոր,
Վաղը նա էլ յոյսերիս պէս ինձ կը թողնի մենաւոր»:
Թռչունն ասաց՝ «Ներըմոր»:

Ես՝ սարսափած իմաստալից բառով խզուած լռութիւնից՝
«Անշուշտ,- ասի,- այս բառն է սոսկ իր ողջ լեզուն, ձիրքն ու շնորհ,
Ժառանգուած մի ուսուցչից, որի բախտը անկարեկից
Հետապնդեց նրան, մինչեւ որ երգերն իր սգաւոր,
Մինչեւ յոյսի երգերն իր մուօ ունեցան լոկ տրտմաթոր
Այս յանկերգը՝ «Ներըմոր»:

Բայց Ագռաւը կրկին անգամ ցրեց թախիժն իմ հոգեկան.
Դրան առջեւ ու Պալլասի ես հրեցի մի թիկնաթոռ
Ու թաղուելով թաւշում նրա՝ սկսեցի հիւսել իրար
Երազներս՝ միշտ խորհելով, թէ ուրուային ու խոշոր
Այս թռչունը ի՞նչ է ուզում ասել այսպէս ահաւոր
Կռնչելով՝ «Ներըմոր»:

Այս բառն էի մեկնել փորձում սեւ թռչունին լուռ, սեւեռուն,
Որի աչքերը հրեղէն մրկում էին հոգիս մոլոր,
Փորձում էի դեռ ասելին, խոնջ գլուխս լքած նրբին
Բարձերի մէջ, ուր կաթում էր լամպարի լոյսը բոսոր,
Նուրբ բարձերի, որոնց վրայ չի սահելու էլ աղուոր
Գլուխն իր, ա՛հ, ներքմոր:

Ու խտացաւ օդը՝ անտես մի բուրվառի բոյրից կարծես,
Որ միջոցում սերովքէներ ձօժում էին կշռութաւոր:
«Հրձուիր, դժբախտ,- ասի ես ինձ,- քո Աստուածն է ուղարկում քեզ
Այս դադարը, զերթ մոռացոնք, սրտիդ համար վիրաւոր:
Խմիր, խմիր ու հասկացիր, թէ չկայ ոչ մի Լէնոր»:
Ագռաւն ասաց՝ «Ներքմոր»:

«Դու, մարգարէ, դեւ կամ թռչուն, մարգարէ կամ ոգի տժգոյն,
Թէ փորձիչն է ուղարկում քեզ կամ մրրիկն է փսխել մի օր,
Այս ասերեալ, բայց աննուաճ հողի վրայ կախարդուած,-
Տունն այս վախով միշտ յաճախուած՝ ասա խնդրում եմ անգօր՝
Կա՛յ արդեօք, կա՛յ մի բալասան: Ասա, խնդրում եմ անգօր»:
Ագռաւն ասաց՝ «Ներքմոր»:

«Դու, մարգարէ, դեւ կամ թռչուն, մարգարէ կամ ոգի տժգոյն,
Մեզ կամարող այս երկնքով, պաշտած Հօրմով մեր երկնաւոր,
Ասա սրտին այս վշտագին, թէ նա պիտի գրկի՞ կրկին
Եդեմի մէջ այն աղջկան, որի անունն է Լէնոր,
Այն պայծառ ու սուրբ աղջկան, որի անունն է Լէնոր,
Ագռաւն ասաց՝ «Ներքմոր»:

«Թող հրաժեշտ տանք այդ բառով,- գոռացի ես վեր ցատկելով,-
Վերադարձիր մրրիկի մէջ ու Գեհէնի ափերը չոր.
Ոչ մի փետուր ինձ չթողնես քո կեղծիքի վկայ որպէս,
Թո՛ղ կիսանդրին դրանս վրայ, առանձնութիւնն իմ՝ անդորր,
Հանի՛ր կտուցդ իմ սրտից, տա՛ր տեսիլքդ ահաւոր»:
Ագռաւն ասաց՝ «Ներքմոր»:

Ու Ագռաւը միշտ աներեր նստած է դեռ, նստած է դեռ
Ճիշդ իմ դրան վրայ դրուած կիսարձանին՝ գիշեր ու զօր,
Եւ աչքերն իր՝ երազամոյն դեւի աչքեր են սեւեռուն,
Եւ յատակին լամպի լոյսը նետում է շուքն իր խոժոռ,
Եւ իմ հոգին այդ սեւ շուքի շրջանակից մեղմօրօր
Ձի՛ ելնելու ներքմո՛ր...

* Ամերիկացի գրող, բանաստեղծ, քննադատ (1809-1849)

Բազմաթիւ ուրիշ բանաստեղծներ ալ թարգմանած են «Ագռաւը», օրինակ Շարլ Գոտլէր եւ Մալարմէ:

ԵՐԲ ԱՐԵՒՆԵՐ ԿԸ ԼԵՐԴԱՆԱՆ... ԿԸ ՏԻՐԷ ԿԱՄՔԸ ՄԱՀՈՒԱՆ

Ա

Ամէն անգամ երբ կը փորձեմ
դուրս գալ վայրէն այս մահաստուեր
անաչք դէմքեր կ'երկարին տեսադաշտիս դէմ կրկին
եւ ոսկորներն ալ երկինքի կմախքներուն
աչքերուս մէջ փուլ կու գան

Մահուան ընծայ ուղիներն ու սեւ աստղը օրերուդ
– հաղորդակցութեան օ՞գիծեր տարտամ –
սուր ձիչի մը պէս կ'ընդհատուին յանկարծ
եւ ես կը դառնամ մեռած օրերու
եւ տառապանքի շիրիմ չարական
քու չգոյութեան վախէս զգուելի

Բ

Ինչո՞ւ բոցը կը լափէ պայծառ դէմքըդ ամէն օր
երբոր հեռու եմ քեզմէ ու քու կանչէդ ալ բոսոր
երբոր հեռու եմ նոյնիսկ անօթեւան իմ սրտէս
եւ մանկութեան տաղերուն քաղցր արեւէն սիրակէզ

Ո՞ր պիտի տանի ձանապարհն այս զիս
խաւարներ սուրող բորենիներուն ու գալլերուն հետ
խօսքն ընդհատող բրտութեան կրկնէն գատ
ո՞ր պիտի տանի նենգ բաւիղն այս զիս
ուր վարագոյրը մեծ ողբերգութեան
արդ կ'իջնէ հանդարտ
լոյծ ու անտարբեր

Գ

Մէն մի տառի եւ բառի միջեւ
մէն մի խօսքի եւ արձագանգի միջեւ
մեղանը որ արիւնն է գիրին եւ հոգին լոյսին
մեղանը որ եղբայրն է հողին եւ տենդը տեսիլին
գիշեր-գիշեր օ՞ կ'երկարէ անադարտ խօսքը մութին
որ յուշերու ջուրերուն մէջ կեանք լողացող շողերով
վեր կարկառեմ ժամանակը շարժումին

Բայց արեւները տակաւին կը լերդանան քարերուն
մոդէզները կը դառնան դեսպանները շիրիմներուն
պահը կը կքի լռութեան ծաղկեպսակներուն

ձայները քար՝ քար կը կտրին օդին մէջ
նոճին կը յայտարարէ ժամը հանդիպման
եւ կը տիրէ կամքը մահուան

Դ

Ինչպէս շրջանները կը հեռանան իրարմէ
այնպէս ալ կը տարանջատուին մարմինները մեր
կը տարակուսին ցերեկ ու գիշեր
կը տարագրուին արեւ ու քեւեռ
կը դառնան անյայտը խուզարկող աստղանաւեր
եւ իբր թէ կեանք կ'ապրին մահիճներուն խաւարի

Ինչպէս սիրածառը կ'արտասուէ
կարօտի կանչեր ու հրաժեշտի ողբեր՝
իր ծաղիկներուն ու աշնանային միրգերուն համար
այնպէս ալ կորուստները կը խտանան մանուկին դէմքին
որ գարունէն իսկ առաջ փնտռեց միայն տաք ափեր
սայթաքեցաւ օրերու ծործորներուն մէջ մթաստուեր
եւ մնաց թափուր
եւ մնաց անտէր

Տէր իմ բարեգութ եւ ամենագօր
խօսքն իմ մեղաւոր դուն անշարժ պահեա՛
որովհետեւ ոչ գօրութիւնը կամաւոր աստղերուն
եւ ոչ ալ միգանոյշներն ու սատանաները վերին
կրնան մանուկին սուգը վերածել երկնային ովասիսի
իսկ հօր հոգիին հրդեհը՝ ազգային քայլերգի

Ե

Ըսի եւ քեզի
– դեռ կանուխ է հայր
ըսի եւ քեզի
– դեռ շատ կանուխ է այս կատակին ծանր
ըսի տակաւին
– ինչո՞ւ շտապել ու մեկնիլ անդարձ
երբ դեռ նոյնիսկ չես քաղած պտուղները ծառերուդ՝
աւելի հասուն սիրոյ արեգակէն
աւելի շքեղ անմահական խնձորէն
եւ աշխարհներու ուժը ամբարող մրջիւնին սրտէն

Ինչե՛ր չըսի եւ քեզի
բայց դուն արիւն իմ չարքաշ
քեզի վայել հպարտութեամբ մեկնեցար այս աշխարհէն
դառնալու սպարապետը քեզմէ գերիվեր ուժերու
կտակելով մեզի բոցը պայքարին
եւ յայսմաւորքը մերժումին

Հիմա կ'անցնիմ փողոցներէն ամայի
 եւ քայլերուս յանդիման հպարտ երթող կը փնտռեմ
 ապշանքիդ հետ կը մեծնամ հանելուկներն որդիիս
 կը բարբառիմ քու հունչով եւ ծիծաղով անսահման
 եւ կը փորձեմ աւարտել անհոգ պատկերդ անթերի
 բայց դուն հայր իմ միշտ բարի՝ արեւէն իսկ աւելի
 ըսէ ինչո՛ւ խոյս կու տաս օրերէն ու լոյսէն
 եւ կը դառնաս մթին փոս
 եւ լռութեան սեւ ակօս
 զարմանքին մէջ թռնիկիդ
 եւ ապշահար իմ սրտիս

Զ

Վերադարձար դուն հայր իմ
 երբ վերադարձն ալ միայն տառապանքի սեւ վարդ էր
 որ գիծերու մէջ մթին հազար յուշեր կը բարդէր
 հազար վիշտեր կը թարթէր
 եւ այլ երբեք չէր լռեր

Վերադարձար պատկեր իմ
 թախիծներու թափանցիկ շողերուն հետ ու սուգին
 երբ ափերուս տակաւին բիւր ուղիներ կ'երկարին
 եւ կ'երկարեն անաւարտ ուղիները խաւարին
 մինչ ձամբուս վրայ՝ կարօտի կանչեր
 մինչ ձամբուս վրայ՝ կարօտի ձիւներ
 կը կողոպտեն արիւնն իմ եւ բառերը քու վերջին
 ինչպէս փոթորիկները՝ կալերը սրտին
 տաղերը յոյսին
 եւ խօսքը լոյսին

Է

Ո՛վ մտերմութիւնը վարդին
 եւ ձենձերումը թաց հողին
 բոլորը անմեղ են վարդին արիւնէն
 որ գարունը չբացուած խաղաղ-խաղաղ զենեցին
 Ծիծեռնակները նոյնիսկ հիմա այդպէս կը կարծեն
 բայց կը մոռնան որ արիւնը զենեցին
 մինչեւ անեզրը մահուան անջրպետին
 ուր ձակտի գիրը բաժանման կանգառ է պարզապէս
 կամ հանդիպման ստապատիր խոստում կարծես

Ո՛վ բարեկամութիւնը վարդին
 եւ խաչելութիւնը արեգակին
 դուն օդն եւ նամակներուն եւ դողը համբոյրներուն
 որոնք անդադար կը դառնան իրենց հարսանիքներուն
 եւ քար առ քար կը փշրուին վաղվադակի
 ողբերգութեանց սալին վրայ մեր կեանքի

Ը

Փռշին եմ նստած շիրիմիդ վրայ
 եւ լռութիւնն եմ քարին այլայլած
 ուր իմ մահաշուք դէմքիս գիծերէն արիւն կը տեղայ
 կեանքս կողոպտած դամբանիդ վրայ

Փռշին եմ նստած փռշին վրայ
 որ իր շարժումէն սաստիկ կը սոսկայ
 սաստիկ կը սոսկայ

Թ

Հայրըս ծառ էր մշտադալար
 հեքիաթ մը տաք ու անբարբառ
 որուն այբուբենը պատուիրանն էր չարքաշութեան
 իսկ քերականը՝ կողմնացոյցը համեստութեան

Բարեկամն էր ան ծառին ու ամպին
 մտերիմն էր ան կապոյտ թռչունին
 հարազատն էր ան զուարթ մանուկին
 հոգեղբայրն էր ան սէր արեգակին
 եւ տրիքունը՝ հայոց աշխարհին

Բայց մեկնեցաւ
 ձիշդ հեքիաթի պարիկին պէս
 եւ մենք դատապարտուեցանք անաւարտ գաղթէ մը
 դէպի նոր գաղթի մը
 որ չունէր սկիզբ
 եւ չունի վախճան

Ժ

Երկիրներու մէջ
 ուր սպասումը սառցալեռն է մխիթարանքին
 ուր մխիթարանքը կրկներեւոյթն է ժամանակին
 ուր ժամանակը վախճանագիծն է անհեթեթին
 ուր անհեթեթը վեջին խօսքն է ձակատագրին
 ուր ձակատագիրը լուսապատճէնն է մեծ խաբկանքին
 եւ ուր չենք կրնար զանազանել արեւը լուսինէն
 եղայ տխրադալուկ լուսինը ողբերգութեան
 լուսնին վրայ հանգչեցաւ խաւարումը մահին
 իսկ դէմքիս՝ եղերերգը չգոյութեան
 որ հեռաւոր երկիրքներէ դաւաճան
 տխուր–տխուր հօրս դէմքը աւերեց
 եւ կ'աւերէ ու կ'արիւնէ տակաւին

Հալէպ, 27 Մարտ 1990

ՀԱԼԷՊ ՀԱԼԷՊ ...

Հողը իմս չէր

Բայց իմս դարձաւ
Երբ հոն թաղուեցան պապերս որոնք
Տիգրանակերտէն ԱՄՆի երազով
Եկեր էին հոս

Ուր երկինքը լուրթ երազ ցօղեր էր
Իրենց աներազ ու տազնապահար
հոգիներուն մէջ

ուր հողը կարմիր ծնունդ տուեր էր
ցորենին հացին ու քաղցր կեանքի
հասատքին անհաս

հողը իմս չէր

բայց իմս դարձաւ
երբ այստեղ ծնան հանիս մեծ-մայրս
Խանրմ անունով

Վերանուանուեցաւ
Զուարթ Գասպարեան

Ու իր պսակին
Դալուկ ժպիտով ու թելերը վեր
«լէմունէ ալ լէմունէ» պարեց սրտագին

Լեզուն իմս չէր
Բայց արձագանգը կը հասներ ունկիս
Հեռու Անիէն Արքայէն Գագիկ

Եւ մեր պատմութեան հոսող հիւսակէն
Բազում ձեռքերով հիստուած ապահով
Եւ նոյն վաչկատուն ցեղերէն քակուած
Իսկ ցաւը մերն էր սկիզբէն իմս
Խոշտանգուած հողի եւ հեղուած արեան
Ցաւը իմս էր զի նոյնն էր նման

Այս հողին վրայ
Արեան մէջ կապոյտ
Եւ այս լեզուին մէջ

Վայրը ես էի
Եւ իմս էր վայրը որքան անտառը
Եւ կամ երկինքը եղնիկներուն է

Բայց հրդեհ ինկաւ
Երկինքն ուրացաւ իր զաւակները
որոնք մնացին անհող աներկինք

ու կորսուեցան
իրիկուան լուրերուն
եւ իրականութեան միջեւ տեղ մը

երկնքին հետ
վայրն ալ ուրացաւ մեզ
մենք որ մեր ուսերուն վերցուցեր էինք զայն
ու խնամեր մեր թարթիչներուն շուքովը

ծիծեռնակները ուշացան ժամադրութեան
ամէն գարնան կէսօրէ ետք
Ժամը չորսին



Métropoles en métropoles oil on canvas 150x90cm
Միրելյ ԿՈՒԿԵԼՆԵ

2013, ՄԱ. ՏԱՐԻ, թիվ 3

արձակուող աշակերտներուն
եւ իջնող իրիկուան օրհնութեան հետ

ծակ-ծակ էր երկինքը

ու ծիծեռնակները այն գարնան չհասկցան
թէ ինչո՞ւ չկային «փայտի հրապարակ»ին
գիրենք սպասող մանչերը

եւ ինչո՞ւ չկային զէթուգահթէր ծախողները

կար միայն մեծ վախազդու յդի լռութիւնը
- կարծես լռութիւնը էգ ըլլար -
պատրաստ ամէն պահու արհաւիրք ծնելու

ծակ-ծակ երկնքին տակ
ծակ-ծակ քարտէս մըն ալ կար
ուր ոտնաչափ մը տեղ գտեր
կեցեր էինք
ծիծառներուն օրհնութիւնը վրանիս

իրենցմէ տրվեր էինք երգել
մեր գիշերները բերդին շուրջ
նարկիլէի բոյրով քաղցրացած

այն օրերուն
ժամանակը մեր ընկերն էր
մեզի հետ կը ծխէր գիշերներուն խորունկ կապոյտը
եւ կը զուգերգէր պալլատը հին ասպետներուն
որոնց անունները
բերդին դարպասներուն էին դաջուած
«Ոչ կը մոռնամ
Ոչ ալ կը յիշեմ ապագան»
Որ ժամանակին հետ թեւանցուկ
Փախաւ մեր քաղաքէն
Ետեւը միայն փոշի ու մոռացում ձգելով

Հիմա երկրին խորը տեղ մը
Մոռցուած վանքերու կենդանութեամբ կը շնչենք
Մնչող տատրակներուն գգուանքը մեր ուսերուն

Շաքաթ, 24 Օգոստոս, 2013

Ս Ի Ր Ո Ւ Ն

Կիւլպէնկեան մայրանոցի պահակ
այր. Պետրոսը տախտակեայ փոքրիկ
տնակին մէջ կը մրափէր, լայն ու ճերմակ
աստիճաններէն իր վրայ ցոլացող արե-
ւուն տակ, երբ փոքրիկ թփփոց մը լսեց:
Աչքերը կիսով բացաւ եւ անմիջապէս
տեղէն թռաւ.

- Ո՞ր կ'երթաս, ծօ՛ ...

Պահակը չհասաւ գլխարկը գլուխը
անցնել. եւ այդպէս բաց գլուխով վազեց
մանչուկին ետեւէն, աստիճաններէն վեր:

Մինչ այդ մանչը ինքզինք ներս նետեր
էր Մայրանոցի մեծ դռնէն ու կը պոռար.

- Սիրունին տունը փլա՛ւ ... շուտ շուտ
թող գայ ...

Սիրունը, վարի յարկի մաքրութեան
կիներ, որ խոհանոցէն դուրս կ'ելլէր փոշիի
լաթը ձեռքը, զարմացած նայեցաւ ման-
չուկին.

- Ծօ Սագուիկ, ի՞նչ կ'ընես հոս:

- Սիրուն քոյրիկ ... հա՛, փլաւ ... ըսաւ,
որ շուտ շուտ գաս:

- Ի՞նչը փլաւ,- Սիրուն չէր հասկնար
տղուն տագնապը:

- Տունդ:

- Տո՛ւնս ... ծօ տունս ինչպէ՞ս փլաւ:

- Վերի օտան վար ինկաւ:

- Ամա՛ն:

Սիրունը գետին պիտի իյնար, եթէ խո-
հարարուիին, որ իրենց ձայները լսելով
դուրս ելեր էր խոհանոցէն, չբռնէր զինք:

- Երթա՞մ,- մանչուկը հարցուց խոհա-
րարուիին:

- Նախ շէն-շնորհ ըսէ ըսելիքդ, յետոյ:

- Սիրուն քոյրիկին տունը փլաւ, վերի
օտան վար ինկաւ,- կրկնեց մանչը,- հի-
մա երթա՞մ,- մանչուկը կ'աճապարէր ետ
երթալու հոն, ուր այսքան արտասովոր
դէպքեր կը պատահէին:

- Գնա՛:

Նըրսերը հաւաքուեր էին, վախ-վա՛խ
կ'ընէին ու չէին գիտեր, թէ ուրիշ ի՞նչ
կրնան ընել:

- Նազելի՛, դուն Զէյթուն խան* գնա՛,
նայիր ճիշդ ի՞նչ է պատմութիւնը,- կար-
գադրեց տիկ. Արուսեակը, Կիւլպէնկեան
մայրանոցին գլխաւոր դայեակը, որ նա-
եւ տնօրէնուիի պաշտօն ունէր,- դուն ալ
Աստղիկ, բռնէ Սիրունը եւ սա դիմացի
սենեակը, անկողնին վրայ դրէք զինք:

- Առաջի՞ն կարգի սենեակը,- շատ
զարմացաւ նըրս Աստղիկը, որ ծանօթ էր
դայեակի ժուժկալութեան:

Քառորդ ժամ վերջ Նազելին վերա-
դարձեր էր հաստատելով Սագուիկին
բերած լուրը՝ երկու օրուան անձրեւները
խմորի վերածեր էին Սիրունին նոր պա-
տել տուած վերի սենեակին պատերը,
որոնք փլեր վար թափեր էին:

- Ի՞նչ եղաւ ինձի,- սթափեցաւ Սիրու-
նը եւ տեսնելով քովը կանգնած դայեա-
կը, ուզեց ինք ալ ոտքի ելլել: Բայց լսա-
ծին յուշը վերադարձաւ իրեն: Ետ ինկաւ
անկողնին:

- Տունս ... ամա՛ն ...

- Սիրուն, վերի սենեակն է միայն,
բայց *թէլէվիզիոնը* կատուի հոգի ունի
կ'երեւի, սեղանով միասին, չորս ոտքի

վրայ վարի սենեակը իջեր տեղափոխվել է: Փառք տուր, որ աղջիկներդ դպրոց գացեր էին, մեկուն վնաս չէ հասեր:

- Ամա՛ն աղջիկներս,- ըսաւ Սիրունը եւ յանկարծ սկսաւ լալ ու ծունկերը ծեծել:

- Նազելի, սուրճ մը հասցո՛ւր ... Սիրո՛ւն, խելքի եկուր, աղջիկներդ ողջ-առողջ դպրոցն են:

- Դպրոցը չե՛մ, տիկ. Արուսեակ, դպրոցը չեն,- շարունակեց ողբալ կինը:

- Սիրուն, այսօր Երկուշաբթի է, աղջիկներդ դպրոց գացեր են:

- Չե՛, տիկ. Արուսեակ, չէ, առտուն պիտ'սէի քեզի, ըսի գործերը ընեմ լմնցնեմ, յետոյ կ'ըսեմ. դպրոցէն ետ դրկեցին Շաբաթ օր, եղեր թուրք կ'ուզեն:

- Ի՞նչ թուրք:

- Անձնաթուրք:

- Չունի՞ն:

- Ուրկէ՞ ունենան. գիտե՛ս:

Գիտեր տիկ. Արուսեակը, երբ Սիրունը Մայրանոց դիմեր էր աշխատանք փնտռելով, Նազելին միջնորդեր էր եւ պատմեր Սիրունին ողբերգութիւնը:

Դուռ-դրացիներն էին, որ որբ Սիրունին ամուսնացուցեր էին որբ Սեդրակին հետ:

- Երիտասարդ, աշխատասէր տղայ է,- ըսեր էին,- քեզի տէր կ'ըլլայ:

Ճիշդ է, որ Սեդրակը երիտասարդ ու աշխատասէր էր, բայց Սիրունն ալ Ձէյթուն խանի գեղեցկուհին էր՝ գեղուղէշ հասակ մը, երկար, նուրբ, միջնադարեան սրբանկարներուն մատոնանները յիշեցնող դէմքով: Սիրունը երկու աղջիկներուն ծնունդէն ետք ալ պահեր էր մարմնին ու դէմքին նրբութիւնը, ահա թէ ինչո՛ւ Սեդրակը երկու օրը անգամ մը կռիւ կը սարքէր անցնող-դարձող տղամարդոց, նոյնիսկ պատանիներուն հետ:

- Ծօ շունշանորդի,- կը պոռար,- անդին մայի՛ր, ի՞նչ է աչքդ կնիկիս դրեր ես:

Եւ օր մըն ալ դանակը քաշեց խրեց փորը տղամարդուն, որ «կնիկ չտեսած-չունեցածի պէս» իր Սիրունին կը մայէր:

Չարկաւ: Փախաւ:

Այդ փախչիլն էր:

Եւ Սիրունը կրկին որբ մնաց, այս անգամ երկու մանր զաւակներով:

- Հիմա ո՞ր են աղջիկներդ,- հարցուց դայեակը, բարձրացող տագնապը թաքցնել ջանալով:

- Չեմ գիտեր:

- Նազելի՛:

Նազելին կրկին Ձէյթուն խան վազեց ու վերադարձաւ երկու աղջիկներուն ձեռքէն բռնած:

- Մամա՛, Անուշիկս կոտրեցաւ,- լացաւ պզտիկը:

- Մամա՛, գիրքերս տետրակներս աղտոտեցան, օրիորդը պիտի բարկանայ,- լացաւ մեծը:

- Դրացիին տունն էին, առի բերի, որ մայրերնին տեսնէ, սիրտը հանգստանայ,- բացատրեց Նազելին:

Քանի մը ժամ վերջ, երբ Սիրունը գացեր աչքովը տեսեր էր տունին վիճակը, տիկ. Արուսեակ կրկին զինք կանչեց.

- Սիրուն, հիմա տուն գնա՛, վաղը եկած ատենդ ընտանեկան տետրակդ հետդ բե՛ր, որ սա աղջիկներուն անձնաթուրք հանել տանք. մէկը կը ճանչնամ, անոր կ'ըսեմ, որ ընէ:

- Չունիմ,- կմկմաց կինը:

- Ընտանեկան տետրակ չունի՞ս: Լա՛ւ, իրենց ծնունդի վկայագիրները բեր:

- Չունիմ,- շատ ցած ձայնով ըսաւ կինը եւ աղօթեց, որ դայեակը չլսէ. անոր բարկութեան բոլոր աստիճաններուն ծանօթ էր:

- Ուրեմն չե՞մ արձանագրուած: Լա՛ւ,

այդ ալ կ'ընենք: Պսակիդ հաստատագիրը բեր:

Բայց երբ երրորդ անգամ ալ կինը «չունիմ» ըսաւ, դայեակը ինքզինք կորսնցուց.

- Ճանը՛մ, գնա՛ ինչ թուղթ, որ ունիս գտի՛ր բեր,– պոռաց կնոջ երեսին:

- Տիկ. Արուսեակ, դուրպա՛ն, մի՛ պոռար, թուղթ չունիմ,– աղաչեց Սիրունը:

- Հիմա գնա՛:

Կինը հեռացաւ տխուր եւ մտահոգ:

- Ինչո՞ւ կը բարկանաս կնիկին, տիկ. Արուսեակ,– մօտեցաւ նրբա Նազելին,– արդէն Աստուած զարկեր է խեղճին:

- Աստուած չէ զարկեր, ի՛նք իր գլխուն զարկեր է. ինչ թուղթ որ հարցուցի, չունիմ ըսաւ, ո՛չ ընտանեկան տետրակ, ո՛չ զաւակներուն ծննդեան վկայագիր, ոչ ալ ամուսնութեան հաստատագիր:

- Է ի՞նչ պիտի ըլլայ հապա,– Նազելին ինք ալ տագնապեցաւ:

- Տեսա՞ր, իրաւունք չունի՞մ բարկանալու: Չեմ գիտեր: Երթամ մուլագէմ Քէխիային հարցնեմ:

Մուլագէմ Քէխիան Նոր Գիւղի ոստիկանապետն էր եւ Մայրանոցին «մշտական» յաճախորդն ու դրացին՝ անոր երկու տունները – ամէն մէկ կնոջ մէկ տուն – Մայրանոցին ճիշդ դէմն էին:

Տարին անգամ մը մուլագէմ Քէխիան զաւակ կ'ունենար՝ տարի մը հին կնոջմէն, յաջորդ տարին նոր կնոջմէն: Չաւակներուն թիւը այսօր գիտէր, վաղը կրնար հաշիւը կորսնցնել:

Մուլագէմ Քէխիան նաեւ Մայրանոցին եւ տիկ. Արուսեակին «փրկիչն» էր. պետական ի՛նչ հարց, որ ըլլար, մուլագէմը պատրաստ էր օգնելու:

- Դուք միայն իմ կնիկներուս լաւ մայեցէք, շփացուցէք, ինծի ալ աւալան մանչեր տուէք,– կ'ըսէր:

Տիկ. Արուսեակը, առանց վրայէն հանելու բժշկական ճերմակ շապիկը, ճերմակ կօշիկներով կտրեց թաղը, մտաւ ոստիկանատուն, շիտակ մուլագէմին սենեակը:

- Բարի եկար, մատամ, նորէն ի՞նչ կայ:

Դայեակը խնդիրը պարզեց:

- Աս աղջիկներուն անձնաթուղթ պէտք է հանուի, որ դպրոց երթան,– վերջացուց պատմութիւնը:

- Հարց չկայ, մատամ, թող մօր վրայ արձանագրուին:

- Ի՞նչ կ'ըսես, մուլագէմ Քէխիա, չ'ըլլար, ատանկ բան բնաւ չ'ըլլար. վերջը ո՞վ կնութեան պիտի առնէ աղջիկներուն: Ո՛չ, ո՛չ, ուրիշ բան մը մտածէ, մուլագէմ:

- Գիտեմ, գիտեմ ձեզի, հայերը ասանկ բաներու շատ կարեւորութիւն կու տան ... ուլաք** Ահմա՜~~~~~տ, լեղի սուրճ մը մատամին, մինչեւ մտածեմ:

- Շնորհակալ եմ, սուրճը թող մնայ, դուն մտածէ՛, ես գործիս երթամ:

Յաջորդ առաւօտ ուլաք Ահմատը Մայրանոց եկաւ:

- Հոս սպասէ՛,– սաստեց պր. Պետրոս,– ի՞նչ կ'ուզես:

- Մատամը ... վարպետս մատամին կ'ուզէ:

- Դուն գնա՛ վարպետիդ ըսէ մատամը հիմա կու գայ,– եւ վստահ ըլլալէ ետք, որ ոստիկանը դարպասէն դուրս ելաւ, գնաց տիկ. Արուսեակը տեղեկացնելու:

- Շունի ճինս են. եկեր է ներսի կիները դիտելու ախորժակ ունի ... ինք գայ ըսելիքը ըսէ չ'ըլլա՞ր ... վարպետս մատամը կ'ուզէ կոր եղեր, – աստիճաններէն ելլելով կը մըթմըթար պահակը,– տիկ. Արուսեակ, ատ մուլագէմին շունը եկաւ, կ'ըսէ, թէ վարպետը քեզի կ'ուզէ եղեր:

Գործէն արձակուելէ ետք տիկ. Արուս-

եակ ուստիկանատուն մտաւ:

- Ի՞նչ է, ճերմակ շապիկով չես,- մտերմութիւն ցուցաբերեց մուլագէմը դայեակին, որ չլսելու տուաւ եւ ուղղակի նիւթին անցաւ:

- Բան մը կըրցա՞ր մտածել:

Մուլագէմը, եթէ զգաց իսկ նուրբ հեզմանքը «կըրցա՞ր մտածել»ուն, ցոյց չտուաւ:

- Պէտք է այդ կինը ամուսնանայ: Ուրիշ ճար չկայ:

Կ'երեւի զգացեր էր հեզմանքը. խօսքին վերջնական ոճը, քիչ մը խիստ ձայնը այդ կը հաստատէր:

- Լաւ, բան մը կ'ընենք, շնորհակալութիւն:

Եւ անմիջապէս դուրս ելաւ ուստիկանատունէն:

* * *

Քանի մը օր վերջ տիկ. Արուսեակ ծանր քայլերով կը բարձրանար Ձէյթուն խան տանող զարկվերը: Շատ մտածեր էր, շատ ծանր ու թեթեւ ըրեր էր մուլագէմին առաջարկը, համոզուեր էր, որ լաւագոյն լուծումը պիտի ըլլար ատիկա, բայց .. որո՞ւ պսակէր Սիրունը, որ «յօնք շինելու տեղ աչք հանած» չըլլար:

Եւ ի վերջոյ, յայտնատեսութեան պէս «տեսեր էր» ամէնէն յարմար թեկնածուն:

Օրուան այդ ժամուն Ձէյթուն խանի թարլան ամայի էր. տղաքը իրենց դպրոցները, երիտասարդները, կին թէ տղամարդ, իրենց գործերուն:

Աւետիս ամմին տեսաւ անդարպաս դռնէն մտնող կերպարանքը եւ ափը ճակատին տարաւ, իբր թէ մօտեցողը լաւ տեսնելու համար:

- Բարի լոյս, Աւետիս ամմի,- բարձրբարձր եւ հատիկ-հատիկ արտասանեց

կինը:

- Բարլո՞ւ ... հա՛ ...

- Մայրանոցի դայեակն եմ ես, ամմի:

- Հա՛, գիտիմ ծանօթ ձէն է, հա տիկ. Արուսեակ, դուրպան, բարով էս էկեր մեր խանը ... խէ՞ր է:

- Խէր է, ամմի, քո՛վդ եկեր եմ:

- Հազար բարով, մստի՛,- եւ ցոյց տուաւ քովի քարը, որ որպէս մատարան կը ծառայէր:

- Ողջ մնաս, գործի պիտի հասնիմ: Խնդրանքով եկեր եմ դուռդ:

Եւ լռեց. ինչպէ՞ս պիտի ներկայացըներ այս շատ փշոտ խնդրանքը:

Լռեց, ծերունին կասկածով նայեցաւ կնոջ: Ի՞նչ կընար ուզել իրմէ այս կինը, որ, ինչպէս լսեր է դուռ-դրացիներէն, ճիգ չի խնայեր հասնիլ-օգնելու դիմողին ալ, չդիմող կարիքաւորին ալ:

- Ըսէ՛, եաւրում ,- ծերունին խօսեցաւ երկարող լռութենէն նեղացած:

- Ըսեմ, ամմի, թէւ ... Աւետիս ամմի, քեզ պիտի ամուսնացնեմ,- արագ-արագ ըսաւ կինը, խորունկ շունչ մը քաշեց եւ սպասեց:

Ըսուածը այնքան անսպասելի էր, որ ծերունին պահ մը կարկամած նայեցաւ կնոջ: Կը կատակէր: Թէ ոչ, ըսուելիք բան չէր ասիկա իր տարիքով մէկուն, ինք որ տասնեակ մը թռռներու տէր է արդէն – մէկ մասը թաղեր է, մէկ մասն ալ ողջ-առողջ փառք Աստուծոյ...

Բայց տիկ. Արուսեակը ո՛չ միայն շատ լուրջ էր, այլ նաեւ տեսակ մը վախով իր պատասխանին կը սպասէր:

- Եաւրում,- սկսաւ մարդը խեղճացած,- այս տարիքիս հետս շախա մ'ըներ, սիրտս չի տանի ...

- Աւետիս ամմի, շատ լուրջ եմ, ընելիքդ մեծ բարիք պիտի ըլլայ ... գիտես Սիրունը, չէ՞, ան, որուն տունը փլաւ քա-

նի մը օր առաջ ...

Ծերուկը ուշադրութեամբ մտիկ ըրաւ, գլուխը շարժեց, «ցրթ-ցրթ» ըրաւ, երբ կի-
նը կը խօսէր աղջիկները մօրը անունին
արձանագրելու այլընտրանքին եւ անոր
հետեւանքներուն մասին: Յետոյ երբ
պատմութիւնը վերջացաւ, երկա՛ր պահ
մը լռեց եւ ի վերջոյ ըսաւ.

- Բայց ինծի նայէ՛, եկեղեցի-մեկեղեցի
զացողը չեմ հա՛:

- Չէ, չէ,- ըսաւ տիկ. Արուսեակը, համ-
բուրեց ծերունիին դողդոջ ձեռքը եւ շա-
րունակեց,- դուն միայն անձնաթուղթդ
տուր ինծի ... ունի՞ս ...

- Հէլպէթտէ ունիմ. սպասէ՛ բերեմ:

* * *

- Չ'ըլլար, տիկ. Գազանճեան, չ'ըլլար,
ինչպէ՞ս կարելի է երկու անձնաթուղթ
պսակել,- քանիերորդ անգամն ըլլալով
կ'ըսէր Առաջնորդ Սրբազանը:

Բայց տիկ. Արուսեակը յամառօրէն իր
ըսածը կը պնդէր.

- Եթէ դուք ուզէք, կ'ըլլա՛յ, Սրբազան
հայր, ասիկա բարիք է, ընտանիք մը
փրկել է. հապա ի՞նչ պիտի ըլլան այդ եր-
կու աղջիկները առանց անձնաթուղթի:

- Լա՛ւ,- ըսաւ Սրբազանը ճարահատ,-
բայց ոչ մէկուն ոչ մէկ խօսք

Կէս ժամ ետք տիկ. Արուսեակը կրկին
կը մտնէր մուլագէմ Քէխիային գրասեն-
եակը:

Երբ մուլագէմը պսակի հաստատագի-
րը տեսաւ, գլուխը շարժեց.

- Քեզի համար չըլլալիք բան չկայ, մա-
տամ, եթէ խնդիրը մարդոց օգնելու մա-
սին է: Է՛հ, ուրիշը ինչ դրամ կը դիզէր ...
սա թուղթը հոս ձգէ, գալ շաբաթ անձնա-
թուղթերը կը դրկեն: Հա, սա աղջիկնե-
րուն անուններն ալ հոս, թուղթի վրայ գրէ
տեսնեմ, անանկ ալ դժուար անուններ
ունիք որ ...: Կարծեմ կինս յղի է, նորը,
դրկեմ անգամ մը նայիր, բայց մատամ,
ջանքդ ըրէ, որ ա՛ս ալ տղայ ըլլայ հա՛ ...

* * *

Տարիներ ետք Սիրունը հանգիստ
փակեց աչքերը: Մեծ աղջիկը լաւ գործ
ունէր, ինքզինքը կրնար պահել: Պզտիկն
ալ ամուսնացեր եւ իրեն երեք թոռներու
երջանկութիւն պարգեւեր էր:

Փառք շատ, Աստուա՛ծ:

Հալէպ

* Ձէյթուն Խանը բլուրի մը վրայ հայկական թաղամաս մըն է:

** Ուլաք.- լակոտ:

ՀՐԵԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆ



«Կարծես թե հազարամեակով մորթուելու վարժութիւն մը մեր օրերուն վերածուէր մորթելու մոլուցքի մը»:

Յ. Օշական

Հրեական Ողջակիզման Յուշարձան – Պերլին

2013, ԾԱ. ՏԱՐԻ, ԹԻՒ 3

Ալիք առ ալիք, մէյ մը վար, մէյ մը վեր, ի վար թաւալող եւ ի վեր հանգչող հոսք: Փռուած մոխրասաւան ծով մը՝ վերէն, հեռուէն եկող ու տեղաւոր այս ընդարձակ տարածքին վրայ: Նայած թէ՛ ու՞ր կեցած ես եւ ի՞նչ դիտակէտ կ'որդեգրես: (Ամմիջապէս լուսանկար կամ արուեստանկար պիտի ուզէք, գիտեմ, որովհետեւ պատկերի յիշողութիւնը աւելի յամեցող է, ըստ...երեւոյթի՛ն: Թող այդպէս կարծուի, որպէսզի գրուող լեզուն ա՛լ դադրի իր կիրարկումին փորձերէն ու դառնայ...այն ինչ որ կը գտնէք աստ ու անդ դարձած):

Ամէն Պերլին երթալուս պէտք է այցելեմ, հսկողութեան ելլեմ, գտանելի բան մը կայ հոն, ամէն անգամ, ամէն անգամուան խոցէն՝ Ողջակիզումէն զատ, անկէ զատ ու մեկուսի: Անհաւասար, անել, ոչ քառասյին, կարգաւոր. որովհետեւ՝ քովէ-քով շարուած են բոլորը, պէթոնէ սիւնապատեր պիտի կոչեմ զիրենք, նոյն չափի,

բայց տարբեր բարձրութիւններով: Կան որ գլխէ շատ բարձր են եւ ուրիշներ՝ գետնին ամբողջապէս հաւասար: Եւ այս երկու ծայրագոյն չափերուն միջեւ՝ միւս բոլոր չափերը: Նոյնաչափերը շատ քիչ ըլլալու են: Ընդարձակ ու զանգուածային տարածք է սա նախ եւ առաջ:

Պէթոնաշար բանակը պիտի տեսնես: Բարձրութիւններն են տարբերութիւն մտցնողը գոյնի եւ տարածութեան միութեան մէջ: Մոխրագոյն ծաւալ, ինքնընդլայն, ծալ-ծալ, ալիքաւոր գոյառում: Պէտք է տեսնես, որովհետեւ կրնաս մէջը կենալ եւ ամբողջութիւնը չառնել: Երբ մասնակից ես՝ չես տեսներ: Ուրեմն պէտք է դուրս գաս: Բայց երբոր դուրս գաս, այն ատեն ալ կ'ըսեն՝ մէջը չես, չես հասկնար, չես տեսներ: Ուրեմն, մէյ մը ներս, մէյ մը դուրս ելեմտնել, սահմանները չափելով:

Երբ Պերլին ես, այո, գրեթէ անխուսափելի է անոր այցելութիւնը: Ան կը կանչէ

կեղրոնական կայարանէն. անշուշտ պիտի անցնիս նախ պետական կեղրոնական խոշոր շինութեանց առջեւէն. հոս ամէն ինչ զանգուածային է, թուրքերու քանակէն սկսեալ. ու զբօսաշրջիկներու առաջին ապրումի թարմութիւնը միշտ նորոգիչ դեր մը ունի. անոնց հետ առաջին դիտորդ կ'ըլլաս, կ'առաջնանաս, կը վերադառնաս սկիզբին: Նորէն նորին նոր կ'այցելես:

Մէջն ես: Կողմէ մը մտած ես մոխրագոյն պեթոնէ կաղապարներուն բանակավայրը՝ հաստաբետ սիւններուն բազմաշարը: Շարքերուն մաս ալ կը կազմես անմիջապէս, մուտքովդ, անդամակից ես: Ա՞յդ է արդէն թելադրուածը, որ ոտքով՝ ձեռքով, ներկայով-անցեալով, ուղեղով՝ յիշողութեամբ մխրճուիմք, խեղդուիմք՝ հոնկէ չելլելու համար: Ըլլանք անոր շերտերէն մէկը անվերադարձ: Բայց, ոչ, կարելի չէ նոյնանալ, այդ մէկը անհնարին է: Անհնարելի՛: Իրականութեան մէջ անպարունակելի իսկ է այս զանգուածը: Կառոյցը պէտք է վերհանէ իր նպատակը միաժամանակ: Կառոյցին նպատակն ու զանգուածքը միութիւն կը կազմեն: Բացօդեայ եւ բաց յօդեալ: Առ եւ բաց: Ամէն կողմէ մուտք եւ ամէն տեղ ելք: Ներսն ու դուրսը հաշտեցուած: Յաւն ու ծովը՝ ցաւին ծովուն միացած:

Յուշարձանը վե՞րջ թե՞ սկիզբ պիտի տար եղածին: Արդէն քննարկեցին հա՛ քննարկեցին, զոհ ու ոճրագործ, ոճրագործ ու զոհ՝ ձեռք-ձեռքի (Գերմանիոյ մէջ կարելի է այդպիսի բան), եղածին առջեւէն եւ ետեւէն, մինչեւ ետեւը, հատնումը քննարկման, մինչեւ հասան յուշարձան, որ ոչ սկիզբ ունի, ոչ վերջ: Քեցել սկիզբն ու վերջը, գետեղելու համար հոն՝ անոնց կեղրոնը այդ յուշարձանը: Ան ունի երկու մակարդակ՝ այս մէկը, երեւելին, որ գետինը կառուցուած է, ինքնաշարժի ճամբա-

ներով եզերուած, ու այն մէկը, որ ստորերկրեայ է եւ որ ցուցասրահն է յուշարձանին: Ուրեմն, կ'իջնես աստիճաններէն վար, կողմնակի մուտքէն. հոն են պատկերաւոր ու ձայնաւոր տեղեկութիւնները եղածին մասին, վկայութիւնները, մթալուսաւոր սենեակներու մէջ, ուր վերի՝ դուրսի սիւնապատերուն շարունակութիւնը եղող կաղապարածէ սիւներ կան, առաստաղէն վար իջած, կախուած. եւ այս ներսի սիւններուն ոտքը գետին չի դպչիր. ու բնականաբար դուրսիններունն ալ երկինք չի հասնիր. ուրեմն՝ կեցած են օդին մէջ:

Արտաքին սիւնապատերուն վրայ անպայման զբօսաշրջիկային մթնոլորտ մըն ալ կը տիրէ, տխուրն ու զուարճալին իրարու խառնուած են, մանաւանդ երբ պարման-պարմանուհիներ, աշակերտ-աշակերտուհիներ կ'այցելեն, նոյնիսկ անոնցմէ ոմանք թերեւս ընդհանրապէս չգիտնան թէ ու՞ր եկած են, - ինչու՞ն՝ պահ մը մոռնալով, - կը ցատկեն մէկ սիւնէն միւրը, դիրք կ'առնեն, զիրար կը լուսանկարեն, առանձին կամ խմբովի: Յիշատակ է ի վերջոյ: Սիւնապատերուն վրայէն քալելը յիշատակի անպատուութիւն չէ անշուշտ. անոնց միջեւ յառաջանալը եթէ անոնց մոխրագոյն մէջ անտարբեր ու մոխրային երանգ մը կ'արտացոլայ, անոնց վրայէն ցատկելով մէկէն միւրը անցնիլը, բաց երկնքին տակ որոշ կենսունակութիւն մը կը յուշէ. որովհետեւ կը քալես ու կը շարժիս. նոյնիսկ եթէ մէկ կամ միւս սիւնապատին վրայ քիչ մը աւելի երկար յամենաս:

Անշուշտ փիքնիքի տեղ չէ այս. հանրային պարտեզի մթնոլորտը, ինչպէս նաեւ այլ անպատշաճութիւններ կանխարգիլելու համար հսկիչներ կան: Պերլին հասած, յոգնած զբօսաշրջիկը շատ հաւանաբար բանայ ուտելիքի տոպրակը կամ ջուրին շիշը ու դադար մը առնելու

համար հանգչի հոն, սոսկ նստարանի վերածե պատերէն մէկն ու միւսը: Կրնայ նոյնիսկ պատահիլ ատիկա, մեծ հարց մը չէ, բայց շատ երկարատեւ ըլլալու չէ:

Դէպքին դժուարութիւնը, անհասկնալիութիւնը պէտք է նշեն սիւներուն շարքերը, միշտ իրարմէ գրեթէ նոյն հեռաւորութեան կանգնած: Երբ շարքերուն մէջ մտնես, կը զգաս զառիվար ու զառիվեր առաջնորդող արահետները: Ալիքանման, խախտու ու խախտող ալ կ'երեւի այս կառոյցը, խախտակառոյց պիտի ըսէր յետարդիականութիւնը:

...Նոյն քաղաքի հրէական թանգարանին տարբեր յարկերը իրարու միացնող աստիճանները կը բարձրանան, կը շարունակեն բարձրացումը ամենավերջին յարկէն ալ վեր, բարձրանալու հարկէն ալ վեր, դէպի պատ: Հոն երկու, պիտի ըսէինք՝ խորհրդանշական վերջին ու վերին աստիճաններ կան, որոնք պատին կը փակին, անոր մէջ կը մտնեն եւ շարունակութեան անկարելի կարելիութիւնը ցոյց կու տան: Աչքդ կը տեսնէ զայն, բայց չես կրնար ճերմակ ճամբան շարունակել, որովհետեւ պատին մէջ ճամբայ չկայ: Կը դառնաս ձախ ու կը մտնես վերջին բաժանմունքը թանգարանին:

Այս պէթոնադաշտը միաժամանակ «Աքսորի պարտէզը» չէ՞ արդեօք, - որ կը գտնուի նոյն քաղաքին հրէական թանգարանին մէջ, - անոր մեծադիր տարբերակը, անոր կողքը. ան ալ բացօդեայ բակի մը մէջ հաստատուած է. արքայապարտէզը, պէթոնէ հսկայ ու հաստ պատասիւներէ կազմուած ան ալ, ու պատասիւներուն զագաթին՝ ցանուած ծառեր: Աքսորապարտէզը կը ծաղկի, արքայուն կեանքի ծառեր կը ծնին: Ահաւասիկ պատգամը: Իբրեւ պէթոն եւ պլոք կը ծաղկին հոս մտքերը, կը կրկնուին: Ուրեմն, Աքսորի «նոյն» պարտէզը կը գտնուի պէթոնա-

դաշտին վրայ, քիչ մը տարբերակուած ու ալակերպ, չորս հովերուն բացուած, ընդլայնուած, քանի՜ արտասահմանուած: Պարտէզին մէջ մանր է ընդհանուր հանդիսադրումը, պէթոնին զագաթներուն չես կրնար հասնիլ, միայն վարէն կը դիտես, ամէն ինչի չես կրնար տիրապետել, դէպի զագաթ կրնաս նայիլ, սակայն ոչ՝ զագաթէն. տեսողութեանդ սահմանները կտրուած են: Միւսին, պէթոնադաշտին պարագային զագաթի հարցը լուծուած է: Եթէ հոն կան երեւելի բայց անհաս զագաթներ, կան նաեւ նոյնքան ու թերեւս աւելի՝ տեսանելիներ, հասանելիներ, նուաճելիներ: Ոմանք՝ գետնի հաւասար, որոնց վրայ կը քալես-կ'անցնիս: Մեծութիւններուն եւ փոքրութիւններուն հաւասարութեան երգը կը լսես: Միւները հոս՝ պարտէզին մէջ ալ փողոցներ կը շինեն: Միւները, այո, աւելի սիւն են հոս, ծաղկած են: Եթէ խաչքարին ոտքերէն կ'ելլէ ծաղկումը, հոս՝ պէթոնին զագաթէն:

Սա պէթոնէ պլոքները հոս շարելով, «Աքսորի պարտէզը» թանգարանին արտաքին բակէն դուրս բերած են պարզապէս. դուրսէն դէպի արտադուրս. կրնաս միայն այդ արտահանումը՝ արքայուն տեսնել, ըսել ու անցնիլ, եթէ չես ուզեր դիտել կառուցուածքային տարբերութեանց նրբութիւնը երկու... պարտէզներուն միջեւ: Նախ ստուգել երկու ճարտարապետներուն (Լիպլսքինսոն եւ Այզլմանն) նոյնագի տարբերութիւնը: Մէկը միւսէն առած է, օրինակած կամ շարունակած է կ'երեւի: Այսքան յստակ:

Տխուր գոյնը մոխիրին յաւիտենութենէն կու գայ: Անոր մնայուն պէտքէն: Ուր որ ուզես՝ կը ցանես զայն, պէթոնապար՝ այստեղ դարձած մոխրացանքը, որպէսզի անկէ մոխրածառապէթոն ծլի:

Ընտրուած է տեղը կեդրոնական: Քանի որ կեդրոնէն մեկնող նիւթ մըն է, պէտք

է կեդրոնը տեղ մը ունենայ: Դիշդ կեդրոնը մայրաքաղաքին, հոն ուր կարելու տարրերը քաղաքական կեդրոն կը կազմեն, խորհրդարանին առջեւ կամ անոր մէջ: Խորհրդարանին սրտին կամ խորհուրդին մէջ: Գլխուն մէջ: Ինչու՞ դուրսն են այս պատերը: Կրնան յանկարծ մսիլ: Պէտք է խուժեն ներս ու տեղ գրաւեն ներսը: Ներս կամ դուրս: Արդէն անոնք ներս մտնելու վիճակի մը մէջ են՝ բանակն ահա, շարժման մէջ ինկած: Արշաւ: Մօտ են անոնք իրենց նպատակին, որ յառաջխաղացմամբ կու գայ: Բայց կարելի չէր այդքան ալ մօտենալ կեդրոնին, ոչ ալ խորհրդարանին ճիշդ դիմացը տարածւած կանաչ դաշտին վրայ յաջողեցան հանգրուանել, որպէսզի աչքերնուն խոթին ոճիրը, գիշեր-ցերեկ. ոչ, այդ մէկը չյաջողեցաւ: Կանաչը չվերածուեցաւ մոխրագոյնի: Ուրեմն՝ ոչ շատ հեռու, կեդրոնին դրացնութեան, անոր մօտակայքը գոյացան, որպէսզի կեդրոնին երեւելի ըլլան. «Ահա, առէ՛ք, տեսէ՛ք, թէ ի՞նչ ըրիք:

Մի՛ մոռնաք, որ յանկարծ չկրկնէք: Այս է գաղտնիքը անկրկնելի: Մենք կը մոռնանք, մենք չենք յիշեր՝ կարելու չէ, ատիկա մեր գործն է. յիշեմ իմս է, չիշեմ իմս է: Ձեզի հետ գործ մը չունի: Անկորնչելի է: Մեր յիշեցնելը միայն կը բաւէ»:

Պեթոնապատերու վերածուած են գոհերը, ճիշդ այդ կարծրութեամբ, զոր անոնք ստացան ցաւն ու մահէն, եւ ճիշդ այն կարծրութեամբ՝ համար, որ այսօր կը ճառագայթեն իբրեւ պետական ծրագիր, իբր թէ: Չոհերը չեն մտած, անցած՝ պետական ծրագրի. ինչպէ՞ս անցնէին: Չոհերը տեղ չունին հոն: Ոչ ալ հոս, յուշարձանին տարածքին: Անոնց յիշատակը միայն կը ծովծաւալի այստեղ իբրեւ պատգամ, առաջին հերթին՝ ոգեկոչողին ուղղուած իբրեւ ապտակ: Անդին, այսինքն՝ հոսկէ հեռու, անոնց ճակատագիրը կը պտըտցուի ծրագիրէ ծրագիր, ճակատէ ճակատ, ուսամբարձ ափսէներու վրայ: Չոհերուն ճակատագիրը կը գոհուի անընդհատ:

ՄՐՏԻ ԽՕՍՔ

Աստուածային-Բազինական հին ու Նոր բոլոր խմբագիրներուն

Հայակերտող ու համահայ բազմամշակութային՝ միաւորող հանդէսը թէեւ կենդարեայ տարիքին, սակայն արդէն երկրորդ դարին թիկնած է՝ որպէս լուսառատ լուսատու, որ հայ մտաւորականութեան փարոսն է ու սրտի զարկերակը:

Պանծալի յոբելեանիդ առթիւ բոլոր-բոլորիդ՝ խմբագրական-աշխատանքային ողջ կազմիդ, մաղթում եմ քաջառողջութիւն, արեւշատութիւն, բարեկեցութիւն ու բազմաբովանդակ յաջողութիւններ:

Թող բոլորիդ ձեռքն ու գրիչը դալար ու բեղուն լինեն՝ ստեղծագործութեամբ առլեցուն:

Թող «Բազին»ը այս հարիւրամեակը, ինչու չէ, նաեւ հազարամեակը լեցնի հայ մշակութային գանձերով եւ պանծացնի մեր Սփիւռքը, հայրենիքն ու Ղարաբաղ-Արցախը:

**Արթուր Նաւասարդեան
Երեւան**



ՉՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԱԾ ՉԿՆԵՐԻ ՏԵՍԱԿ

Քարերն այստեղ՝ ինչպես անապատում առազը, արեւը, կրկներեսոյթը (միրաժ). տեղ ու դադար չկան: Խելքից դուրս շատ՝ ծտերի ծվլոց ամրան լուսաբացին: Փոքր ու մեծ, ճերմակ չալերով (պուտ, խալ), առազախեղդ, փուշ ու մոլախոտ քաշած մինչ կոկորդ... ցամաքած Սեւանի ժառանգութիւնն են աշխարհին: Լիճն ասես դիտմամբ՝ հողը խեղդելու համար, ցնկնել (ծնած) էր դրանք: Աչքը տեսնում է միայն նրանց ճերմակ չալերը եւ մռութներին կեղեւակալած քարաքոսը: Անյայտ մի խռով-

քից հողը սեղմած էր պահում ծնօտը, եւ ճերմակ-չալաւոր քարերը խիտ-խիտ էին ընկած իրար կողքի, հիմնականում՝ իրար հագած: Ոտք դնելիս ծանրութեան տակ քարը սեղմում էր քարին, ոսկորներից կրճտոց հանում, ինչպես աղիներում որդ ունեցող երեխան է քնի մէջ դրճորճացնում ատամները: Արանքներում՝ հէնց քարերի ողնաշարից, հատ ու կենտ ուղտափշեր էին աճում: Այն տեղերում, որտեղով սովորաբար անցնում էր քամին՝ ոտքերից աջուճախ առազ ցփնելով, ուղտափ-

շերն անելի շատ էին: Այս կողմերում ուղտ չկար: Երբեմն-երբեմն դրանք արածում էին էշերը՝ օգտուելով ուղտերի պէս չորքոտանի լինելու իրենց ազգակցական իրաւունքից: Բայց այդ բոյսի հիմնական սպառողը տիկիներն էին. քաղում, փնջերով խփում էին դրան օճորքին, որ սուր փշերը ծակեն տան վրայ եղած չար աչքը:

Լճի ափերին մօտ ճերմակ չալերով քարերը երբ շարժում էին, կողբերը խոնաւանում էին. քարերի տակ ջրի երակ կար, գուցէ եւ՝ ստորգետնեայ գետ: Քարերից այն կողմ՝ դէպի լիճ, աւազ, ճայեր կային, ձկան փշեր, մարդ ու անասունի խորն ընկած ոտնահետքեր, որոնց մէջ ընդերքից ջուր էր դուրս տուել ու արեւի տակ նեխում էր՝ գրգռելով անդադար տգտագացող մոծակներին:

Երկու պատերազմների՝ վիեթնամական ու դարաբաղեան, կեանքի ամէնօրեայ ահեղ պայքարն էլ գումարած՝ երեք... երեք ահեղ պատերազմների հերոսը հիացած էր իր յայտնագործումից՝ քարերն այստեղ՝ ինչպէս անապատում աւազը, արեւը, կրկներեւոյթը (միրաժ)... Էստեղ տուն շարելը՝ խաղ ու պար... Էստեղ դրա համար պէտք չէ ծախս անել, քար գնել: Ընդհակառակը՝ քեզ կը վճարեն, որ գոնէ մի թգաչափ, մի բուռ հող ազատես, բացես երկրի քթանցքը: Հիացած իր ոտքերի տակ չխկրտացող քարերով ու նրանց չալերով, նա համոզւած էր՝ այդ լճի հառաչն է կաթիլ-կաթիլ մեռել քարերին ու դարձել լաքաներ:

- Չեչաքար է, մանկան ատամի պէս փափուկ,- խորհուրդ չտուեցին իրենից առաջ տնաւորուածները,- դրանց փուչ պղպջակներում ու ծակոտիներում՝ էլ

փոշի ու բացիլ (մանրէ), էլ որդ ու բլոճ... վերջին հաշուով՝ մեռնող լճի կանչը... որ քամին չի՝ վնգում, իսկ էս կողմերում քամին՝ ինչպէս անապատում աւազը, արեւը, կրկներեւոյթը (միրաժ)... տեղ ու դադար չկայ, օր ու արեւ չկայ... ծառը չի հասցնում ծաղկել՝ արդէն ծաղիկները չկան, չես հասցնում նուալ, արդէն սարերում արձագանգուում է՝ աստուածներից սկսած գել (գայլ) ու հարամի (աւազակ) հանում ոտքի: Քամին, որ մտաւ էդ քարերի բաց թոքերը, որ սկսեց ոռնալ հարաւ-հիւսիսից, երկինք ու գետնից... ապրե՞լ կը լինի: Հայաստանում ինչն է շատ՝ քարը: Չեչաքարից մարդ տո՞ւն կը շարի:

Բայց ճակատագիրը նրան պարտադրում էր յանդուգն լինել: Որբութիւնից այդպէս պատուով՝ առանց մուրացկանութեան, գողութեան ու այլասերուածութեան դուրս գալը ոչ միայն ինքը, գիւղացիներն էլ էին համարում յաղթանակ: Եւ նա երկու՝ կեանքի ամէնօրեայ ահեղ պատերազմն էլ հաշւած՝ երեք... երեք պատերազմների հերոսը անդրդուելի էր. իրեն պէտք չեն՝ պեռլիտը, որ քարէ դարի նստուածք է, ոչ էլ տուֆը, որ պրոնգէ դարի բիւրեղացումն է, ոչ էլ պեմզան, որ հասարակ հող էր մակեդոնացու ձիերի ոտքերի տակ, ոչ էլ պազալթը, որ օդի մէջ դեռ փոշի էր ու կսկծացնում էր Չինգիզ խանի դաժան աչքերը, ոչ էլ կրանիթը, որ դեռ բիւրեղ էլ չէր, այլ մութ էր ու լցում էր Շամիրամի այգին... Էդ բոլորին ինքը ծանօթ էր, էդ բոլորը տեսնուած էր, իսկ իր տունը...

- Ա՛յ մարդ,- ասում էին մինչ այդ տնաւորուածները,- քո տեսած ճերմակ

չալերով քարերը... հա՛, ճիշդ էս, ոնց որ հրեշտակի ոտնահետքեր լինեն էդ քարերի վրայ, ոնց որ լորի ձուեր լինեն մարդու ոտքերի տակ, որ գիշերով դուրս ես գալիս՝ լուսինը ոնց որ բիրեղ-բիրեղ լցուի վրադ... բայց տա՞ն համար: Ի՞նչ գիտես՝ հրեշտակն ինչի էր եկել եւ ինչի գնաց, լուսինը ինչի փշուր-փշուր լինելիս հենց դրանց ընտրեց իրեն հանգրուան, մէկ է թէ՛ գերեզման: Գերեզման, ա՛յ տղայ: Իսկ քո ուզածը տուն է, ուր կեանք պիտի լինի... համ էլ (նաեւ), ա՛յ տղայ, դրանց թոքերը բաց են, հասկանո՞ւմ ես: Մեզ մօտ էլ ձմեռը՝ վո՛ւյ, Միայիրը դրա համեմատ արեւադարձային գօտի է, ձիւնը՝ էլ անունը մի տուր, ինչպէս աւագն անապատում, արեւն ու կրկներեւոյթը (միրաժ)՝ տեղ ու դադար չկայ: Ուրքդ դրեցիր, խրուած ես, խրուեցիր՝ էլ վերջ, քեզ ողջ-ողջ (սաղ-սաղ) կուլ կը տայ ու մինչեւ գարուն ոսկորներդ կը հալուեն ձնէ պատերի մէջ: Իսկ էդ քարերի թոքերը բաց են. էդ սառնութիւնը, էդ սարսուռը... բա բքի ոռնոցը՝ ամա՛ն... երկինք ու գետին խառնում իրար, Աստծուց սկսած գել (գայլ) ու հարամի (աւագակ) մղկտացրնում: Ու էդ բոլորը տանդ մէ՞ջ: Եղբայր, ախր, էդ քարերի թոքերը բաց են, քո տանն էլ հետը: Ախր տունը պաշտպանուելու համար է: Չհաշուած վիշապ օձերը՝ ութ մեթրանոց... վո՛ւյ, ոսկորներս սարսռացին:

Ամբան շոգերի հետ այս կողմերում սկզբում յարութիւն առնում, ապա թեժանում էր ութ մեթրանոց օձերի առասպելը, որոնց իբր Արփան Եղեգնաձորում կուլ տալիս, փորում պահած քիլոմետրերով բերում, թքում էր Սեւանը:

Օձերն էլ ջրի անսահմանութիւնից ու ազատութիւնից ոգեւորուած՝ դուրս են գալիս ափ, փորի տակ խշրտացնում քար ու աւագ: Բայց դա նրան առանձնապէս ետ չէր պահում. «Վիեթնամում դրանից մեծ վիշապներ եմ կծել-կերել՝ առանց կաշին հանելու ու խորովելու... հիւս թող ռիսկ անի (փորձուի) մտնի իմ բակ»:

Ճերմակ չալերով քարերը նրանք սկսեցին կրել Օգոստոս ամսին՝ հայրը, չորս երեխաները եւ մայրը: Շալակով էին կրում՝ մեծերը շատ, փոքրերը քիչ, որովհետեւ քարերի տակ ջրի երակ կար, հողը թաց էր, փութիւր, կովերն էին խրում-մնում, ուր մնաց՝ մեքենան: Հայրը բարձում էր տղաներին՝ շա՛տ, շա՛տ, շա՛տ. «Տղամարդ էսպէս են դառնում», - ուրախութիւնից ծիծաղում էր: Բարե բուրգերը շալակներին՝ երեխաները քրտինք սրբելով գնում, ծառաւից մեռնում ու կանգ չէին առնում: Ընթացքից փշեր էին քաշում, ցողունը ծամում, հիւթը ծծում, մնացածը դուրս թքում: Տեղ էին հասնում՝ վարպետը քարին հաւան չէր: Վարպետը գիշեր ու գօր կրել էր տալիս, կանգնում քարերի բուրգի գլխին ու մուրճով, որ չէ՛ր իջնում՝ ձուի կճեպի պէս ցաք ու ցրի փշուրները թռչում էին, ու ոգեւորուած վարպետը՝

- Ըհը՛, ըհը՛,- ասում ու խփում էր, խփում ու համոզում էր,- ըհը,- ասում էր,- մի թոննայի միջից մի հատիկ պինդ քար է դուրս գալիս... դա քա՞ր է՝ մանկան ատամի պէս փափուկ... դու քանի՞ տարի կրես, ես քանի տարի՞ ջարդեմ... ջարդեմ ու շարեմ... Ախր ես ինչքա՞ն ջարդեմ, դու ինչքա՞ն կրես: Վերջում

ասում է՝ քո երկու պատերազմների հերոսը...

- ...Կեանքի ամենօրեայ դաժան պայքարն էլ գումարած՝ երեք:

- Ամենօրեայ պայքարն էլ գումարած՝ երեք պատերազմների հերոսը առ օրս անտուն է: Աշխարհը թքում-մքում է մեզ: Արի, քեզ բնակարան ենք յատկացրել:

- Շնորհակալ եմ, ախպերս: Ո՞ր ապուշը էս տունը կը թողնի. պատուհանիս տակ՝ լիճը, երկնքում աստղերը, տանս մեջքին՝ հրեշտակի ոտնահետքեր...

- Դա էնպիսի շինութիւն է լինելու, որ քիլոմետրի վրայ մարդու աչք մտնի, որ նայողը ապշանքից բացականչի՝ էս ի՞նչ էր: Բակում երեխեքի գնդակից խրտնած՝ հաւերը խլուշտ-խլուշտ կշկշալու են: Պատերի տակ հնդկահաւերը կտցելու են կանաչը: Հնդկահաւերը, որ կնոջս համար կենդանի թխիչ (ինկուբատոր) են, ու նա ամէն մէկի տակ երեսուն, յիսուն հաւի ձու է խցկելու, թուխս դնի: Ճտերի առատութիւնից բակը նման է լինելու խատուտիկների դաշտի: Սովածանալիս նրանք ծկրտալու են, ու էնքան շատ են լինելու, որ չի նկատուելու կաշաղակի թոցրածը: Առաւօտեան հէնց դարպասը բացւի՝ կով ու ոչխար իրար հրմշտելով վազելու են դուրս, հաւ ու ճիւ վախեցած օդ են թռչելու նրանց ոտքի տակից: Բա շո՛ւնը... մարդաբոյ (մարդահասակ) գազան, քամու վրայ էլ է հաչելու... Տո՛ւն, որը կառավարելն աւելի դժուար է լինելու, քան պետութիւնը:

- Բայց մինչեւ ե՞րբ... կեանքն անցնում է, ախր: Ախր տասներեք տարի...

Քսա՛ն: Նա իր տունն ամառնէ քսան տարում:

Տան վերին անկիւնի քարը ընկաւ այդ դէպքերից ուղիղ տասը օր առաջ:

- Չեչաքար էր,- քմծիծաղ տուեցին մարդիկ,- թոքերը բաց... քամի ու բուք հազար կողմից մտել ծակոտիների մէջ, քաշքշելով՝ խարխլել են: Հազար ասինք՝ տունը հաճոյքի համար չէ, մի տարուայ համար չէ...

Տան պատերից քարերն ընկնում էին հատիկ-հատիկ, իրար ետեւից գլորուելով, իրար զարնուելով, չխկրտալով գնում: Գնում-գնում՝ անտառի մէջ հետքը կորչում էր. «Որսկան շուն է պէտք», - մտմտաց տանտէրը:

Թերթերն ամենեցին համազգային ուրախութիւն՝ Մեւանի ջուրը հարիւր տարի իջնելուց յետոյ ետ է գալիս, բարձրանում է: Մի մեկնաբան նոյնիսկ պնդեց, թէ Վանայ լիճը յոգնել է թուրքերին գերի մնալուց, էլ չի ուզում եւ ստորգետնեայ երակներով գալիս, լցում է Մեւանը: Մարդիկ, որ միշտ էլ վախեցել են կեանքից, արագ-արագ առափնեայ տներից փախան: Երկու օր յետոյ, երբ լիճը կլանեց արտասահմանեան բարերարների փողերով կառուցուած մեծ մայրուղին, այսպիսի հրաման տուեց պետութիւնը. «Բարձրացէք լեռները»: Հրամանի երրորդ օրը նրա տան պատերի կէսն արդէն չկար. առանց քամու, առանց բանի, իրենք-իրենց քարերն ընկնում, գլորուելով, իրար դիպչելով ու չխկրտալով հոսում էին.

- Ջրի ձայնը դրանք վաղուց էին առել:

- Երազներից կառուցուած տուն էր...- ափսոսանքով գլուխն օրօրեց գիւ-

դապետը, նորից եկաւ, շրջկենտրոնում բնակարան առաջարկեց:

- Երեխէքը կը գան,- կնոջն ու երեխաներին ուղարկեց,- ես յետոյ... մի քիչ աւելի ուշ...

- Տես, անխելքութիւն չանես,- գիտապետը ճանկեց երկու փոքրերի թաթիկներն ու նայեց երեք պատերազմների հերոսին,- գնանք:

Երեխաները գիտապետի բռան մէջ դասաւորում էին իրենց քրտնած մատները ու նայում էին ցած՝ ջրի մէջ ճօճուող իրենց ստուերներին:

- Լիճը քեզ կուլ կը տայ,- լացակումեց փոքր տղան,- հրեշտակների ոտնահետքերը վերադարձել են իրենց տերերի մօտ:

Երեք ահեղ պատերազմների հերոսը ոտքերը ջրի մէջ վերցրեց-դրեց.

- Ջուրը դեռ ծնկներիցս է: Ես... մի քիչ աւելի ուշ... ուղղակի յետները գնամ, ստուգեմ... վիրաւորական է, այ մարդ, փաստօրէն իմ տան պատերը ինձնից

գաղտնիք են ունեցել պահած:

Երբ հեռանում էին, երեխաները շրջուեցին ու նայեցին ետ: Լերան կատարին դիզուել էին երկնքից փախստուած, խրտնած ամպերը, ծածկել նրա պատռտած ճաղատը ու իրենց փորի տակ տաքացնում էին գագաթի յաւերժական ձիւնը, լերան խոհ ու միտք: Գեղամայ շղթայի ճակատին, հենց յօնքամիջում, երրորդ աչքի պէս բացուել էր Սեւանը, որի փէշին կանգնած էր հայրը: Նա մինչեւ ծնկները խրուած էր ջրի մէջ:

Երեխաները ժպտացին նրան, օդի մէջ թափահարեցին ձեռքերը: Մեծը քաշեց փոքրի թելից ու շրջուեցին, քայլեցին առաջ:

- Ջուրը նրա ծնկներից էր,- սնկրտացող եղբօրը մխիթարեց աւագ որդին,- դեռ ինչքա՛ն կայ մինչեւ կոկորդ:

Երեւան

ՍՈՒՍԱՆՆԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Ծնած է 1963-ին, Կարճաղբիւր. արձակագիր է: Աւարտած է Երեւանի Խ. Աբովեանի անուան մանկավարժական համալսարանի բանասիրական ճիւղը: Արժանացած է գրական մրցանակներու: Իր գործերը թարգմանուած են անգլերէնի, պարսկերէնի, յունարէնի, ռումաներէնի, ազրպէյճաներէնի, գերմաներէնի, ղազախերէնի եւ այլ լեզուներու: Իր գործերէն յիշենք՝ «Յաւերժութիւն»ը (1996), «Դարավերջի Երկուշաբթին» (2002), «Լուրեր կեանքից» (2006), «Ժառանգաբար փոխանցուող գարուն» (2007), «Խօսքը աշնան մասին է» (2009), «Քարտեզ առանց ցամաքի եւ ջրերի» (2011):

«Բ.»

ՀՐԱՉ ԲԵԳԼԱՐԵԱՆ



Ծնած է 1956-ին, Լեռնաւան, Լոռի, արծակագիր, բանաստեղծ, հրապարակախօս, պատմական գիտութիւններուն թեկնածու: Ուսանած հնագիտութիւն եւ ազգագրութիւն, մասնակցած է Հայաստանի բազմաթիւ հնավայրերու պեղումներուն: Տպագրուած գիրքեր. «Հողի կանչը» (պատմուածքներ, 1996), «Դրախտի պատուհան» (բանաստեղծութիւններ, 2006), «Մարախի տարի» (պատմավեպ, 2009), «Թլոլ Դաւիթ» (վեպ, 2009), «Հրապարակ» (վեպ, 2011):

ՍԵՒ «ՄԵՐՍԵԴԷՍԸ»

Նստել էր «նանարների» շրջապատում, լի սեղանի մօտ ու հայեացքը յառել էր պատուհանին: Արդէն մթնոլորտը շղարշ էր ապակուց այն կողմ եւ այդ շղարշը ամէն անգամուայ պէս սիրտը չէր բացում: Ամառուայ իրիկունը դանդաղ իջել, պարուրել էր կղզին եւ լիճը ապակուց այն կողմ իրենից անջատել էր մութի շղարշով: Լճի մըմունջը կար, հանգստացողների աղմկոտ լռութիւնը կար, բայց զիշերն ասես բամբակով փաթաթած լինէին: Մի տեսակ փափուկ, անատամ ու անձայն էր, իսկ դա Միերին դուր չէր գալիս: Թէ ինչու՝ չէր հասկանում: Պարզապէս զգում էր, որ

դրանից մէջն ինչ-որ անհանգստութիւն է աճում:

Կողքին նստած աղջկայ բաց ուսը տաք էր, ոտքին հպած ազդրը՝ նոյնպէս, բայց չէր հասկացել ինչու՝ տղամարդկային բնագոյն իր մէջ քնել էր մէկէն: Աղջկայ վրայից եկող օծանելիքի հո՞տն էր պատճառը, ալ կարմիր ներկած շուրթե՞րը, թէ՞ տեղի-անտեղի ծիծաղը, չգիտէր: Չգիտես ինչու ամէն ինչ մոռացած սեւեռուել էր իր տղամարդաբափ լինելու մտքի վրայ ու մեխանիկօրէն էր անում ամէն ինչ. բաժակ էր խփում, ասես չհասկանալով, բնագոյաբար կմնում էր բաժակից եւ չուզենալով

«զակուսկա» (ռուս. աղանդեր) էր անում: Մտքի մեջ արդեն որերորդ անգամ իրեն «շան քամակն» էր մտցնում բերանբացութեան համար:

Մի քանի օր առաջ վեր էր կացել, բեռով, բոխչով (կապոց) գնացել էր բանակում ծառայող տղային տեսութեան: Ծանօթ սպաների բաժինն առանձին էր վերցրել, զինուորներինը՝ առանձին: Ասել-խօսել էին տղայի հրամանատարների հետ, իսկ յետոյ, երբ ուզեցել էր հրաժեշտ տալ, թիկունքի պետն իբր ի միջի այլոց հարցրել էր.

- Բա ե՞րբ ես մի օր հրափրելու Մեւան:

- Վա՛յ, աչքիս վրայ,- անմիջապես արձագանգել էր,- երբ կամենաք՝ եկէք:

- Ի՞նչ բերենք,- նորից իբր կատակով հարցրել էր թիկունքի պետն ու ինքը նեղացել էր.

- Ի՞նչ պիտի... Եկէ՛ք, ես եմ հիւրասիրում:

- Լաւ, ուրեմն նանարները մեզ վրայ,- աչքով էր արել «կամանդիրն» (հրամանատար) ու հրաժեշտ էին տուել:

Հեռախօսի համար չէր թողել, «ժիգուլին» (փոքրիկ ընդհանրացած ինքնաշարժ) քշել, եկել էր Մեւան, մտածելով թէ խօսք էր՝ ասացին: Զբաղուած մարդիկ են, հոյ չեն գայ: Համ էլ եթէ նրանք իրենց ամէն մի խոստումը կատարեն, ո՞ր կը հասնի: Մտածել, եկել էր տուն ու գործերի արանքում մոռացել: Բայց մի շաբաթ էլ չէր անցել, երբ հեռախօսը ծվվացել էր ու թիկունքի պետի ձայնով յայտնել, թէ իրենք նանարներով հանդերձ Սաքոյի մօտ են:

- Էդ որտե՞ղ է,- միամիտ-միամիտ հարցրել էր, մտքում զարմացել, որ իր

հեռախօսի համարը գիտեն, չմտածելով, որ ելեկտրոնիկայի 21-րդ դարում իր հեռախօսի համարն իմանալը հասարակ բան է:

Ուրեմն «Սաքոյի մօտ»,- ասել էր զանգողն, ու «Էդ որտե՞ղ է»,- միամիտ հարց էր տուել ինքը:

- Զգիտե՞ս,- զարմացել էր գծի այն կողմից,- թերակղզիում:

Ու վեր էր կացել, իր ու կնոջ ստացած արձակուրդայինի մնացորդ հարիւր հազարը գրպանը դրած եկել էր նրանց գտնելու: Մտածել էր՝ էդքանը հոյ չի՞ ծախսի: Իրենք ծախսը քաշած կը լինեն, մի բան էլ ինքը կը դնի սեղանին, կ'անցնի, կը գնայ, բայց եկել տեսել էր նրանք ճաշարան (ռեստորան)-հիւրանոցի դիմաց կանգնել, իրեն են սպասում:

Մէկ, երկու, երեք... ինքն էլ հետները՝ ութ հոգի: Հաշուել էր արագ, հաշուել էր քրտինքը վրան տուած: «Բայց թէ գրպանումս հարիւր հազար դրամ կայ»,- մտածել էր խօսելուն, նրանց հետ ողջագործելուն զուգընթաց:

Հերթով նախ տղամարդկանց էր գրկել, որպէս հին ծանօթ թիֆագրել էր մէջքներին, յետոյ թիկունքի պետը առաջ էր հրել աղջկան, թէ.

- Միեր ջան, ես էլ քեզ նուէր:

- Սոֆա,- ջարդուկտոր էր եկել աղջիկն ու Միերը թելերը բացած, իր ամօթն ու անհանգստութիւնը ցրելու համար, կատակով նաեւ նրան էր գրկել:

- Մալադեց (ապրիս) Միեր,- ծափ էր տուել «կամանդիրն» ու բոլորը միացել էին նրան: Յետոյ բոլորը ներս էին մտել, սեղան զբաղեցրել, պատուիրել առատ-

առատ ու սկսել էին կերուխումը: Երբ նոր էին սեղան մստել, ձիգ ու զգաստ էին եղել՝ ամեն մեկն իր պատեանի մեջ մտած: Ինքը տանտիրոջ իրաւունքով բաժակ էր բարձրացրել ու խմել նախ հայոց բանակի կենացը, յետոյ զօրամասի հրամանատարի՝ «կամանդիրի» համար էր խմել: Մարդուն հոյ գեղեցիկ աչքերի համար չէ՞, որ գնդապետի կոչում են տալիս: «Պակովմիկ»... Ասա «պակովմիկ» ու կը հասկանաս, թէ դա ինչ բան է: Նախ ինքը, յետոյ սեղանակիցները մեկ-մեկ գովաբանել էին կամանդիրի եղած ու չեղած բարեմասնութիւնները, խելքը, տակտը (վարուելակերպ), մարդկանց, եւ յատկապէս՝ զինուորների մասին մտածելու շնորհքը: Սիւերը խմել էր նրա կենացն ու մտքից դուրս չէր եկել տղայի ընկերներից մեկի թաքուն պատմածը, թէ «կամանդիր» կոչուածն ինչպէս է նոր գնացած ժամանակ մի երկու անգամ խփել Հայկին:

Կենացների արանքում նախ խորոված էին ճաշակել, յետոյ Սեւանի սիգ (ձուկի տեսակ), յետոյ խեցգետնի խորոված (քեաբաբ) ու կամաց-կամաց բացուել էին, կապերը թուլացրել: Ասես դիմակները մի կողմ էին թռել, զսպաշապիկները համազգեստների հետ հանել, զգել էին աթոռների թիկնակներին ու թեժացել էր խնճոյքը (քէֆը):

Թիկունքի պետն այնպէս էր ուտում, ասես կեանքում հաց ու միս չէր տեսել, կամ քաղցած էր եղել մի ամբողջ յաւերժութիւն: Ծամում էր պատառը եւ կուլ էր տալիս օղիով (արաղով):

- Ախպեր, եթէ մարդ հենց նոր կերած լինի ու Սեւան գայ, ախորժակն այնպէս կը բացուի, ասես մի տարի հաց չի

կերել:

- Անուշ լինի, պարոն կապիտան,- ժպտում էր ինքը,- մեր ամեն ինչն է համով. հացը, ջուրը, օղը...

- Էդ վերջինը՝ հաստատ,- փաթ ընկած լեզուով հաստատում էր կամանդիրն ու թելը, ասես անտէր գերան, դնում էր կողքին նստած աղջկայ ուսին: Աղջիկը ցոյց էր տալիս՝ իբր հաճելի է, բայց զգացում էր, որ նեղում է:

Իր կողքին նստած աղջիկը սեղմում էր իրեն եւ տեղի-անտեղի ծիծաղում էր: Դրանից սիրտը նեղում էր, բայց մտքում յանդիմանում էր ինքն իրեն. «Ի՞նչ ես խլուշտ-խլուշտ լինում թամբ չտեսած ձիու պէս: Յոյց տուր իբր քեզ համար «լեւի գնալը սովորական բան է»:

Եւ ասում, խօսում, ծիծաղում էր, փորձում մտովի տաքացնել իր մեջ քնած տղամարդուն ու չէր կարողանում:

- Քեզ ի՞նչ պատահեց, Սիւեր,- ժամանակ առ ժամանակ հարցնում էր ինքն իրեն, հարցնում էր մտքում եւ մտքում էլ պատասխանում էր. «Զահրումար պատահեց, ամեն թոչուն իր երամն ունի ու սա քո երամը չէ: Բերել ես, էսքանին պատիւ ես տալիս, իսկ ի՞նչ գիտես, տղայիդ յետոյ լաւ կը նայե՞ն»:

Կէսգիշերին մօտ ամեն մեկն իր աղջկայ հետ առանձնացաւ: Ինքը բաց պատշգամբում կոնեակ էր խմում կումկում եւ ժամանակ առ ժամանակ ձեռքը գրպանն էր տանում ու շօշափում էր հինգ հատ քսան հազարանոցները:

«Կը հերիքի՞ տեսնես», - հարցը ելնում, բռնում էր կոկորդը, բայց Սիւերն ամեն անգամ մի կում կոնեակ էր լցնում

այդ մտքի գլխին ու մտատանջութիւնը տեղի էր տալիս առժամանակ: Աղջիկը նոյնպէս կոնեակ էր խմում ու լուռ հետեւում էր իրեն: Չէին խօսում, ինքն ականջը լճի ձայնին էր պահում ու մէկ-մէկ աչքի պոչով նայում էր աղջկան:

- Յետո՞յ,- վերջապէս հոգոց հանեց աղջիկը,- էսպէս էլ պիտի անցկացնե՞նք գիշերը:

- Ո՞նց,- իբր ակնարկը չէր հասկացել, հարցրեց:

- Ես էսօր կո՞յս եմ մնալու,- աղջիկը բաց ու համարձակ նայում էր աչքերին:

«Թո՛ւ,- մտքում քթեց,- թո՛ւ».- ու հասկացաւ, որ եթէ նոյնիսկ ցանկութիւն էլ առաջանայ, ինքը մատով չի կաշելու նրան:

Նայում էր հեռուն, կոնեակ էր խմում ու լուռ էր: Շշմէլ-մնացել էր բոզի բաց համարձակութիւնից ու չգիտէր՝ ինչ պատասխանէր:

- Մօտս պահպանակ կայ, համ էլ ես մաքուր աղջիկ եմ,- շարունակեց Սոֆան:

«Սոֆա,- մտքում ձեռն առաւ աղջկան,- հաստատ տատիդ Սոֆիկ անունն են դրել վրադ, իսկ դու սրբագրել, ժամանակակից շոր ես հագրել ու դարձրել ես Սոֆա»,- ասաց մտքում, իսկ բարձրաձայն միայն սուրճ խմելու պէս ֆոթացրեց կոնեակը:

Աղջիկը շարունակում էր սեւեռուն նայել: Նրա կեանքում այնքան շատ տղամարդիկ էին եղել, որ հաշիւը վաղուց կորցրել էր: Նախ բարձրաստիճան փողատերերի շրջանակում էր եղել, յետոյ տարիքը ներքեւ էր հրել ու նա յայտնուել էր այս շրջապատում: Փողոցում չէր կանգնում, պարզապէս հրաւիրում էին իբրեւ թէ խնճոյքի (քէ-

ֆի): Եւ հրաւիրողները, եւ իրենք գիտէին ինչի համար եւ գիտէին՝ ինչ արժէ մի գիշերը: Փողի որոշակի մասը կազմակերպողին, մնացածն՝ իրենց: Նա իր կեանքում տղամարդկանց շատ էր տեսել եւ նրանց մտքում տարբերակելու իր սանդղակն ուներ՝ հարբած անասունից մինչեւ զգացմունքային հաւր: Իսկ այս մէկն իր դասակարգման սանդղակից դուրս էր ու աղջիկը շփոթուել էր:

- Կարող ա՞ տղամարդ չես,- նոյն անամօթութեամբ շրմփացրեց յաջորդ հարցն ու Միերի գլուխը պտտուեց այդ հարցից: Ասենք չէ, ատելի շատ հարցը տալու ձեւից, մանաւանդ, որ ամբողջ կեանքում ոչ ինքը, ոչ որեւէ մէկը չբացապատում երբեւէ նման հարց չէր տուել իրեն: Բիչ էր մնում՝ բաժակը ձեռքից վայր ընկներ: Առաջին միտքը շուրջալն ու աղջկան ապտակելն էր, բայց իրեն զսպեց, որ չասի. «Բո տեսից ու շարժուձեւից»... Արհեստական ժպիտը ծռմոեց դէմքը եւ անկախ իրենից նետեց.

- Աղջիկ,- այդպէս սաստում է դասաբանում իրենց լաւ չպահող աշակերտուհիներին,- աղջի՜կ...

- Հա, հա, հա՛,- պայթեց քրքիջը,- ոնց որ մեր ֆիզիկայի դասատուն լինես,- կարող ա՞ դու էլ ես դասատու:

Միերը լուռ էր, մանաւանդ, որ աղջիկն այդ հարցը տալիս էր որպէս յանդիմանութիւն:

- Ազգանունդ ո՞նց ա,- շուրթերն ունեցնելով առաջ եկաւ:

«Լաւ ա, բարեւում ա: Էսօր իր խելքի պատճառով յիմար վիճակի մէջ է ընկել»,- ուզում էր նրա հանգոյն պատասխանել, բայց չգիտես ինչու շուրթերից դուրս թռաւ.

- Մանուկեան:
- Ընկեր Մանուկեան,- աչքերում չա-
րաճճի ժպիտ խաղացրեց,- գուցէ օգտ-
ւէ՞ք գեղեցկուհի Սոֆայի բարեմասնու-
թիւններից:
- Սուս,- մատը շուրթերին դրեց նա,-
սուս, ւաւի լաւ է Մհեր ասա:
- Ինչի՞, վախենում ես աշակերտ-
ների իմանա՞ն:
- Չէ, պարզապէս Մանուկեանը
դպրոցի համար է, մաքուր, դեռեւս
չփչացած երեխաների շուրթերի հա-
մար: Մհեր ասա՝ պրծի:
- Հիմա որ իմացել եմ դասատու ես...
- Ի՞նչ կարելու է:
- Ինչի՞ չես մօտենում, զգու՞տմ ես,
թէ՞ վախենում:
- Ոչ մէկը, ոչ միւսը, ոչ էլ քո մտածա-
ծը:
- Բա՞:
- Դու հաւատարմութիւն բառը գի-
տե՞ս: Հա-ւա-տար-մութիւն:
- Պահ,- պայթեց աղջիկը,- սրբի՜ս
տեսէք: Թէ չէ չեմ ճանաչում ձեր ցեղը:
Հէնց մի երկու բաժակ խմում էք,
սկսում էք հարբած անասունի պէս
վրայ տալ: Նախ խնդրում, աղաչում էք,
յետոյ երբ ցանկութիւնների բաւարար-
ում եմ, սկսում էք վերելից նայել: Բա
ո՞նց, դուք փող էք տուել, մենք ապրանք
ենք: Դու էլ նոր բան ես յօրինում՝ հա-
ւատարմութիւն: Կարող ա՞, քո կինն
ինձանից լաւն ա:
- Նայած որ տեսակէտից:
- Ինձնից ջահե՞լ է, թէ՞ սիրուն,- աղջ-
կայ մէջ գլուխ էր բարձրացրել հիւան-
դագին ինքնասիրութիւնն ու ձգտում էր
ամէն գնով հրապուրել տղամարդուն:
- Ոչ ջահէլ է, ոչ սիրուն: Հիմա տա-

- րիքն իրենն արել է, հոգսերը, ցաւերը
մարմինը տեսքից զցել են, բայց ես
նրան դաւաճանել չեմ ցանկանում, քա-
նի որ նա իմն է: Անկախ նրանից դու
դա կը հասկանաս, թէ ոչ, եղածն այդ է:
- Մի գիշերն ի՞նչ կարող է անել:
 - Կեանք տեսած կին ես, չե՞ս հաս-
կանում: Մէկն ու հազարն այս դէպքում
միեւնոյնն են:
 - Որ էդպէս է, դու ի՞նչ գործ ունես
սրանց հետ,- զարմացաւ աղջիկն ու
ծխախոտ կպցրեց:
 - Հայկը,- հոգոց հանեց Մհերը:
 - Հայկն ո՞վ է,- չհասկացաւ աղջիկը:
 - Տղաս բանակում է... Ծառայում է ու
ես ուզում եմ, որ նրա համար ծառայու-
թիւնը մի քիչ հեշտ անցնի: Ուզում եմ,
որ գոնէ չնեղեն, գլխին մի բան չսար-
քեն... Չասաց նրան ծեծելու մասին:
Ասէր, որ ի՞նչ, մանաւանդ, որ այդ մա-
սին տղան չէր ասել իրեն:
 - Ես էլ կարծեցի՝ փողատէր հոպար-
ներից ես,- ծուխը ներս քաշեց աղջիկը:
 - Հիմա հիասթափուեցիր,- հաստա-
տելով ասաց նա, քո գիշերուայ գինն
ասա՝ տամ:
 - Չէ, մենք Ժորայի հետ գործ ու-
նենք:
 - Ժորան...
 - Կամանդիրը,- ճշդեց աղջիկը,- դու
դրա հետ գործ չունես: Ես խաբեբայ
չեմ, ես գործի մարդ եմ: Զարմացա՞ր:
Մեր մէջ ազնիւ մարդիկ ւաւի շատ են,
բան...
 - Յետոյ առանց հանուելու իրեն զցեց
մահճակալին ու գլուխը թեք դրած
պատշգամբի բաց դռնից նայում էր, թէ
Մհերն ինչպէս է կոնեսակ ւաւեացնում
բաժակի մէջ ու խմում է կում-կում:

- Լսիր,- ձայն տուեց մի քիչ թախ-
ծոտ,- էսքան ծախսը ո՞նց ես փակելու:
Սեղանի, սենեակների, նուագողների...

Սհերը լուռ շօշափեց քսան հազա-
րանոցները եւ հասկացաւ, որ աղջկայ
հարցը ճիշդ է: Բայց ձայն չհանեց: Հոյ
չէ՞ր ասի՝ իմ ու Աննայի արձակուրդա-
յինը...

- Հը՞,- չէր հանգստանում աղջիկը:

- Մօտս կայ,- ասաց պոռշը կծելով:

- Ինչքա՞ն:

- Հոգիս հանեցիր,- գայրացաւ,- ի՞նչ
ես ուզում: Մի բան կը մտածեմ: Իմ ու
կնոջս արձակուրդայինից մի հարիւր
հազար դրամ կայ: Չհերիքի՝ մի բան կը
մտածեմ, եսի՞մ: Հոյ հաւատաքննիչ
չե՞ս,- տնքաց քթի տակ:

Լռեցին: Սհերը թիկունքով զգում էր,
որ աղջիկը քնել է: «Չմքսի՞», - անցաւ
մտքով, բայց չուզեց մօտենալ: Շուռ
եկաւ, նայեց: Աղջիկը հաւասար ու
հանդարտ շնչում էր: Քնած ժամանակ
նա նոյնիսկ մի քիչ անմեղ ու գեղեցիկ
էր թուում: «Տեսնես ո՞նց է յայտնուել էս
շրջապատում», - մտածեց տրտում:

Հեռում հորիզոնն ընդհատում էր
լեռներով: Լճի ջրերը զարկում էին այս
ափին, յետոյ ետ էին վազում ու լիզում
էին միւս ափը: Հասկանում էին, որ
ափին խփելով ազատուել չեն կարող եւ
իրենք ազատուելու մէկ հնար ունեն՝
գոլորշիանալով երկինք բարձրանալը:
Թէ բախտները բերի՝ քամի լինի, ամպը
կը քշի լճից հեռու եւ կը ցողուն դաշ-
տերի վրայ, գուցէ որեւէ ծաղիկի անուշ
աչքի մէջ արցունք դառնան կամ մի
ծառի սրտում՝ աւիշ:

Նայում էր ու մտածում, թախիծով.
«Ուրիշները հեշտ ապրում, նոյն հեշ-

տութեամբ էլ մեռնում են: Ամբողջ օրը
բլոտ (թոթախաղ) են խաղում տաղա-
ւարում, թէ պատահում է՝ «լեւի» էլ են
գնում, կամ պարզապէս պարծենում են,
թէ գնացել են ու եսիմ քանի տարեկան
աշխարհը դրանից չի քանդում: Իսկ
դու կեանքիդ մէջ ոչ «լեւի» գնացիր, ոչ
կարգին «պռաւի», կեանքդ մի աչք
ճպելու չափ արագ անցաւ ու էդ կեան-
քից բան չհասկացար: Կեանքը քեզ
համար միայն պարտականութիւն
եղաւ»:

Իրեն մտրակելով նախատում էր
ներսի քննադատը: Եւ Սհերը հասկա-
նում էր, որ եթէ վերադարձած տղա-
մարդկութեան բերանը սանձ չդնի, իր
մէջ ջարդուելու, փշրուելու է մի շատ
կարեւոր բան՝ յարգանքը սեփական
անձի նկատմամբ: Իր մէջ մի փոս է գո-
յանալու, որ յետոյ փորձելու է լցնել
մնացած ողջ կեանքի ընթացքում ու չի
կարողանալու:

«Օրիո՞րդ ես, ի՞նչ ես: Թէ՞ դու միւս
տղամարդկանցից լաւ ես», - հանգիստ
չէր տալիս ձայնը:

- Թո՛ւ,- մտքի դէմ կռուելով
քրթմնջաց նա եւ բաժակի մէջ էլի կոն-
եակ լցրեց:

Աղջիկը խլվւաց, շարժուեց տեղում:

- Մէջքիս մի բան քից (դիր), խնդրում
եմ,- ասաց այնպէս, ինչպէս հազար
տարուայ կինն իր ամուսնուն կ'ասէր:

- Ինչի՞,- ինքնաբերաբար արձա-
գանգեց Սհերը:

- Երիկամի վիրահատութիւն եմ տա-
րել երեք ամիս առաջ,- տնքաց աղջի-
կը,- ուզու՞մ ես սպին ցոյց տամ:

- Չէ,- ձեռքը թափահարեց ու տխրե-
լով մտածեց. «Սա ինձ լրիւ բոյսի, չէ,

խոտի տեղ է դրել»։ Գիտեր, որ եթե տեսնի, շօշափի, դժուար թե իրեն զսպել կարողանայ։

Արդեն լուսանում էր։ Ժամացոյցին նայեց՝ հինգն անց երեսուն րոպե էր։ Հիմա կինը հաստատ սպասում է։ Գիտի, որ ինքը խմող չէ, գիտի՝ վատ բան անող չէ, բայց փորձանքը հոյ չի՞ հարցընում՝ դու ուզում ես, թե՞ չէ։ Համոզուած էր, որ իր մօտի հարիւր հազար դրամն իսկի ծախսի կեսն էլ չէր փակի եւ մտմտում էր անելիքը։ Գուցէ պարտք վերցնի մէկնումէկից։ Անձնագիրը կը թողնի ռեստորանում (ճաշարան), կը գնայ, մի բան կ'անի։ Հիմա հարկաւոր է այնպէս անել, իրեն այնպէս պահել, որ լաւը վատի չփոխուի ու Հայկը շահելու փոխարէն չտուծի։

Մութնուլուսի հետ ճայերը լճի վրայ նստած սպասում էին, սպասում էր ջուրը, քամին շունչը պահած սպասում էր։ Նրանք սպասում էին արեւագալին։ Արեւին էր սպասում նաեւ Միւրը։ Առաջուայ պէս կանգնել էր պատշգամբի բազրիքի մօտ եւ շարունակում էր խմել։ Խմում ու նայում էր լճին։ Չարմանում էր, որ իր նման չխմողը համարեա մի շիշ դատարկել է, բայց չի բան զգում։

Թիկունքով զգաց, թէ աղջիկն ինչպէս շարժուեց, արթնացաւ, ելաւ, նստեց տեղում։ Մնաց այդպէս մի քիչ, յետոյ գուգարան մտաւ, դուրս եկաւ ու կօշիկների կրունկները յատակին քռացնելով մօտեցաւ իրեն։

- Մի բաժակ էլ ինձ լից։
- Երիկամին վատ է կոնեակը,- ասաց խրատելով։
- Լից,- ձեռքը թափ տուեց արհա-

մարհանքով,- բժիշկներին լսես՝ օրէ լուս պիտի մեռնես։

Շի տակ մնացածը դատարկեց նրա բաժակի մէջ եւ առանց աղջկայ կողմը նայելու իր բաժակի մէջ մնացած հեղուկը գլխին քաշեց։

- Ասեմ՝ իմացիր, ես այս արհեստն իմ կամքով չեմ ընտրել,- սկսեց աղջիկը։

- Մի պատմիր,- ձեռքով արգելեց,- մի պատմիր,- ես քեզ համար ո՞վ եմ։ Մի տղամարդ, որ իրեն ընձեռած հնարաւորութիւնից չի օգտւում։ Մի քիչ յետոյ կը լուսանայ ու ամէն մէկս կը գնայ իր ճանապարհով... Ի՞նչ կարիք կայ։

- Մի տղայ ունեմ,- նրա ասածին ուշադրութիւն չդարձնելով շարունակեց,- տաս տարեկան է ու ես չգիտեմ, թէ նրա հայրն ով է։

Լուսանում էր, Միւրը չէր նայում կողքին կանգնած կնոջն ու չէր ցանկանում նրա պատմութիւնը լսել։

- Մի պատմիր,- նորից կտրեց չարութեամբ,- ես չեմ ուզում լսել։

- Ինչո՞ւ,- զարմացաւ կինը,- ինչո՞ւ։ Պատմեմ՝ թեթեւանամ։

- Քեզ ի՞նչ կայ։ Դու կը պատմես, թիւթեռի պէս մի տղամարդու գրկից միւսի գիրկը կ'ընկնես, իսկ ես... չեմ մոռանայ։ Իմ հոգսերն ինձ լիովի բաւական են գիշերները չքնելու համար։ Համ էլ հոյ ես քո խոստովանահայրը չեմ։ Խոստովանե՞լ ես ուզում, եկեղեցին մի քիչ այն կողմ է։

Աղջիկը լռեց։ Որոշ ժամանակ նայում էին լճին, ճայերի թռիչքին, արդեն դուրս եկած արեւի խաղին, ջրերի ծփանքին ու ամէն մէկն իր մտքերի հետ էր։

- Դու իմ մէջ վերականգնեցիր հաւա-

տը,- կիսաձայն ասաց աղջիկը:

Միտերը լուռ էր: Ի՞նչ խօսէր կամ ի՞նչ ասէր: Մի թաքուն միտք հանգիստ չէր տալիս. բա որ աղջիկը միւսներին պատմի, որ գիշերն իրենց մէջ բան չի պատահել: Հաստատ ուրիշ տեսակ կը նայեն իրեն: «Թքած,- ինքն իրեն հակադարձում էր մտքում,- թքած»:

Իսկ աղջիկը շարունակեց.

- Մինչ քեզ հանդիպելը ես համոզւած էի, թէ աշխարհի բոլոր տղամարդիկ նոյնն են՝ պարծենկոտ, ինքնահաւան, քանի դեռ իրենց ուզածին չեն հասել՝ շողոքորթ, իսկ հասնելուց յետոյ՝ բութ ու անտարբեր:

- Ի՞նչ գիտէիր: Դու աշխարհի բոլոր տղամարդկանց ճանաչո՞ւմ ես, որ ասում ես:

Միտերը հակադարձեց թոյլ. կիսատ մի ժպիտ խաղացնելով դէմքին:

- Թէ բոլորին չէ, գոնէ նրանց կեսի հետ հաստատ գործ եմ ունեցել,- նորից իր սովորական շապիկի մէջ մտաւ աղջիկն ու Միտերը նորից տհաճութիւն զգալով պարփակուեց սեփական պատեանում:

...Նախ հրամանատարը դուրս եկաւ, աչքը յառեց երկնքին, յօրանջեց, մի քիչ ձգմզուեց ու ժամացոյցին նայելով անհանգստացաւ.

- Ուշացանք:

Յետոյ արթնացան միւսները, հրամանատարի նշանով արագ-արագ հաւաքուեցին, նախաճաշից ու «պախմէլից» հրաժարուեցին ու հրաժեշտ տուեցին Միտերին:

- Միտեր ջան, լաւ մնա՛, էլի կը հանդի-

պենք,- նրա թիկունքին թփթիացրեց «կամանդիրը»:

Նստեցին մեքենաները: Մեկ «մերսեդէսը» գնաց մի տասը մեթր եւ կտրուկ արգելակեց: «Տեսնես հիմա՞ ինչ պատահեց», - անհանգստացաւ Միտերը: Մեքենայից իջաւ Սոֆան ու վազեկազ մօտեցաւ: Պինդ ու տաք գրկեց Միտերին ու ականջին շնչաց.

- Իսկական անունս Եսթեր է,- ասաց Միտերի վերնաշապիկի գրպանն ինչ-որ բան դնելով եւ ընկերուհիների ուրախ քրքիջի ուղեկցութեամբ ետ վազեց ու մեքենայ մատեց:

- Երեւի լաւ տղամարդ էր, հա՞,- հետաքրքրուեց աղջիկներից մէկը:

- Չտեսնուած,- շուրթերը չպպացրեց նա:

Միտերը կանգնել, շշմած նայում էր մեքենաների հետեւից, յետոյ ասես ուշքի եկաւ ու յիշեց, որ աղջիկն իր գրպանն ինչ-որ բան է դրել: «Տեսնես էլի ի՞նչ օյին է խաղացել», - մրթմրթաց դժգոհ ու մատներով գրպանից դուրս քաշեց փաթեթը: Փող էր:

- Եա՞,- զարմացաւ բարձրաձայն եւ մեխանիկօրէն սկսեց հաշուել: Հինգ հատ տաս հազարնոց...

Առաջին միտքը եղաւ ձայն տալ, մեքենայի հետեւից վազել ու փողը վերադարձնել, բայց առաջին քայլից յետոյ կանգ առաւ: Մեկ «մերսեդէսը» «հազար բացած» սլանում էր Մեւան-Երեւան մայրուղիով:

Երեսան, 2013



ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՀԻՆ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Մինչև մեր դարու սկիզբը, թատրոնի ծննդեան ժամանակաշրջանը կը նկատուէին Ք.Ա. չորրորդ եւ երրորդ դարերը, երբ հին Յունաստանի մէջ գինիի չաստուած Տիոնիզոսի նուիրում տօնակատարութիւններուն ընթացքին կը կազմակերպուէին թատերական ներկայացումներ: Պեղումներ յայտնաբերեցին կորսուած քաղաքակրթութիւններու մշակութային կեանքի մասին տուեալներ, եւ մանաւանդ կարելի եղաւ կարդալ հին արձանագրուած մատեաններ, փաստուեցաւ, թէ Ք.Ա. իններորդ դարուն, հին ազգերու մէջ կատարուած ծիսական պաշտամունքային արարողութիւններու առանցքը ԹԱՏԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ էր: Հին եգիպտական, ասորական, բաբելոնական, նաեւ հայկական հասարակարգերու մէջ բազմաթիւ էին այդ ձեւի ծիսաթատերական երեւոյթները: Բաբելոնական ձեռագիր «տախտակ» 7-րդ դար Ք.Ա.-ը լոյս տեսած է առաջին անգամ ֆրանսերէն լեզուով Inst. Intern. De Théâtre պարբերականին մէջ, եւ մեծ արժէք կը ներկայացնէ թատրոնի պատմութեան համար: Այս «տախտակ»ին անձանօք հեղինակը, զարմանալի կենդանութեամբ եւ զօրաւոր գոյներով երեւան հանած է իշխող դասակարգին յղիութիւնն ու քմայապաշտ ու ճակատագրապաշտ նկարագիրը, եւ փոխարէն ստրկամտութեան քողին տակ հարցերն ու երեւոյթները հակադիր երկու կողմերէ դիտելու եւ գնահատելու փիլիսոփայութիւնը:

Ք.Ա. 7-րդ դարուն պատկանող այս արժէքաւոր ձեռագրին տակ սիրով պիտի ստորագրէր ժամանակակից որեւէ երկրի արդի թատերագիր մը՝ օտարազգի կամ հայ:

1	
ՏԵՐԸ.-	Ստորո՛վ, պատրաստ հրամաններու:
ՍՏՐՈՒԿԸ.-	Պատրաստ եմ, տէ՛ր իմ, պատրաստ եմ:
ՏԵՐԸ.-	Անմիջապէս ձիս թամբէ, որպէսզի զիս տանի: Պալատ պիտի երթամ:
ՍՏՐՈՒԿԸ.-	Գացէ՛ք, տէ՛ր իմ, գացէ՛ք: Հոն պիտի գտնէք ձեր փափաքները այնքան առատ, որ պիտի շուարիք ընտրութեան մէջ:
ՏԵՐԸ.-	Ո՛չ, ստրուկ, ո՛չ: Պիտի չերթամ:
ՍՏՐՈՒԿԸ.-	Մի՛ երթաք, տէ՛ր իմ, մի՛ երթաք: Ձեզ կ'ուղարկեն ճակատ եւ կամ որպէս պատգամաւոր՝ անտանելի երկիրներ:
2	
ՏԵՐԸ.-	Ստորո՛վ, պատրաստ հրամաններու:
ՍՏՐՈՒԿԸ.-	Պատրաստ եմ, տէ՛ր իմ, պատրաստ եմ:
ՏԵՐԸ.-	Ջուր պատրաստէ՛, անմիջապէ՛ս, որ ձեռքս լուամ: Պիտի ճաշեմ:
ՍՏՐՈՒԿԸ.-	Ճաշեցէ՛ք, տէ՛ր իմ, ճաշեցէ՛ք: Որեւէ բան մարդուս միտքը այնքան չի հանդարտեցներ եւ Արեւ աստուծոյ հաճելի չի թուիր, որքան լաւ ճաշ մը:
ՏԵՐԸ.-	Ո՛չ, ստրուկ, ո՛չ, ճաշել չեմ ուզեր:
ՍՏՐՈՒԿԸ.-	Մի՛ ճաշէք, տէ՛ր իմ, մի՛ ճաշէք: Որքան ճաշէք, այդքան կ'անօթենաք, որքան խմէք, այնքան ծարաւ կը զգաք:
3	
ՏԵՐԸ.-	Ստորո՛վ, պատրաստ հրամաններու:
ՍՏՐՈՒԿԸ.-	Պատրաստ եմ, տէ՛ր իմ, պատրաստ եմ:
ՏԵՐԸ.-	Անմիջապէս ձիս թամբէ, որպէսզի զիս տանի: Գիւղ պիտի երթամ որ սի:
ՍՏՐՈՒԿԸ.-	Գացէ՛ք, տէ՛ր իմ, գացէ՛ք: Որսորդ մը միշտ որս մը ունի, իր շունը՝ ոսկոր մը եւ իր բազէն՝ արջ մը:
ՏԵՐԸ.-	Ո՛չ, ստրուկ, ո՛չ: Գիւղ պիտի չերթամ:
ՍՏՐՈՒԿԸ.-	Մի՛ երթաք, տէ՛ր իմ, մի՛ երթաք: Որսորդ մը տուն կը վերադառնայ յաճախ նշանէն վրիպած, շունը՝ կոտրած ատամներով եւ իր բազէն՝ կոքրած կը մնայ գիւղին մէջ:
4	
ՏԵՐԸ.-	Ստորո՛վ, պատրաստ հրամաններու:
ՍՏՐՈՒԿԸ.-	Պատրաստ եմ, տէ՛ր իմ, պատրաստ:
ՏԵՐԸ.-	Կ'ուզեմ կին մը սիրել:
ՍՏՐՈՒԿԸ.-	Սիրեցէ՛ք, տէ՛ր իմ, սիրեցէ՛ք: Ան, որ կին մը կը սիրէ, կը մոռնայ իր բոլոր ցաւերը:
ՏԵՐԸ.-	Ո՛չ, ստրուկ, ո՛չ, չեմ ուզեր կին սիրել:
ՍՏՐՈՒԿԸ.-	Մի՛ սիրէք, տէ՛ր իմ, մի՛ սիրէք: Կինը դաշոյնի հարուած մըն է, մխուած մարդուս վզին մէջ:
5	
ՏԵՐԸ.-	Ստորո՛վ, պատրաստ հրամաններու:
ՍՏՐՈՒԿԸ.-	Պատրաստ եմ, տէ՛ր իմ, պատրաստ եմ:
ՏԵՐԸ.-	Ջուր պատրաստէ, անմիջապէս, որ ձեռքս լուամ: Կ'ուզեմ մատաղ մատուցանել Աստուծոյս:

ՍՐՈՒԿԸ.- Պատուական մտածում, տե՛ր իմ, պատուական մտածում: Ան, որ մատաղ կը մատուցանէ իր Աստուծոյն, կը ստանայ անկէ փառաբանութիւն, կ'արժանանայ անոր օրհնութեան:

ՏԷՐԸ.- Ո՛չ, ստրուկ, ո՛չ: Ոչ մէկ մատաղ:

ՍՐՈՒԿԸ.- Պատուական մտածում, տե՛ր իմ, պատուական մտածում: Աստուած պիտի վարժուի մատաղի եւ ձեզմէ յաճախ մատաղ պիտի ուզէ: Պիտի հետապնդէ ձեզ շունի մը նման եւ պատճառ մը պիտի գտնէ ձեզմով զբաղելու: Ձեզ երբեք հանգիստ պիտի չձգէ:

6

ՏԷՐԸ.- Ստրո՛ւկ, պատրաստ հրամաններու:

ՍՐՈՒԿԸ.- Պատրաստ եմ, տե՛ր իմ, պատրաստ:

ՏԷՐԸ.- Կ'ուզեմ կարեւոր նուիրատուութիւն մը ընել ազգիս:

ՍՐՈՒԿԸ.- Ըրէ՛ք, տե՛ր իմ, ըրէ՛ք: Ան, որ ազգին նուիրատուութիւն կ'ընէ, կը նշանակէ ազգին բարիք կ'ընէ:

ՏԷՐԸ.- Ո՛չ, ստրուկ, ո՛չ: Ոչ մէկ նուիրատուութիւն:

ՍՐՈՒԿԸ.- Ոչ մէկ նուիրատուութիւն, տե՛ր իմ, ոչ մէկ նուիրատուութիւն: Այդ մարդիկը պիտի ուտեն ձեր նուիրատուութիւնը եւ յետոյ ձեզ պիտի ատեն:

7

ՏԷՐԸ.- Ստրո՛ւկ, պատրաստ հրամաններու:

ՍՐՈՒԿԸ.- Պատրաստ եմ, տե՛ր իմ, պատրաստ եմ:

ՏԷՐԸ.- Կ'ուզեմ երկրիս յառաջդիմութեան համար աշխատիլ:

ՍՐՈՒԿԸ.- Կեցցէ՛ք, տե՛ր իմ , կեցցէ՛ք: Ան, որ իր երկրին համար կ'աշխատի ու բարիք կ'ընէ, աստուածներու կողմէ կ'օրհնուի:

ՏԷՐԸ.- Ո՛չ ստրուկ, ո՛չ: Ո՛չ մէկ աշխատանք եւ բարիք պիտի ընեմ երկրիս համար:

ՍՐՈՒԿԸ.- Կեցցէ՛ք, տե՛ր իմ, կեցցէ՛ք: Բարձրացէ՛ք սա գերեզմանին դէմ գտնուող բլուրին վրայ եւ նայեցէ՛ք հոն: Պիտի տեսնէք բազմաթիւ կմախք գանկեր, որոնք ազնուականներու եւ կամ գիւղացիներու կը պատկանին: Ըսէք ինծի, ո՞ր մէկը անոնցմէ կը պատկանի բարերարի մը եւ ո՞ր մէկը՝ չարագործի մը:

8

ՏԷՐԸ.- Ստրո՛ւկ, պատրաստ հրամաններու:

ՍՐՈՒԿԸ.- Պատրաստ եմ, տե՛ր իմ, պատրաստ:

ՏԷՐԸ.- Ի՞նչ կրնամ ընել այս պայմաններուն մէջ: Գտայ: Ջախջախել քու եւ իմ գլուխը եւ կամ ինքզինքս նետել ծովու մէջ:

ՍՐՈՒԿԸ.- Իսկապէ՞ս: Սակայն ի՞նչ գիտենք երկինքի խորութեան մասին: Ի՞նչ գիտենք երկինքի մթութեան (դժոխքի) մասին:

ՏԷՐԸ.- Այդ պարագային նախ քեզ կը սպաննեմ, որպէսզի ինծի լուրեր դրկես:

ՍՐՈՒԿԸ.- Մի՞թէ, տէրս առանց ինծի կրնա՞յ ապրիլ երեք օր:

Բարեկրնական չեռագիր «Կրիստոս» 7-րդ դար -Ք.Ա. (Լոյս տեսած է առաջին անգամ ֆրանսերէն լեզուով Inst. Intern. De Théâatre պարբերականին մէջ:

Թարգմ.՝ Պ. Ֆալլեան, քննադրիչ:

**La Cuisinière
d'Himmeler**
Franz-Olivier Giesbert
(Gallimard, 2012, pp.262)

ԹԱՐԳԱՆԱԿԱՆ

ՀԻՄԼԵՐԻ Ֆրանց-Օլիվիե Ժ ի գ ա տ ը թ ԽՈՀԱՐԱՐՈՒՀԻՆ

Հեղինակը ծնած է 1949-ին, Միացեալ Նահանգներ: Բ. Աշխարհամարտի նախօրեակին, ընտանիքը կը գաղթէ Ամերիկա: Երեք տարեկանին կը վերադառնան Ֆրանսա, Նորմանտի: Մայրը իմաստասիրութեան դասախօս է, հայրը՝ առեւտրական գծագրիչ, մասնակցած է Նորմանտիի ցամաքահանման: Տասնինը տարեկանին կ'աշխատակցի «Փարիզ-Նորմանտի» թերթին, կը հրատարակէ զրոյցներ Լուի Արակոնի, Հանրի տը Մոնթերլանի, Ժիլ Ռոմէնի, Մորիս Ժընէվուայի, Ալէն Ռոպ-Կրիյէի եւ ուրիշներու հետ: Հեղինակ է տասնեակ մը վէպերու, պսակուած՝ մրցանակներով: Ունի գիրքեր ժամանակակից քաղաքական մեծերու մասին: Մաս կազմած է մեծ թերթերու խմբագրութիւններուն կամ վարած գանոնք: Իր վերջին վէպը, «Հիմլերի Խոհարարուհին», կը կարդացուի մէկ շունչով, գրուած յուշագրական ձեւով: Քսաներորդ դարը կը վերականգնի այս վէպով, առանց կապանքի պատմագրութիւն՝ լրագրութեան սահմանին վրայ: «Հերոսուհին» հայ է, ցեղասպանութեան դժոխքէն դուրս եկած: «Հայկական ցեղասպանութեան» մասին կը գրուի, որուն հետ եւ անկէ ետք կը սկսի արտասովոր կեանքը այս հայուհիին, որ կ'ապրի հարիւր հինգ տարի, միշտ յիշելով իր ընտանիքին ողբերգութիւնը եւ կը մնայ վրիժառու: Այդ հատուածը (էջ 34-59թ) թարգմանուած է հետագայ էջերուն վրայ:

«Բ.»



ԳԻՐՔԻ ՄԱՍԻՆ ՀԻՄԼԵՐԻ ԽՈՐԱՐԱՐՈՒՐԻՆ

Այս վարպետորդի յատուկ գուարճալի հերոսապատումն է խոհարարուհի մը, որ երբեք եւ ոչինչէ վախ ունեցած է: Արտառոց եւ վայրագ տիպար մը, Ռոզ, վերապրած է վատութիւններէն այս քսաներորդ դարուն, առանց ոչինչ կորսնցնելու իր զգայասիրութենէն եւ կեանքի սէրէն: Երկու սերերու միջեւ ան ամէն ինչ կրած է. Հայկական ցեղասպանութիւնը, նացիականութեան սոսկումները, մատյական խելագարութիւնները: Բայց ամէն անգամ ալ յարութիւն առած է վերստին առաջ նետելու համար: Կրճտացնող եւ արկածախնդրական, այս գիրքը կը պատմէ արտասովոր եւ անակնկալներով լի գայթակղալի կեանքը հարիւրամեայ կնոջ մը, որ մէկ հաւատամք կը դաւանի. «Եթէ պատմութիւնը դժոխքն է, կեանքը դրախտն է»:

A propos du livre La cuisinière d'Himmler

Ceci est l'épopée drolatique d'une cuisinière qui n'a jamais eu peur de rien. Personnage loufoque et truculent, Rose a survécu aux abjections de cet affreux XXe siècle qu'elle a traversé sans rien perdre de sa sensualité ni de sa joie de vivre. Entre deux amours, elle a tout subi: le génocide arménien, les horreurs du nazisme, les délires du maoïsme. Mais, chaque fois, elle a ressuscité pour repartir de l'avant. Grinçant et picaresque, ce livre raconte les aventures extraordinaires d'une centenaire scandaleuse qui a un credo: "Si l'Enfer, c'est l'Histoire, le Paradis, c'est la vie."

Գրիգոր ՆՈՐԻԿԵԱՆ

Melancolie d'un après-midi / 100x65



ՀԻՄՆԵՐԻ ԽՈՇԱՐԱՐՈՒՀԻՆ

(Հայրուած)

ԵՐԲ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՍԵՌԱՅ

ՍԵՒ ԾՈՎ. 1915: Մեծ մայրս ամեն կողմ տխի հոտ կը տարածէր, ոտքերէն, անութներէն, բերնէն: Նոյնիսկ երբ հիմա զգալապէս նուազ կ'ուտեմ, իրմէ ժառանգած եմ այս շաքարոտ հոտը՝ որ ինծի հետեւի առաւօտէն մինչեւ երեկոյ, մինչեւ սաւաններուս տակ. Հայաստանի հոտը:

Լաւ եղանակին, ան փլաքի կը պատրաստէր շաքարուան համար: Միայն այդ բառը գրելով բերանս կը լորձունքոտի: Աղքատներու ճաշ է, որ կը պատրաստւի կարոտով, ստեպղինով եւ ճերմակ լուբիայով, զոր կը ճոխացնէ, օրուան համեմատ եւ ըստ իր փափաքին, ամեն տեսակ բանջարեղէններով: Երբեմն կաղինով եւ չամիչով: Մեծ մայրս հնարամիտ խոհարար էր:

Կը սիրէի բանջարեղէնները կեղուել կամ իր բարեացական հսկողութեամբ կարկանդակ պատրաստել: Անկէ կ'օգտուէր իմաստասիրելու կամ ինծի բացատրելու կեանքը: Յաճախ, երբ ճաշ կը պատրաստէինք, ան կը ցաւէր, որ որկրամոլութիւնը կ'առաջնորդէ մարդ արարածը. քաղցը մեր բոլորին կու տայ, կ'ըսէր, մեր կեանքի թափը, բայց երբ, դժբախտաբար, մեր ներսը չենք լսեր, մեր գերեզմանը կը փորենք:

Ան շուտով, անկասկած, իր իսկ գերեզմանը պիտի գտնէր, դատելով զանգուածեղ գաւակէն, որ հազիւ կ'անցնէր դռներէն, առանց նկատի առ-

նելու իր սրունքներու լայներակութիւնը, բայց կը մտահոգուէր ուրիշներով, ոչ ինքնիրմով, իր ամուսինին մահէն ետք ինքզինք մեռած կը համարէր եւ միայն կ'երագէր անոր միանալ երկինքի մէջ: Մեծ մայրս յաճախ կը մէջբերէր առածներ, զորս սորված էր իր մեծ մօրմէն:

Երբ օրերը դժուար ըլլային՝

«Եթէ հարուստ ըլլայի, տեսաբար պիտի ուտէի, ուրեմն շատ երիտասարդ պիտի մեռնէի: Ուստի լաւ ըրած եմ աղքատ ըլլալով»:

Երբ խօսուէր այժմեական քաղաքականութեան մասին՝

«Միշտ նուազ ուտելիք կայ երկինքի մէջ, քան սեփական բանջարանոցի: Աստղերը ոչ ոք կերակրած են»:

Երբ խօսուէր թուրք ազգայնականներու մասին՝

«Այն օրը, երբ թոյլ պիտի տան, որ գայլը պահէ հօտերը, ոչ մէկ ոչխար պիտի մնայ երկրի վրայ»:

Այդ էր, որ չէր հասկցած Օսմանեան կայսրութիւնը, որուն փլուզումը տեսայ կեանքի առաջին տարիներուս: Խօսելու ձեւ մը. իմ կորստած անկիւնս, ի հարկէ ես ոչինչ տեսայ: Պատմութիւնը միշտ կը մտնէ առանց բախելու, եւ երբեմն ալ հազիւ թէ կը նկատենք երբ ան կ'անցնի: Բացի այն պարագայէն, երբ ան ձեր վրայէն կը թաւալի, ինչ որ մեզի պատահեցաւ:

* * *

Մենք՝ հայերս, վստահ էինք մեր արդար իրաւունքին: Կը խորհէինք, որ ապրելու համար կը բաւէր ազնիւ ըլլալ: Չխանգարել: Պատերը եզերելով քալել:

Արդիւնքը տեսանք: Դաս՝ զոր սորվեցայ ամբողջ կեանքիս համար: Անոր կը պարտիմ այն չարութիւնս, որ զիս կը դարձնէ անգութ եւ անխիղճ ցեց մը, միշտ պատրաստ հակադարձել չարութիւնը չարութեամբ:

Ամփոփենք: Երբ նոյն երկրին մէջ ժողովուրդ մը կ'ուզէ սպաննել ուրիշ մը, այդ անոր համար է որ ան նոր հասած է: Կամ ան հոն էր առաջ: Հայերը աշխարհի այդ բեկորին վրայ կ'ապրէին անյիշատակ ժամանակներէ ի վեր. այդ իրենց մեղքն էր, իրենց ոճիրը:

Յայտնուած էին հոն Քրիստոսէ առաջ երկրորդ դարուն, Ուրարտուի թագաւորութեան աւերակներուն վրայ, իրենց թագաւորութիւնը երկար ժամանակ տարածուեցաւ Մեւ ծովէն մինչեւ Կասպից ծով: Արեւելքի սրտին վրայ պատմութեան առաջին քրիստոնէայ ազգը դարձած, Հայաստան դիմադրեց ներխուժումներու մեծ մասին. արաբներ, մոնկոլներ կամ թաթարներ, ճկելէ առաջ, երկրորդ հազարամեակի ընթացքին, թուրք օսմանցիներու հեղեղին տակ:

«Պարսկաստանի սատրապները ինչպէս Թուրքիոյ փաշաները, հաւասարապէս աւերեցին այն աշխարհը՝ ուր Աստուած մարդը ստեղծած էր իր պատկերով», կը սիրէր ըսել մեծ մայրս, յիշելով բրիտանացի բանաստեղծ լորտ Պայրընը, գրողի առաջին անուն մը՝ զոր իր բերնէն լսեցի:

Հաւատալով լորտ Պայրընի եւ բազմաթիւ ուրիշներու, Հայաստանի փոշի-

էն է, որ ծնած է Ադամ, առաջին մարդը, եւ այդ հողին վրայ է նաեւ, որ պէտք է տեղադրել Ս. Գիրքի դրախտը: Հոն պէտք է գտնել բացատրութիւնը այն տեսակ մը մեղամաղձոտութեան, կարօտի երանգով, որ դարերէ ի վեր կը կարդացուի հայերու նայուածքին մէջ, նայուածքը այդ ժամանակ ամբողջ ընտանիքիս, բայց ներկայիս ոչ իմ. ծանրախոհութիւնը ինծի համար չէ:

Ժամանակիս մեծ մասը զիս կրակարաններու առջեւ տեսնելով երսակներով կամ սանտալներով, պէտք չէ, որ անմշակ անձ համարուիմ: Կարդացած եմ 1915-1916-ի Հայկական ցեղասպանութեան մասին գրուած գրեթէ բոլոր գիրքերը: Առանց խօսելու միւսներուն մասին: Թերեւս իմ իմացականութիւնս բացառիկ չէ, բայց կայ բան մը, զոր այդպէս միշտ ալ չեմ հասկնար. ինչո՞ւ ոչնչացնել բնակչութիւն մը, որ ոչ ոքի համար սպառնալիք էր:

Օր մը, հարցուցի Էլի Վեզելի, որ իր կնոջ Մարիոնի հետ ընթրելու եկած էր իմ ճաշարանս: Գեղեցիկ անձնաւորութիւն մը՝ Աուռշվիցէն ճողոպրած, որ գրած է քսաներորդ դարու մեծ գիրքերէն մին՝ «Գիշերը» (La Nuit): Ինծի պատասխանեց, որ պէտք է հաւատալ մարդուն՝ հակառակ մարդոց:

Իրաւացի էր, եւ ծափահարեցի: Նոյնիսկ եթէ պատմութիւնը մեզի կ'ըսէ հակառակը, հարկ է նաեւ հաւատալ ապագային հակառակ անցեալին, եւ Աստուծոյ՝ հակառակ իր բացակայութիւններուն: Այլապէս պիտի չարժէր ապրիլ կեանքը:

Ուստի քար պիտի չնետեմ նախնիներուս: Գրաման ենթարկուելէ ետք իսլամներու կողմէ, հայերուն արգիլուե-

ցաւ զէնք կրել, մնալու համար ենթակայ կամեցողութեան իրենց նոր տէրերու, որոնք երբեմն կրնային իրենց մէկ մասը բնաջնջել կատարեալ անպատժելիութեամբ, սուլթանի համամտութեամբ:

Երկու արշաւանքներու միջեւ, հայերը զբաղած են իրենց գործերով, դրամատնային, առեւտուր կամ հողամշակութիւն: Մինչեւ վերջնական լուծումը:

Օսմանեան կայսրութեան յաջողութիւններն են, որ պատրաստած են իր անկումը: Աչքերը աւելի մեծ քան փորը, ան մեռած է իմ դարու սկիզբը, տխմարութեան, ընչաքաղցութեան եւ սոնքութեան խառնուրդէ մը: Բաւարար ձեռքեր չունէր իրեն ենթարկելու հայ ժողո-



Գրիգոր ՆՈՐԻԿԵԱՆ
Անտունի

վորդը, Յունաստանը, Պուլկարիան, Պոսնիան, Սերպիան, Իրաքը, Սուրիան եւ բազմաթիւ ուրիշ ազգեր, որոնք կ'երազէին ապրիլ իրենց կեանքը: Վերջապէս, անոնք ձգեցին զինք կծկուած իր վիճակին, այսինքն Թուրքիոյ, որ այն ատեն ձեռնարկեց իր հողամասի մաքրագործման, ցեղային եւ կրօնական՝ արմատապէս բնաջնջելով հայերը եւ յոյները: Հասկնալի է, առանց մոռնալու անոնց ինչքերու իւրացումը:

Ենթադրելով, որ քրիստոնէայ բնակչութիւնները անջատողական էին, հարկ էր զանոնք ոչնչացնել: Ըլլալով ներկայ Կովկասէն մինչեւ Միջերկրական, հայերը ենթադրաբար կը համարուէին ամէնէն վտանգաւոր սպառնալիքը, իսլամ Թուրքիոյ մէջ իսկ: Յոգնած հալածանքներէ, անոնք երբեմն կը մտածէին անկախ պետութեան մը մասին՝ Անատոլիոյ մէջ: Կը պատահէր, որ նոյնիսկ ցոյցերու դիմէին, ինչ որ իմ ծնողքս երբեք չեն ըրած:

Թալէաթ եւ Էնվեր, ինքնագոհ դէմքով մեծաքանակի երկու ոճրագործներ, կարգուկանոն պիտի հաստատէին այդ խառնակութեան մէջ: Իրենց երիտօրէրներու յեղափոխական կուսակցութեան եւ Միութիւն ու Յառաջդիմութիւն Կոմիտէի բիրի հարուածներուն տակ, թրքացումը իր ընթացքը առած էր, եւ ատիկա ոչինչ պիտի կասեցնէր:

Բայց հայերը այդ չէին գիտեր: Ոչ ալ եւ: Մոռցած էին այդ մեզի ըսել, յաջորդ անգամ պէտք է յիշել: Ուստի չէի սպասեր, որ յետմիջօրէ մը, ատելութեամբ աչքերը դուրս ինկած պոռչտացող վոհմակ մը՝ զինուած բիրերով եւ հրացաններով, հասնի մեր տան առջեւ: Յատուկ Կազմակերպութեան մոլեռանդ-

ները, ոստիկաններու աջակցութեամբ:
Պետութեան ոճրագործները:

* * *

Բախելէ ետք դուռը, յատուկ Կազմակերպութեան տեղոյն պետը, պեխաւոր գէր թեւատ մը, տունէն դուրս հանեց բռնորը, բացի ինձմէ: Փախած էի ետեւի դռնէն: Ոչ ոք նկատած էր փախուստս:

Պետը պահանջեց, որ հայրս միանայ հայ աշխատատեղերու խումբի մը, կ'ըսէր, թէ կ'ուզէր զանոնք Էրզրում տանիլ: Հայրս զիս չզարմացնող քաջութեամբ մերժեց հնազանդիլ:

- Հարկ է, որ խօսինք:

- Յետոյ կը խօսինք:

- Երբեք ուշ չէ կարենալ հասկցուելու համար եւ խուսափիլ յոռեգոյնէն: Երբեք ուշ չէ:

- Այս ամբողջ զենքե՞րով:

Որպէս պատասխան, մարդասպաններու պետը բիրով հարուած մը տուաւ հօրս, որ հռնդիւն մը արձակեց, ապա պատմութեան պարտեալներու պէս գլխահակ, գնաց եւ միացաւ խումբի վերջին շարքին:

Մայրս, մեծ մայրս, եղբայրներս եւ քոյրերս մեկնեցան հակառակ ուղղութեամբ, ուրիշ խումբի մը հետ, որ իր պայուսակներով եւ կապոցներով կարծէք կը մեկնէր երկար ճամբորդութեան:

Տունը կողոպտելէ, կահոյքը եւ գործիքները հանելէ, բոլոր կենդանիները առնելէ ետք, ներառեալ ճուղիկները, ջարդարարները ագարակը կրակի տուին, կարծէք ուզելով տեղը սրբել աղէտէ մը ետք:

Թաքստոցէս, արքայամորներու թուփերու ետեւէն, դիտեցի ամէն բան: Չէի

զիտեր որուն հետեւիլ: Վերջապէս ընտրեցի հետեւիլ հօրս, որ կը թուէր ենթակայ ըլլալ անելի մեծ վտանգի: Իրաւացի էի:

Էրզրումի ճամբուն վրայ զինեալներ շարքի կանգնեցուցին քսանեակ մը բանտարկեալները, վարսակի դաշտէ մը վար: Մահապճիռ գործադրող գումարտակի պէս կազմուած, անոնք կրակեցին խումբին վրայ: Հայրս փորձեց խոյս տալ, բայց գնդակները հասան իրեն: Քիչ մը կաղաց ապա ինկաւ: Թեւատը անոր տուաւ փրկարար վերջին հարուածը:

Ապա Յատուկ Կազմակերպութեան ոճրագործները հանդարտօրէն մեկնեցան, պարտականութիւնը կատարածի քայլուածքով, երբ իմ մէջս կ'աճէր, մեծ ցնցումի պէս, վիշտի եւ ատելութեան խառն զգացում մը, որ շունչս կը կտրէր:

Երբ հեռացան, գացի հայրիկս տեսնելու: Գետին պառկած, թեւերը խաչածէ, ան անդի աշխարհի աչքերը ունէր, ինչպէս կ'ըսէր մայրս: Անոնք ուղղուած էին բանի մը, երկնի կապոյտի ետին: Այծերը նոյն նայուածքը ունին մորթելէ ետք:

Ոչ մէկ այլ մանրամասնութիւն կրցայ տեսնել, արցունքի հեղեղ մը խանգարեց տեսողութիւնս: Համբուրելէ ետք հայրս եւ խաչակնքելէ ետք, նախընտրեցի փախչիլ. թափառական շուններու պզտիկ վոհմակ մը հաչելով կը մօտենար:

Երբ տուն դարձայ, դեռ անոր որոշ մասերը մխալով կ'այրէին: Կարծէք փոթորիկ մը հարուածած էր զայն: Երկար կանչեցի կատուս, բայց ան չպատասխանեց: Եզրակացուցի, որ հրդեհին մէջ մեռած էր: Կամ պարզապէս

փախած էր. կ'ատեր աղմուկը եւ խանգարումը:

Չգիտնալով ո՛ր երթալ, բնականօրէն գացի Էֆէնտիներու ագարակը, բայց երբ հասայ, բան մը ինծի ըսաւ, որ պէտք չէր տեսնուի: Թաքնուեցայ թաւտին մէջ՝ սպասելով, որ Մուսթաֆան տեսնեն: Ան ինծի սովեցուցած էր նոր ածած հաւուն ճիշը կապկել: Դեռ պէտք էր յառաջդիմէի, բայց այդ իրարու բարի լոյս ըսելու մեր ձեւն էր:

Անմիջապէս որ զինք տեսայ հաւուն ձայնը հանեցի եւ ինք ուղղուեցաւ դէպի իմ կողմն անհանգստացած արտայայտութեամբ մը:

- Քեզ պէտք չէ որ տեսնեն,- շնջաց մօտենալով: - Հայրս Երիտթուրքերուն հետ է: Խենթացած են: Կ'ուզեն սպաննել բոլոր անհաւատները:

- Հայրս սպաննեցին:

Հեծկլտացի: Նոյն ատեն ինք ալ:

- Եւ դուն ալ,- ըսաւ խեղդուկ ձայնով,- եթէ քեզ բռնեն, նոյն բախտը պիտի ունենաս: Եթէ քեզ չդարձնեն ստրուկ... Հարկ է, որ անմիջապէս շրջանէն հեռանաս: Հոս դուն հայ ես: Ուրիշ տեղ թուրք պիտի ըլլաս:

- Կ'ուզեմ գտնել մայրս եւ միւսները:

- Այդ մասին մի՛ մտածեր անգամ: Վստահաբար անոնց դժբախտութիւն պատահած է: Քեզի ըսի, որ ամէն ոք խենթացած է, նոյնի՛սկ հայրս:

Հայրը իրեն պարտականութիւն տուած էր գառնուկներուն աղբը շուրջ տասը քիլոմէթր հեռու գտնուող բանջարեղէնի մշակի մը տանիլ: Այդպէս ալ Մուսթաֆա երեւակայեց ռազմական հնարք մը, որ անկասկած փրկեց կեանքս:

Թիով խոռոչ մը բացաւ ջորիին քաշե-

լիք սայլին վրայ գտնուող սեւ եւ խոնաւ աղբին մէջ: Պահանջեց, որ կծկուիմ այդ կետոտութեան մէջ, ինծի տուաւ եղէգի երկու ճիւղեր բերնիս մէջ դնելու համար, որպէսզի շնչեմ, եւ զիս ծածկեց բահերով տաք թրիքի տակ, ուր կենդանիներ կը վխտային, որոնց ներքեւ ինքզինքս դիակի վերածուած կը զգայի:

Գերեզմանատան պահակներ կ'ըսեն, որ քառասուն օր պէտք է դիակ մը փճացնելու համար: Այլ խօսքով, որպէսզի ան հողին խառնուի, ամէն կեանք անկէ հեռանայ եւ նեխածութիւնը ցրուի: Ինքզինքս կը զգայի նոր դիակ, դեռ կենդանի. վստահ եմ, որ մահ կը բուրէի:

Աղբ էիր, աղբ պիտի դառնաս, այս է որ քահանաները պէտք էր որ մեզի ըսած ըլլային, փոխանակ տեսարար խօսելու փոշիի մասին, որ հոտ չունի: Հարկ է, որ ամէն բան գեղեցկացնեն:

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ

Սեւ Ծով, 1915: Ամէն բանի կը վարժուիմ: Նոյնիսկ կեղտաջորի: Կրնայի օրեր մնալ այդ աղբին մէջ առանց որեւէ բան ընելու, եթէ ոչխարին մէզը զիս փոխակերպած չըլլար, զլուխէս մինչեւ ոտքերս, լայնածիր քերուրտութի դաշտ դարձած էի: Ժամանակ մը վերջ, ինքզինքս դժոխքի դատապարտած կ'ըլլամ քերուելու իրաւունք ունենալու համար:

Արգիլուած էր շարժիլ: Ճամբայ ելլելէ առաջ, Մուսթաֆա զգուշացուցած էր. պետական ոճրագործները, որքան ալ բութ ըլլային, կրնային քննել աղբը, ստուգելու համար, թէ ի՞նչ կար անոր տակը, եթէ ցանկութիւն ունենար



սրունքները շարժելու, սուիմի հարուած մը շուտով կրնար հասնիլ, եւ այդ յաճախ չէր խնայեր: Որեւէ պարագայի, ոչ իր եւ ոչ ալ իմ կեանքս վտանգի կրնայի ենթարկել, մանաւանդ այս դրուագէն ետք անխուսափելի էր մեր ամուսնութիւնը, այդ ճակատագրուած էր:

Պահ մը սայլը հեռացաւ ճանապարհէն եւ կանգ առաւ: Խորհեցայ, որ քերւորտութիւն պիտի նուագէր, բայց այդպէս ալ չեղաւ: Հիմա որ չէի ցնցուեր հաւնոցի նման թրիքի դագաղիս մէջ, ինծի կը թուէր, որ ան կը թափանցէր մարմինիս մէջ անոր խառնուելու համար: Կրկնապէս աւելի ունէի ողջ փտելու զգայնութիւնը:

Երբ սայլը միշտ անշարժացած էր, որոշեցի դուրս գալ աղբէս: Ոչ մէկ անգամով, հասկնալի է: Դանդաղօրէն, ինչպէս հարսնուկը դուրս կու գայ խոզակէն, կեղտոտ եւ նողկալի հարսնուկ մը: Մութ էր եւ աստղազարդ գիշերը երկրի վրայ կը տարածէր լոյսի եւ լռութեան այն խառնուրդը, որ իմ աչքիս Տիրոջ դրսեւորումներն էին աշխարհի վրայ, որոնց վրայ հետագային պիտի գումարէի Պախի, Մոցարթի կամ Մէնտելսոնի երաժշտութիւնները, կարծէք անոնք գրուած ըլլային իր իսկ կողմէ:

Ջորին անյայտացած էր, եւ, ըստ երեւոյթին, նաեւ Մուսթաֆան: Երբ սայլէն իջայ, լուսնի լոյսին տակ, զայն ճամբեզրին գտայ, սեւցած արեան լիճի մը

մէջ, թելերը խաչաձեւ եւ կոկորդը կտրուած:

Համբուրեցի ճակատը, ապա բերանը, փղծկելէ առաջ իր դէմքին վրայ, ուր կ'երեւար այն զարմացումը՝ որ յատուկ է բոլոր անոնց, որոնք անակնկալօրէն կը մեռնին: Չէի գիտեր, որ այդքան արցունք կարելի էր ունենալ:

Երեւակայեցի պահ մը, որ թուրք ոստիկանները, նման անոնց, որոնք տարած էին ընտանիքս, Մուսթաֆան կեցուցած էին քննութեան համար, եւ ինք անոնց հետ գէշ խօսած էր, ինք այդպէս էր: Այդ մագոտ եւ սեւուլիկ տղան կրնային հայ համարած ըլլալ, եւ թերեւս ալ այդպէս էր՝ առանց գիտնալու:

Վիշտս իր գագաթնակէտին հասաւ, երբ անդրադարձայ, որ ինք եւս, ինչպէս հայրիկս, պատշաճ գերեզման մը պիտի չունենար, եւ պիտի բզքտուէր լորձնոտ ժանիքներով եւ ժանտ դունչերով անտէր շուներու կողմէ, որոնք նախորդ օրուրնէ ի վեր խրախճանք կ'ընէին շրջանին մէջ: Անկարելի էր զայն թաղել: Ջորիին հետ, այդ ոճրագործները գողցած էին նաեւ սայլին մէջ գտնուող քահր եւ երկժանին:

Չայն ճանապարհէն հեռացնելէ եւ խտով ծածկելէ ետք, երկար ժամանակ վագեցի դաշտերուն մէջ մինչեւ Սեւ ծով, որուն մէջ նետուեցայ լուացելու համար: Ամառ էր, եւ ջուրը գաղջ: Ջորին մէջ մնացի մինչեւ լուսաբաց, մարմինս շփելով եւ մաքրելով:

Երբ ծովէն ելայ, ինծի կը թուէր, թէ դեռ թրիք, մահ եւ դժբախտութիւն կը հոտէի: Ժամեր քալեցի եւ հոտը չդադրեցաւ զիս հետապնդելէ, հոտ՝ զոր վերագտայ կէսօրէ ետք, երբ կը քալէի գետի երկայնքով, տեսնելով, որ ան կը տանէր

մարդկային գէշեր:

Այդ հոտը ինձմէ երբեք չհեռացաւ եւ նոյնիսկ լոգանքէս ետք, ինքզինքս աղտոտ կը զգամ: Դուրսը, բայց նաեւ ներսը: Այս սովորաբար կը կոչուի վերապրողի յանցաւորի զգացում: Բացի անկէ, ինչ կը վերաբերի ինծի, կային ծանրացնող պարագաներ. փոխանակ մտածելու մերձաւորներուս մասին եւ աղօթելու անոնց համար, յաջորդող ժամերս անցուցի փորս լեցնելով: Կը խորհիմ, որ կեանքիս մէջ երբեք այդքան չեմ կերած: Մանաւանդ՝ ծիրան: Երբ երեկոն հասաւ, փորս ուռած էր յղի կնոջ մը պէս:

Հոգեբանները պիտի ըսեն, որ այդ ձեւ մըն էր մղձաւանջս յաղթահարելու: Պիտի սիրէի հաւատալ, որ անոնք ճիշդ ըլլան, բայց, ըստ ինծի, կեանքի սէրս աւելի զօրաւոր եղաւ միւս բոլոր բաներէն, ինչպէս միշտ, ողբերգութիւնը, որ հարուածած էր մերձաւորներս եւ իմ մեռնելէ վախս: Ես նման եմ այդ անմեռ ծաղիկներուն, որոնք արմատ կ'արձակեն կրաղիսէ պատերու վրայ:

Բոլոր զգացումներէն, որոնք զիս կը խռովէին, միայն ատելութիւնը չէր տիրապետուէր այդ կեանքի թափով, անկասկած անոր համար, որ անոնք չէին շփոթուէր. կ'ուզէի ապրիլ օր մը վրէժ լուծելու համար, փառասիրութիւն՝ որ նոյնարժէք է ուրիշի մը հետ, եւ եթէ նկատի ունենամ տարիքս, ընդհանրապէս յաջողած եմ:

Յետմիջօրէին հանդիպեցայ այն արարածին, որ պիտի փոխէր ճակատագիրս եւ ինծի պիտի ընկերանար ամէն վայրկեան յառաջիկայ տարիներուն: Բարեկամուիիս, քոյրս, մտերիմս: Եթէ մեր ճանապարհները հանդիպած

չըլլային, հաւանօրէն մեռած պիտի ըլլայի, կրծուելով ոխերէս, ինչպէս՝ ոջիւները:

Ան գթոր (*) մըն էր: Անոր վրայ քալած էի: Իր մարմնին վրայի դեղին բիծերը աչքառու կերպով սուր էին, եւ հետեցուցի, որ դեռ շատ երիտասարդ էր: Առաջին նայումսով իսկ զիրար հասկացանք: Իրեն ըրածէս ետք, բոլորովին դողդջուն դարձած էր, եւ իր աչքերուն մէջ կարդացի, որ ինծի պէտք ունէր: Բայց ես ալ իրեն պէտք ունէի:

Ձեռքս գոցեցի իր պզտիկ մարմնին վրայ եւ շարունակեցի յառաջանալ: Արեւը դեռ բարձր էր երկինքին մէջ, երբ պառկեցայ ծառի մը տակ: Հողին մէջ փոսիկ մը բացի հոն դնելու համար գթորը եւ քար մը դրի վրան, յետոյ քունս տարաւ:

«Ոտքի՛ ել:»

Ձիատոր ոստիկան մը զիս արթնցուց: Պեխատոր մը՝ խոզի գլուխով, տխմար եւ ինքնագոհ խոզ մը, ինչ որ նուազ հազաւդէ պէտք է այդ տեսակին մէջ՝ քան մեր:

«Հա՞յ ես», հարցուց:

Գլուխս բացասական կերպով շարժեցի:

«Հա՛յ ես», բացազանչեց, տխմարներու պէս՝ երբ կը խաղան լաւատեղեակի դեր:

Ինծի յայտնեց, որ թուրք ազարակապանուի մը զիս տեսած էր իր այգիէն ծիրան գողնալու պահուս: Բռնու ցանկութիւն ունէի ուժերս հաւաքելու եւ փախչելու, բայց մտածեցի: Ան իր զենքով կը սպառնար, եւ անոնցմէ էր, որ կրնար զայն գործածել, այդ կը կարդացուէր իր դատարկ աչքերուն մէջ:

- Թուրք եմ, ըսել փորձեցի, Աստուած մենք է:

Ուսերը թօթուեց:

- Եթէ այդպէս է, արտասանէ Գուրանի առաջին տունը:

- Դեռ չեմ տորված:

- Կը տեսնես որ հա՛յ ես:

Ոստիկանը ըսաւ, որ ձիուն վրայ իր առջեւ նստիմ, ինչ որ ըրի առնելէ ետք գթորս, եւ այդպէս գացինք, ձիուն քայլերով մինչեւ ՄՅԿ-ի կեդրոնը, Միութիւն եւ Յառաջդիմութիւն Կոմիտէի: Երբ հասանք, գոռաց.

- Սալիմ պէյ, քեզի նուէր մը բերած եմ:

Երբ բախտաւորի ատամներով այդ անուան համապատասխանող ժպտուն մեծ տիպար մը դուրս եկաւ, ոստիկանը զիս նետեց անոր ոտքերուն առջեւ, ըսելով.

- Տե՛ս ինչ բերած եմ քեզի, չկատակեցի քեզի հետ, հէ՛, Աստուած պահէ քեզ. իշխանուի ըլլալու համար, իշխանուի մը:

Այդ օրը հասկցայ, որ գեղեցիկ էի: Ես ինծի ըսի, որ նախընտրելի էր այդպէս չմնալ. հիմա որ Մութաֆան մեռած էր, այդ բանի չէր ծառայէր, եւ աւելին, կը խորհէի, որ այդ ինծի նեղութիւններ պիտի պատճառէր:

ԲԱՐԻ ԳԱՆՈՒՍ

ՊԶՏԻԿ «ՀԱՐԷՄ»Ի ՍԷՋ

Տրապիզոն, 1915: Երեկոյեան, Սալիմ պէյ զիս տարաւ իր տունը: Տրապիզոնի փողոցներուն մէջ մենք իրարանցում մը կը տիրէր: Կարծէք ամէն ոք տուն կը փոխադրէր:

Հանդիպեցանք պառաւի մը, որ սեղանի սպասներու իրմէ աւելի ծանր պահարան մը կը փորձէր փոխադրել.

այնպես որ երկու քայլէ ետք կանգ կ'առնէր շունչ առնելու համար, գոյգ մը՝ պահարան մը շալկած կը տանէր, կը հետեւէին հինգ զաւակները՝ անկողինով մը, սեղանով մը եւ աթոռներով, երիտասարդ մը քաշելով կը տանէր, խառնիխուռն բաներ՝ սաւաններ, գորգեր, արձանիկներ եւ մանկական խաղալիքներ: Առաջին անգամն էր որ դէմ առ դէմ կը գտնուէի մարդու ժանտատեսիլ ազահութեան դէմքին, կորաքամակ, բերանը ծռած, նայուածքը խուսափուկ, երբեմն վերացած:

Քանի մը շաբաթ առաջ, նոր տէրս համեստ եւ սոված ուսուցիչ մըն էր, որ պատմութեան դասեր կու տար գուրանական դպրոցի մը մէջ, ուր կ'ըսուի, թէ աշակերտները իր ներկայութեան կ'աղմկէին: Այն օրէն, որ դարձած էր Սիրիին եւ Յառաջդիմութիւն Կոմիտէի գլխաւորներէն մին, մէկ ամիսէնտասնհինգ քիլօ աւելցած էր եւ ձեռք բերած յաւելեալ ինքնավստահութիւն: Հասակաւոր, մեղմ նայուածքով, զոր կը հակասէր տիրական ծնօտ մը՝ ինքզինք պարտադրող:

Ջինք գեղեցիկ կը գտնէի եւ հպարտութեամբ կը բռնէի իր ձեռքը, կարծէք իր աղջիկը ըլլայի, տան ճամբուն վրայ: Եթէ մանրութենէն համար հարկ ըլլար տնտնալ, աչքերուն շուրջ աճած պզտիկ կոծիծները կրնային անհանգստացնել մաքրակրօնները, բայց գեղեցկութիւնը միշտ կարիք ունի թերիներու՝ փթթելու համար:

Բլրակի մը վրայ, քաղաքին նայող, փոքրիկ քարաշէն տան մը մէջ կը բնակէր, ուռնազարդ պարտէզի մը խորքը, ուր ծաղկած էին արմաւենիներ, նարընջենիներ, դափնեկեռասենիներ եւ Պո-

հեմիոյ ձիթենիներ, կարմրաւուն բունեքով, գլխավերելը արծաթ ծամերով: Տարիներ ետք իմացայ, որ ան սեփականութիւնը եղած էր Տրապիզոնի մեծագոյն գոհարավաճառին: Հայ մը, որ երկու օր առաջ քաղաքէն հինգ քիլոմէթր հեռու անտառ մը «աքսոր»ի դրկուած էր իր ազգակիցներուն հետ, հոն սպաննուելու համար: Սալիմ պէյ այս սեփականութիւնը գնած էր անոր կնոջմէն, ոչինչ գումարով մը, նախքան, իր չորս զաւակներով անոր «աքսոր»ի դրկուիլը ծովուն յատակը:

Ջիս առաջնորդեց վերի յարկի մեծ սենեակ մը, ուր ինձմէ աւելի մեծ վեց աղջիկներ կ'ընթերին: Սեւ կաղամբով եւ լուբիայով ապուր մը: Մերժեցի փոս պնակը, զոր ինծի երկարեց ժողատ եւ շրթնապաստակ կին մը, Ֆաթիման, որ միաժամանակ պահակ էր, մտերիմ զրուցակից եւ մամիկ: Շատ չէր խօսեր, բայց աչքերը կ'ըսէին, որ մեզի կողմնակից էր: Անմիջապէս համակրեցայ անոր:

Ինծի մետաղեայ տուփ մը տուաւ գթորիս համար: Նոյնիսկ եթէ գորտագիս իր պոչը պիտի ոլորէր անոր մէջ բաւելու համար, ան հոն անմիջապէս գոհ եղաւ, եւ աւելին՝ երեկոյեան լոգանքէն ետք անոր մէջ հող դրի, որպէսզի անոր մէջ պլլուի:

Ֆաթիմա թելադրեց գթորը կերակրել միջատներով կամ որդերով, ինչ որ ըրի յաջորդ օրերուն, անոր սննդականոնին աւելցնելով շողոտ եւ պզտիկ խղունջներ՝ որոնց համար խենթ կ'ըլլար: Առանց մոռնալու սարդեր եւ գիշերային թիթեռներ:

Ապա Ֆաթիմա զիս զգուշացուց թունաւոր հեղուկէն, յետոյ պիտի գիտնայի,

կը կոչուէր գթորին*, զոր կրնար արտադրել գթորի մորթը, երբ ան ինքզինք վտանգուած զգար: Բայց զայն ափիս մէջ պահելով, ոչինչ պատահեցաւ, թերեւս պէտք է խորհիլ, որ ինքզինք ապահով կը համարէր ինծի հետ:

Կափարիչին վրայ քանի մը ծակեր բացի, որպէսզի շնչէ, եւ իրեն անուն մը տուի, Թէօ, կտրուկ ձեւը Թէոտորա Կոմնենի, Տրապիզոնի քրիստոնէայ իշխանուհին, որուն գեղեցկութիւնը յետնորդները կը տօնեն տասնհինգերորդ դարէն ի վեր:

Գթորի իմ տուիս ինծի հետ էր ամէն տեղ, մինչեւ լուացարան: Չէի կրնար

հեռանալ Թէոյէն. ան միաժամանակ հողս էր, ընտանիքս, գիտակցութիւնս եւ միւս եսս: Յաճախ զիս կը խրատէր, եւ ես չէի վարաներ պատասխանելու: Խօսելու ժամանակ ունէինք:

Սալիմ պէյի մօտ աշխատանքը յոգնեցուցիչ չէր: Չէի հանդուրժեր Գուրանի տուներու ընթերցումը, որոնցմով մեր սկանջները կը խափանէին, ոչ ալ մնացեալը, բայց պիտի չհամարձակէի դժգոհիլ, երբ կը մտածեմ այն մանուկներուն մասին, որոնք թունաւորուեցան Տրապիզոնի հիւանդանոցին մէջ, տոբթօր Ալի Սալիպի կողմէ, առողջապահական սպասարկութիւններու տեսուչ,



Յարութիւն ԹՈՐՈՍԵԱՆ
«Հարսին յարդարում»

եւ միւսներուն, որոնք տասներկուքով կամ տասնչորսով իրարու կապուած, տարուած իրենց մայրերուն, մեծ մայրերուն եւ մեծ հայրերուն հետ, պարտադրուած քալեցին դէպի Հալէպ, ճամբան մեռնելու համար ծարաւ եւ անօթի, կամ մտրակներուն տակ իրենց պահակներուն: Առանց խօսելու անոնց մասին, որոնք դրուեցան նաւերու վրայ եւ ծովուն բացը ջուրը նետուեցան:

Շաբթուան երեկոները, յաճախ, Սալիմ պէյ եւ իր բարեկամները, կուսակցական ընկերներ, կու գային օգտուելու մարմիններէն՝ գորս կը կոչէին «պզտիկ հարէմ»: Գիտեմ, այդ ուրախալի չէր բախտակիցներուս համար, որոնք կ'երթային մէկէն միւսին, ամէն կողմէ մաքրուելու համար**, նոյն երեկոյի ընթացքին բազմաթիւ անգամներ: Պէտք էր, որ խանդավառութեամբ այդ ընէին, քրտնելով եւ հեւալով, մինչեւ ուշ գիշեր: Աշխատանքի լծուած անասուններ, որոնց մեռած աչքեր ունէին յաճախ առաւօտուն: Արհամարհոտ եւ դժուար աղջիկներ նաեւ: Ձիս կ'արհամարհէին այն մասնաւոր ուշադրութեան համար, որ տարիքիս բերումով ինծի կ'ընծայէր. վերապահուած էի տանտիրոջ, որուն բարքերը այնքան չէին խոտորած այդ բաները ինծի պարտադրելու համար: Պարզապէս կ'ակնկալէր, որ իրեն ընեմ բաներ: «Շփացում»ներ, ինչպէս կ'ըսէր Ֆաթիմա, որ ինծի սորվեցուց այդ արուեստը, որ նաեւ գիտութիւն մըն է:

«Ուշադիր եղիր ատամներուդ, կը կրկնէր ան: Ամբողջ աշխատանքդ պիտի ըլլայ զանոնք մոռցնել: Մարդիկ կը խորշին, որ զիրենք քերոցեն կամ խածոտեն: Պէտք է որ աշխատիս միայն

շրթներովդ եւ լեզուովդ՝ ծծելու եւ լիզելու համար, ներս քաշելու կարելի ամբողջ ջերմութեամբդ: Այդ ձեւով է, որ զանոնք պիտի երջանկացնես:

Ձիս կը տանէր իր աշխատասենեակը, կաշիէ բազկաթոռի մը վրայ կը նստէր, կը պահանջէր, որ ծունկի գամ, գլուխս դնեմ զիստերուն միջեւ, ապա բանամ իր տաբատին առջեւի մասը, իր գործիքը հանելէ առաջ, եւ իրեն տամ իր գոհացումը զայն լիզելով: Իր ցանկութիւնը աստիճանաբար կ'աւելնար, հծծիւնները կը դառնային մռնչիւն, եւ ձեզի չեմ պատմեր մնացեալը:

Ձինք գրգռելով մէկտեղ, ներքնապէս ամէն տեսակ անարգանքներ կ'արտաբերէի, մասնաւորաբար «սալաք» (տխմար՝ թրքերէն), կամ քունեմ քեզ**: Նոյնիսկ երբ այդ չէի կրնար, հասկնալի պատճառով, կարդալ իր մտածումները նայուածքին մէջ, վստահ եմ, որ կը գիտակցէր, թէ չարիք կը գործէր դէմս:

ՈՉԽԱՐԸ ԵՒ ՇԱՄՓՐԻԿՆԵՐԸ

Տրապիզոն, 1916: Առաւօտ մը Սալիմ պէյ կանչել տուաւ իմամը, որպէսզի արտասանեմ իսլամութիւն ընդունելու ծիսական խօսքերը. «Կը հաստատտեմ, որ չկայ այլ աստուածութիւն, քան Աստուած, եւ կը հաստատտեմ որ Մոհամէտ անոր մարգարէն է»:

Մարգարէն, այդպէս թող ըլլայ, բայց ոչ միակը: Կայ նաեւ Յիսուս, որուն պիտի աղօթեմ մինչեւ վերջին շունչս, նաեւ Մովսէս, Մարիամ, հրեշտակապետ Գաբրիէլ եւ բազմաթիւ ուրիշներ: Ոչ ոքի տրուած է Աստուծոյ մենաշնորհը:

Երբ իմամը հարցուց, որ կրօնափոխութիւնս ազատ եւ կամաւոր էր, ստե-

ցի, ինչպէս Սալիմ պէյ ինձմէ պահանջած էր: Նոյնիսկ յաւակնեցայ, որ երջանիկ էի քրիստոնէութիւնը լքելով, որմէ կը գարշէի վաղ մանկութենէս ի վեր:

«Միշտ խորհած եմ, որ Յիսուս երկշոտ մըն էր եւ լալկան մը, ըսի: Եթէ այդ է Աստուծոյ որդին, անկեղծ խօսած, կը խղճամ Աստուծոյ, ան իրապէս ձախողած է»:

Այս տողերը երբ կը գրեմ, ամօթը կ'ողողէ զիս, բայց ոչ այդ օրուան չափ, զոր անցուցի բոկոտն, ծունկի, խիճերու վրայ քալելով, ամօթի զգացումի ճնշումով եւ թողութիւն ստանալու մեղանշումներուս համար:

Ապրելու համար ամէն բանի պատրաստ էի, եւ տէրս ըսած էր, որ կրօնափոխութիւնը լաւագոյն պաշտպանութիւնն էր: Ատկէ ետք, իրեն հաւատալով, ոչ մէկ վտանգ կը սպառնար ինծի: Իսլամները որպէս կանոն զիրար չէին սպաններ, ճիշդ հակառակը քրիստոնէաներուն, զիրար չսպաննել յամենայն դէպս առաւելութիւն մըն էր:

Նոյնիսկ եթէ զիս փրկած էր, Սալիմ պէյ ինքզինք շատ յանցաւոր կը զգար ինծի նկատմամբ, եւ ես անկէ օգտուեցայ: Օր մը, երբ իրեն հարցուցի, թէ ո՞վ էր այն պէխաւոր թեւատը, որ հայրս տարած էր զայն դաշտի մը մէջ սպաննել տալու համար, առանց տատամսելու պատասխանեց.

«Մեծ եւ թեւատ, ան միայն Ալի Ռէչէփ Անգրունը կրնայ ըլլալ, եւ զինք կ'ատեն: Ան ամէն բան ընելու պատրաստ է տեղ հասնելու համար: Ան կրնայ սպաննել հայր, մայր, նոյնիսկ իր զաւակները: Պիտի ճշդեմ, թէ իրապէս ի՞նք էր Գովադա գտնուողը»:

Ճշդեց եւ հաստատեց: Նոյնիսկ փոր-

ձեց տեղեկանալ մօրս եւ միւսներուն մասին: Շատ բարդ էր, հարկ եղաւ սպասել առնուազն երեք շաբաթ, որպէսզի փնտռտուքը աւարտի:

Սալիմ պէյ անկեղծօրէն ընկճուած էր, երբ օր մը, աչքերը վար առած, կոկորդը սեղմուած, ինծի յայտնեց. «Մայրդ եւ քոյրերդ յարձակման ենթարկուած են քիւրտ աւագակներու կողմէ, որոնք բոլորն ալ մորթած են: Թէ ինչ պատահած է մեծ մօրդ, ոչ որ կրցաւ տեղեկութիւն մը տալ»:

Փղձկեցայ: Լացաւ նաեւ Սալիմ պէյ, եւ այդ թատրոն չէր, արցունքները իրաւ էին, անոնք թրջեցին իր շապիկը: Այդ օրուրնէ սկսեալ էր, որ ամէն օր սպասեցի մեծ մայրս: Կը յուսայի, որ Հալէպի կամ այլ վայրերու սուրիացիներուն կողմէ ընդունուած կ'ըլլայ, անոնք այնքան հայեր փրկած են: Տարիներ, դեռ մինչեւ վերջերս, երբ արդէն սգացած էի, հաւատացի, որ պիտի կարենայինք զիրար գտնել եւ մեր ծերութեան օրերը պիտի անցնէինք ճաշարանիս կրակաբաններուն առջեւ: Ամէն բան փորձեցի, ոստիկանական հետապնդում եւ հայ համայնքին մէջ կոչեր, բայց ի գուր:

Չեմ կրնար մտածել Սալիմ պէյի մասին առանց զգալու տեսակ մը նեղութիւն: Ինչ որ կ'ըներ մարմնիս հետ զիս կը խորշեցնէր, միաժամանակ կը գնահատէի, որ չէր հաւներ Միութիւն եւ Յառաջդիմութիւն Կոմիտէի իր գործակիցները: Ինծի հետ գարշանքով կը խօսէր այն չարչարանքներուն մասին, որոնց կ'ենթարկուէին հայերը Կոմիտէի բանտերուն մէջ: Եղունգները կը քաշէին աքցաններով: Թարթիչները եւ մագերէ կը փետէին մէկ առ մէկ: Ոտքերը եւ ձեռքերը կը գամէին տախտակներու վրայ,

որպեսզի յետոյ ծիծաղին խաչեալներուն վրայ: «Տե՛ս, դուն ալ Քրիստոսի պէս ես, Աստուած քեզ լքած է»:

Օր մը ինծի պատմեց մահուան կարաւաններու մասին, ուրուականներու շարաններ, զորս թուրք ոստիկանները կը տանէին անապատի մէջ կամ լեռներու մէջ, ուր կը դառնային աննպատակ, մինչեւ որ ոչ ոք մնայ: Բռնաբարուած կիներ, առեւանգուած աղջիկներ, ճամբու վրայ լքուած նորածիններ, շարքերու ետեւէն քարշ եկող ծերունիներ՝ նետուած անդունդները կամ կամուրջներէ վար:

Սալիմ պէյ միշտ գեղեցիկ կիներու ծարաւ էր, այդ մէկուն կը վկայէր իր սէրը տիկին Արսլանեանի հանդէպ, որուն մասին երկար խօսեցաւ այն պահերուն, երբ հաճոյք կը պատճառէի իր գործիքին: Շատ գեղեցիկ էր շատ հարուստ կին մը, կը կարծէր, որ պիտի փոխէր իր կեանքը եւ հարստութիւն բերէր իրեն: Ան ազատ էր, անոր ամուսինը, հայ բժիշկ մը, չար բախտով անհետացած էր «աքսոր»ին ընթացքին:

Տիկին Արսլանեան մարմնաւորուած վայելչութիւնն էր: Ատոր հետ, համբոյրներու բերան մը, փարթամ կուրծք մը, լայն կոնքեր եւ իրար անցած մազեր, որոնց ոչ մէկ սանտր գլուխ կրնար գալ: Առանց մոռնալու անոր սիրալիր եւ խորունկ նայուածքը:

Առաջին ագամ երբ գայն տեսաւ, Սալիմ պէյ ստացաւ կայծակի հարուած մը, որ անպատասխան մնաց թէ, բայց չէր կասկածեր անգամ, որ ան ալ նոյն հարուածը պիտի ստանայ: Գիտէր որ այդ զինք վտանգի պիտի ենթարկէ իր կուսակցութեան ղեկավարութեան մօտ, որ առտու, կէսօր եւ իրիկուն

հայ կը բզքտէր, բայց լաւ, եթէ ան իրմէ խնդրէր, ինք ամէն բան պիտի լքէր եւ պիտի հաստատուէր Միացեալ Նահանգներ, որպէսզի լիովին ապրի իր սէրը:

Նոյնիսկ եթէ չէր ընդառաջած իր նախաձեռնութիւններուն, ինչ որ կը հասկցուէր պարագաներու բերմամբ, տիկին Արսլանեան ինքնիրեն կ'ըսէր, թէ տրամադիր է անոր հետ փախչելու երբ իր զաւակները գտնէր: Նոյնիսկ գտած էր իրենց երթալիք տեղը՝ Պոսթոն: Ան կ'երագէր ապրիլ Միացեալ Նահանգներու արեւելեան ափը:

Բայց հարկ եղաւ յոյսերը լքել: Այդ կինը շատ սէր էր ցանկութիւն կը ներշնչէր: Անոր ողբերգական ճակատագիրը ցոյց պիտի տար, որ հակառակ առասպելին, գեղեցկութիւնը եւ դրամը անհատը երբեք չեն պաշտպանած պատմութեան ընթացքին:

Արդարեւ, այդ հարցով հետաքրքրուողները շատ էին, յայտնի մարդիկ էին. Տոքթ. Ալի Սափալը, իր բարեկամ Իմամզատ Մուսթաֆան, վաճառատուներու վարիչը եւ Նայիլ պէյ անհատաբար, Միութիւն եւ Յառաջդիմութիւն Կոմիտէի Տրապիզոնի ղեկավարի իր դիրքով: Տակաւին չեմ խօսիր հայրիկը սպաննող Ալի Րեչեփ Անգրունի մասին: Զորս կեղտոտ տիպարներ, այդ գրուած էր իրենց երեսին, որոնք կը կրէին ատելութեան եւ ընչքաղցութեան խարանը:

Տիկին Արսլանեան, աւելի ճիշդ անոր պահուած դրամը, անոնց գլխու պտոյտ պատճառած էր, եւ իրենց նպատակին հասնելու համար անոնք գայն սպառնալիքի տակ պահած էին իր կորստած զաւակներուն հարցով, տասը տարեկան մանչուկ մը եւ եօթը տարեկան

աղջնակ մը, ինք պատրաստ էր ամեն բանի զանոնք վերագտնելու, բայց նաեւ ինք անգիտացող միակ անձն էր, որ անոնք սպաննուած էին:

Միայն Աստուած գիտէ, թէ ան օր մը իր շուրջ դարձող չարագործներէն մէկուն ըսած էր, թէ ուր կը պահէր իր 1200 ոսկեղրամի զանձը: Բայց օր մը ճնմալ Էմզի, նահանգի կառավարիչը, որոշեց սուլել զքօսանքի աւարտը: Տիկին Արսլանեանը բերել տուաւ ծովուն բացը, նաւու մը վրայ, ուրկէ ան նետուեցաւ կամրջակէն վար, հետեւելով «աքսոր»ի գործելաձեւին, որ կը թուէր թէ Տրապիզոնի իշխանութիւններուն նախասիրութիւնը ըլլար:

Սալիմ պէյ ինծի յաճախ կ'ըսէր, թէ չէր հասկնար ինչպէս Թուրքիոյ մաքրագործումը այդպէս շեղած էր, կ'ըսէր թէ, ինք երբեք չէր ուզած «անիկա մինչեւ հոն երթայ»:

- Կը ցախմ, ըսած էր օր մը ինծի, երբ գործս կատարեալ եղած էր, անդի աշխարհէն եկող ճիշ մը արձակելէ ետք: - Չէինք նախատեսած ինչ որ պատահեցաւ:

- Մենք ալ...

- Ամէն ոք խենթացած է, կը հասկընաս: Մարդիկ այլեւս չէին հանդուրժեր...

- Ի՞նչ բան:

- Հայերը, լաւ գիտես: Շահագործող առեւտրականներ, որոնք դարեւ ի վեր մեր արիւնը կը ծծէին: Շատ անձնակեղրոն մարդիկ, ոչ միայն կրօնական գետնի վրայ: Հետեւողականօրէն կը մերժէին կաղապարի մէջ մտնել, միայն իրենք իրենց մասին կը մտածէին:

- Այսուհանդերձ այդ բաւարար պատճառ չէր զանոնք այդպէս ջարդելու:

- Մենք, երիտթուրքերս, պէտք է որ գիտնաս, փոքրիկ իշխանուհիս, լաւ իսլամներ եւ լաւ ազատ որմնադիրներ ենք, բարբարոսներ չենք, ոչ ալ ոճրագործներ, պարզապէս կ'ուզէինք զերոյէն սկսիլ գտնուած ցեղ մը եւ արդիական ազգ մը:

- Նուազ ահաւոր միջոցներ չկայի՞նձեր նպատակին հասնելու համար:

- Ոչխարը միշտ պէտք է մորթել շամփրիկներով լաւ խորոված պատրաստելու համար: Լաւ, համաձայն եմ, ստիպուած չենք այդ ընելու համար ամբողջ հօտը ոչնչացնելու, շատ հեռու գացինք: Այդ մեր ծրագրի սխալը չէ, այդ մարդու սխալն է:

Գլուխս շարժեցի: Գիտէի, թէ որոնք էին իրական յանցաւորները. անոնք, որոնց անունները գրած էի թղթիկի մը վրայ, զոր միշտ վրաս կը պահէի:

Պիտի ուզէի դեռ տարիներ իրեն հետ ըլլալ, հետապնդումներս շարունակելու համար, բայց ամիսներու ընթացքին նկատեցի, որ իր վրայ ազդելու կարողութիւններս կը նուազէին: Աչքերը վրաս չէին կեղրոնանար, կը խուսափէին: Այլ տեղ գացող երկչոտ մարդու մը նայուածքը ունէր:

Այնուհետեւ, երբ ես գործս կ'ընէի, Սալիմ պէյ զիրք մը կարդար, զոր կը գոցէր հուսկ այն պահուն երբ Միտոնը կը ժայթքէր դէմքիս վրայ կամ բերնիս մէջ: Այդպէս կ'ընէի գործս Գուրանի, Ռ.Լ.Սթիվընսընի «Գանձերու կղզի»ին կամ Վիքթոր Հիկոյի «Թշուառներ»ու ծածկոցներուն տակ: Այս բոլորին վրայ, աճապարուած էր, եւ շուտով կը հասներ վերջաւորութեան:

Դադրած էի զինք հետաքրքրելէ, բայց կը շարունակէի միշտ նոյն պա-

հապանի նայուածքը պահել վրաս: Տեսնելով, որ մեծ հետաքրքրութեամբ կը հետեւէի իր կարդացածներուն, ինծի նուիրեց «Թշուառներ»ը, 1916-ի Իտ էլ-ֆիթրի**** առիթով: Անկէ ետք ինծի տուաւ Տէյվիտ Քոփերֆիլտը, Հաքլպեր-րի Ֆիննը եւ ուրիշ այդ կարգի գիրքեր, զորս կը կարդայի գիշերը, քնանալէ առաջ, ինքզինքս մարմնաւորելով այդ բոլոր գետերու եւ առուներու արկածախնդիրներուն մէջ:

Սալիմ պէյի մօտ կը բնակէի շուրջ երկու տարիներէ ի վեր, երբ, առաւօտ մը, Ֆաթիմա պատրաստեց ծրարներս, ինչ որ շուտով եղաւ, քանի որ շատ բան չունէի, զիս տանելէ առաջ տիրոջս մօտ, որ իր նախաճաշը կ'աւարտէր: Կեղծ գուարթութեամբ, այնպէս ինչպէս երբ գէշ լուր մը կու տան, ինծի ըսաւ, որ զիս կը դրկէր բարեկամի մը մօտ, թէյի, բրինձի, ծխախոտի եւ կաղինի մեծ վա-

ճառական մը, որ նախորդ օրը իր հիւրը եղած էր, որուն շատ հաճելի թուած էի, երբ զիս հեռուէն տեսած էր:

- Գեղեցիկ չէ, բայց շատ ազնիւ է,- ըսաւ:

- Ոչ որ աւելի ազնիւ պիտի ըլլայ ձեզմէ, տէր իմ:

- Քեզ շատ տենչագրգիռ գտած է եւ ինծի հարցուց, որ խոստումներդ կը պահէի՞ր: Ես ալ հաստատեցի:

- Միշտ պիտի ընեմ ինչ որ դուք կը պահանջէք:

- Քեզմէ կը պահանջեմ, որ իրեն հաճոյք պատճառես ինչպէս որ ինծի պատճառեցիր: Բայց վստահ եղիր, փոքրիկ իշխանուհիս: Քեզ կը տրամադրեմ, քեզ չեմ տար: Պիտի վերադառնաս:

- Վստահաբար պիտի վերադառնամ,- հաստատեցի իմ կարգիս: - Հոս շատ ընելիք ունիմ»:

Ֆրանսերէն բնագրէն հայացուած
Յ. Պ.

* *Salamandre*, (կաղամար), սողուն մը, *salamandrin` գթորին` գթորի թոյնը*:

***Ramoner*, ծխնելոյզ մաքրել

*** *Լապիւնաւորս գրուած են հայերէն բառերը*

**** *Ֆրանսաւորս այդպէս գրուած է գիրքին մէջ*

ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵԶՐԵՐՈՒ ԻՐԱՐԱՆՑՈՒՄԻՆ ԵՒ ՇՓՈԹԻՆ ՄԷՋ

Քսան անգամ ձեր գործը դրեք աշխատասեղանին:
Յոկեցէ՛ք զայն անդադար եւ վերստին յոկեցէ՛ք:
Նիքոլա Պուալօ (1636-1711)*

Յակոբ Օշական, Արամ Հայկազի Ամերիկա գաղթելու նախօրեակին, անոր թելադրած է գրականութիւնը չլքել, բայց «սիւս» չընել, այսինքն՝ հրաժարիլ զարդարանքէ: Ածականներու կոյտի կամ բանգիտական եզրերու կուտակումը գրուած էջին վրայ, Օշականի ըսած «սիւս»-ն է, որ կը ծառայէ ծաւալ աճեցնելու, տպատրեւելու, ցոյց տալու, որ «բաներ» գիտենք: Վարակը շատերու. գրող, բանաստեղծ, լրագրող, հրապարակագիր, ճառախօս: Արդիւնքը կ'ըլլայ այն, որ ընթերցողը կամ ունկնդիրը, ոտքի կեցած կը քնանայ:

Բազմատաղանդ դասախօս մը ունէինք, իմաստասէր, հոգեվելուծող, բազմաթիւ վկայականներու տէր: Դասաժամի աւարտի զանգին հետ իր վերջին բառը կ'ըսէր, չէր երկարեր, կը թելադրէր, որ մեր գրած էջը օտարի պէս կարդայինք, կարմիր գրիչ ունենալով մեր ձեռքը, եւ առանց խղճահարութեան ջնջէինք այն բոլոր բառերը եւ խօսքերը, որոնք ոչինչ կ'աւելցնէին մեր ըսել

ուզածին վրայ: Երբ նոյնը կը թելադրէի, աշակերտուիի մը, ան ըսաւ, որ չորս էջը կը վերածուէր երկուքի: Բացատրեցի, որ այդ երկու էջը միայն պիտի արժանանար «նիշ»ի:

Այս ըսուածները եթէ մամուլի էջերուն եւ բանախօսներուն համար ալ գործադրուէին, ընթերցողը թերեւս քիչ մը աւելի ընթերցող կ'ըլլար, էջը չէր դարձներ: Օրինակ, հետաքրքրական պիտի ըլլար գիտնալ, թէ հայկական տուեալ թերթի մը մէջ տարին քանի՛ անգամ «կը հնչեն» ռազմավարական, մարտավարական, գաղափարական, քաղաքական, համայնքային եւ այս կարգի բառեր: Անշուշտ այդ բառերը պէտք է որ գործածուին, անիմաստ չեն, անիմաստ կը դարձնեն գրութիւնը երբ անտեղի կերպով կը գործածուին: Այսինքն երբ կրնանք զանոնք չգործածել առանց գրութեան իմաստէն զիջում ընելու, ինչո՞ւ կը կրկնենք:

Յօդուածագիրը եւ գրողը իրենք

պետք է խմբագրեն իրենց գրածը՝ ժլատութեամբ, առանց «սիւս»ի: Գրուածը կը շահի յստակութեամբ, նաեւ ընթերցողը: Այսինքն գրուածին նպատակը միայն էջ լեցնելու չի ծառայեր: Հիմա համացանցային անարգել հաղորդակցութիւնը եւս բացասական դեր կը կատարէ, առատաբանութիւնը ամէն օր կը խճողէ համակարգիչին պզտիկ պատուհանը, այն աստիճան, որ մեքենաբար կը ջնջենք որոշ հասցէներէ հասածները:

Գրականութեան պարագային, գրողը, մոռնալով իր հեղինակի դերը, որպէս ընթերցող եթէ կարդայ իր էջերը, իր ստեղծագործութիւնը բիրեղացման կը հասնի: ԺԷ դարու ֆրանսական գրականութիւնը եւ անոր յաջորդող դարերու գրողները շատ բան կը պարտին բանաստեղծ Նիքոլա Պուալոյին: Զինք նախորդող շրջանին եւ իր օրերուն մարդիկ կային, այրեր եւ կիներ, որոնք բառ, փոխաբերութիւն, պատկեր եւ ածականներ կը թխէին, կարծելով, թէ գրականութիւն կ'ընէին: Իրմէ առաջ Մալիերայ եւ ապա ինք, հրապարակը

մաքրեցին՝ դասականի եւ զուսպի ճաշակը զարգացնելով: Իրենցմէ առաջ լեզուի զտման եւ գեղեցկացման աշխատանքը կատարած էին «Փլէատ»ի գրողները, ինչպէս Տիւ Պէլլէ եւ Ռոնսար:

Ներկայի եւ վաղուան հայ գրականութեան զարգացման համար իսկական եւ համակարգուած աշխատանքի կարիք կայ, Հայաստան եւ սփիւռքներ, լեզուական եւ ստեղծագործական որակի համար, որպէսզի հայերէնը չըլլայ օտար բառերով եւ վայրագ փոխառութիւններով վիրաւոր թարգմանուած լեզուի նմանող բան մը, եւ գրականութիւնը ձերբազատուի ածականներու եւ օտարաբանութիւններու կուտակումէ:

Բոլոր անոնք, որոնք ծանօթ չեն Պուալոյի էջերուն, կամ աշակերտական սեղաններէ հեռանալէ ետք որպէս հնութիւն մոռցած են, անոնց համար հայացնել փորձեցինք իր տողերը՝ յուսալով, որ ընթերցողները «կը լսեն» եւ մանաւանդ իրենց ընթերցումները ըստ այնմ կը գնահատեն:

3. Պ.

«ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍ»-ԷՆ հատուած մը
ՆԻԲՈԼԱ ՊՈՒԱԼՕ (1636-1711), L'art poétique, Nicolas Boileau

Կան մտածողներ, որոնց խոհերը մթին
Միշտ շուար են հանգոյն թանձր ամպին.
Իմացութեան լոյսը անզօր է զայն թափանցել:
Ուստի գրելէ առաջ, վարժուեցէ՛ք մտածել:
Ըստ մեր գաղափարի առաւել կամ նուազ մութին,
Խօսքը կը հետեւի, նուազ յստակ կամ վճիտ աւելին:
Ինչ որ լաւ կ'ըմբռնենք կ'ըստի յստակութեամբ,
Եւ այդ արտայայտող բառերը կու գան դիւրութեամբ:

Մանաւանդ ձեր գրութիւններուն մէջ լեզուն մեծարուած
Ձեր ծայրայեղութեան մէջ անգամ, միշտ մնայ սրբացուած,
Ի զուր դուք զիս կը հարուածէք ձայնով մը մելանուշ,
Երբ եզրը պատշաճ չէ կամ դարձուածքը խեղճուկ.
Իմ միտքս երբեք չ'ընդունիր ուռուցիկ խժաբանութիւն,
Ոչ ալ փքուռոյց տողով մը գոռոզ քերականութիւն:
Մէկ բառով, առանց լեզուին, աստուածային հեղինակն անգամ,
Կը մնայ յար եւ միշտ, ինչ որ ալ ընէ, գրող անպիտան:

Ճգնեցէ՛ք չխնայելով ժամ, ինչ ալ ըլլայ հարկը փութալու,
Եւ մի խայթուիք խելագարութեամբ արագ վազելու.
Ոճ մը այնքան արագ, որ կ'ընթանայ յանկերգութեամբ
Կը նշէ նուազ առաւել միտք նոյնքան քիչ դատողութիւն:
Քուելի կը սիրեմ առուակ մը, որ կը հոսի մեղմիւ.
Քան հունէն ելած հեղեղ մը փոթորկոտ ընթացքով,
Որ կը հոսի տղմուտ գետնի վրայ՝ լեցուած խիճերով:

Եւ առանց վհատելու դանդաղօրէն աճապարեցէ՛ք
Ձեր գործը քսան անգամ սեղանի վրայ դրէք.
Ջայն յղկեցէ՛ք անդադար եւ վերստին յղկեցէ՛ք.
Երբեմն աւելցուցէ՛ք եւ յաճախ ջնջեցէ՛ք...*

Շայացուց 3. Պ.

* Vingt fois sur le métier remettez votre ouvrage.
Polissez-le sans cesse« et le repolissez.
Nicolas Boileau (1636-1711).

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Թէւ հին հարց է, բայց երբեմն կողմնապաշտպանութեան պատճառներով վիճահարոյց հարց է, զոր կը լուսաբանէ հեղինակը պատմաբանի ակնոցով: Բ.

Երոպայում հաստատելով իր տիրապետութիւնը, 1941թ. Յունիսի 22-ին, գերմանական զօրքերը, առանց պատերազմ յայտարարելու, ներխուժեցին ԽՍՀՄ: Սկսուեց Հայրենական Մեծ պատերազմը: Հայ ժողովուրդը նամակով դիմեց իր զաւակներին, կոչ անելով անմնացորդ նուիրումութեամբ պայքարել մարդկութեանքշնամի ֆաշիզմի դէմ: Հայաստանում 1941թ.–1942 գարնանը կազմաւորուեցին 89, 390, 409, 408, 261, 76-րդ դիվիզիաները, որոնցում ընդգրկուած էին 67,000 հայ մարտիկներ: ԽՍՀՄ հանրապետութիւնների շարքում բնակչութեան քանակով 8-րդ տեղը զբաղեցնող Հայաստան պատերազմի մասնակիցների թուով երկրորդն էր: Կամաւոր ռազմաճակատ մեկնեցին 20,000 կոմերիտականներ: Հայ ժողովրդի 2,000 զաւակներ մասնակցում էին պարտիզանական շարժմանը: Իրեն փառքով պսակեց 300 մարտիկներ ունեցող «Անաստաս Միկոյեան» պարտիզանական* ջոկատը, որը մարտնչում էր Ուքրանիայի եւ Լեհաստանի տարբեր մարզերում: «Երիտասարդ գվարդիայի» շարքերում էին Գ.

Յարութիւնեանը, Մ. Փահլեւանեանը (Պեզլիանովա), Ֆրանսիայի դիմադրական շարժման ակտիւ գործիչ Մ. Մանուշեանի գլխաւորութեամբ էին գործում հայազգի շատ մարտիկներ: «Մորաւիայի արծիւ» ԱՅ. Պետրոսեանը, որ 60 ռազմական կարեւոր գործողութիւնների մասնակից էր, արժանացաւ Չեխոսլովակիայի բարձրագոյն պարգէւների, մեդալների, շքանշանների: Յունաստանում էր կռւում հայկական «Ազատութիւն» պարտիզանական ջոկատը:

Հայ ռազմիկները մասնակցութիւն ունեցան նաեւ Ճափոնիայի դէմ պատերազմին: Հեռաւոր արեւելեան ռազմաճակատի 12-րդ օդային բանակի հրամանատարն էր ԱՅ. Խամփերեանը (Խուդեակով):

Սփիւռքահայութիւնը եւս անմասն չէր ֆաշիզմի դէմ պայքարից: 100,000 հայ մարտիկներ մարտնչում էին դաշնակից երկրների բանակներում: Սփիւռքահայերը հանգանակութեամբ սովետական բանակին նուիրեցին «Սասունցի Դաւիթ», «Գեներալ Բաղրամեան» շարասիւնները: Ընդհանուր

առմամբ Երկրորդ աշխարհամարտին մասնակցում էին 900.000 հայեր, նրանցից 600.000-ը զորակոչուել էին Հայաստանից, 200.000-ը՝ ԽՍՀՄ այլ հանրապետություններից, 100.000-ը՝ դաշնակից երկրներից: Մտահոգիչ է այն հանգամանքը, որ պատերազմական օրերին համաձայն բանակ էին զորակոչում զենքի ընդունակ տղամարդկանց 8 տոկոսը, սակայն, այդ կարգը կարծես չէր գործում ո՛չ Հայաստանի, ո՛չ Արցախի, ո՛չ Ջալալաբադի պարագայում: Այսպես, Ջալալաբադի զորակոչուեց 12.000 հայ, որոնցից 7000-ը զոհուեց: Արցախից զորակոչուածների թիվը 45.000 էր: Հայ ժողովրդի 300.000 զաւակներ չվերադարձան պատերազմից: Սրանք թուեր են, որոնք խօսում են շարունակուող ստալինեան հակահայ քաղաքականութեան մասին:

Գերմանական նացիոնալ սոցիալիզմը ձգտելով համաշխարհային տիրապետութեան, արդէն յստակեցրել էր նաեւ իր դիւալին՝ սլաւոնների, հրեաների, քմահաճօրէն ոչ արիական համարուող ժողովուրդների, ոչնչացման ծրագիրը:

Արիական ցեղ, ռասսա հասկացութիւնը 19-րդ դարի երկրորդ կէսին ձեւաւորուած տեսութիւն էր: Համաձայն որի, ժողովուրդները դասակարգուում էին լեզուական ու ցեղական յատկանիշներով: Ընդունելի տեսակէտեր կազմուել, որ արիական էին համարուում հնդիրանական լեզուախմբի ժողովուրդները: Սա, ի հարկէ, լոկ լեզուաբանական ընդհանրութեան առումով, իսկ ֆիզիքական ասպարէզում այդպէս էլ չստեղծուեց կամ չընդունուեց արիաց ու որեւէ կերպար: Ահա այսպէս ծնունդ առած տեսութիւնը մնաց անաւարտ վիճակում եւ

կենդանացաւ միայն 20-րդ դարի 20-30-ական թուականներին, երբ իշխանութեան եկած հիթլերեան վարչակարգը «ուսումնասիրելով» է, որ ժողովուրդների ծագումնաբանութիւնը, յայտնաբերեց, որ գերմանացիները արիացիներ են:

Այդ աշխատանքները ղեկավարում էր Ադոլֆ Ռոզենբերգը, որը ճանաչուած արեւելագէտ գիտնական էր եւ մտերիմ կապերի մէջ էր Գերելսի եւ Հիմլերի հետ:

Թուրքիան, որ գաղտագողի հետեւում էր իրադարձութիւնների զարգացմանն ու քաջատեղեակ էր ֆաշիզմի հակահրեական գաղափարախօսութեանը, պատեհ առիթը բաց չթողեց, որպէսզի ոչնչացուելիք ժողովուրդների շարքում ընդգրկուի հայ ժողովուրդը եւ մէկընդմիջտ լուծուի Հայկական հարցը:

Վտանգի տակ էր ո՛չ միայն Հայկական հարցի, այլ ամբողջ հայ ժողովրդի ճակատագիրը: 1934թ. Պոտսդամում, գերմանացի գիտնականների աշխատութիւնների ընդգրկմամբ, լոյս է տեսնում «հայկականութիւնը արիականութիւն է» վերնագրով ժողովածուն, որը պէտք է փարատէր այն սխալ տեսութիւնը, որով հայերը համարուում էին սեմիտական ծագման ժողովուրդ: Թերեւս ժողովածուն դրական ներգործութիւն չի ունենում, քանզի 1939թ. վերահաստատուում է հայերի ոչ արիական ծագման տեսակէտը: Անհրաժեշտութիւն էր դառնում անմիջական շփումների օգնութեամբ փոխել հայերի նկատմամբ ձեւաւորուող գաղափարախօսութիւնը եւ Գ. Նժդեհի նախաձեռնութեամբ հանդիպումներ են կազմակերպուում Սոֆիայում Գերմանիայի դեսպանի հետ, որի խորհրդով էլ, Գ. Նժդեհը

1942թ. վերջերին, մեկնում է Պեոլին:

Մինչ այդ, Ա. Աբեղեանը 1942թ., Շտուտգարտում վերահրատարակեց իր գիրքը, իսկ ՀՅԴ մէկ այլ գործիչ, գիտնական Հայկ Ասատրեանը Գ. Նժդեհի առաջաքանով գրեց «Հայաստան-արիական նախադիրք Առաջաւոր Ասիայում է» հայերէն գրքի առաջինհատորը, որի գերմաներէն թարգմանութիւնը նախապատրաստում էր: Շուտով Գերմանիայի կառավարութիւնը ընդունեց հայերի արիական պատկանելութիւնը:

Գերմանիայում եւ Եւրոպայի գրանցուած տարածքներում ապրող հայերը ստանում էին վկայագրեր, որոնք հաստատում էին հայերի արիական ծագումը: Միաժամանակ զինուորների համար տպագրուեց «գերմանացի զինուորներ՝ հայերը ձեր եղբայրներնէն են անունով գերմաներէն, հայերէն խօսակցական բառարան, գրուցարան: Զրուցարանը միաժամանակ զինուորին զգուշացնում էր, որ հայերի նկատմամբ ցանկացած ոտնձգութիւն, անօրինական գործողութիւն է ենթակայ է քրէական պատասխանատուութեան:

Գերմանացի վերլուծաբանները գրտնում էին, որ հայերի անկախութիւնը մեծ օգտակարութիւն ունի Գերմանիայի համար: Ռոզէնբերգը առաջարկում էր, Վան-Ուրմիա-Մեւան լճերի յարակից տարածքներում կազմաւորել հայկական կոմիսարիատ: Մէկ այլ գերմանացի գիտնական առաջարկում էր հայերին բնակեցնել Արարատ լեռան շրջակայքում: Աւելին, նոյն ծրագրով, Գերմանիան ներխուժելու էր Թուրքիա,

այդ երկիրը մասնատելու, բաժանելու էր առանձին մարզերի:

Արիականութեան խնդիրներով զբաղում էին նաեւ Իտալիայում: Գերմանացի մէկ այլ հեղինակի «Ձեզ նայում են արիացիները» վերնագրով գրքի երկրորդ հրատարակութիւնը հարստացուեց իտալացի հայ ժողովրդի բարեկամ գիտնականների հայագիտական յօդուածներով: Այդ գրքի տպագրութեանը դրականօրէն էր վերաբերում նաեւ Մուսոլինին: Գրքի շապիկը ձեւաւորուած էր Հայաստանի եւ հայոց պետականութեան խորհրդանշերով՝ Արարատի եւ Հայաստանի Առաջին հանրապետութեան զինանշանով հանդերձ:


Հայ ժողովրդի գոյատեւման, վերմախտի հետ յարաբերութիւնները յստակեցնելու, ապագայ ծրագրերի հարցերում բանակցութիւնները շարունակում էին, արդիւնքում գերմանական իշխանութիւնները խոստանում էին համագործակցութեան դէպքում դադարեցնել հակահայ քարոզչութիւնը:

Բանակցութիւնների արդիւնքում էլ կազմաւորուեց Հայկական Լեգէոնը: Այն բացառապէս հետապնդում էր հայրենիքը ազատագրելու, գերմանական ծրագրերը կանխելու, Թուրքական վտանգը բացառելու նպատակները:

Հայկական Լեգէոնի կազմաւորումը պարտադրուած քայլ էր, որը Գերմանիայի հետ համագործակցութեան անւան տակ ապահովում էր հայ ժողովրդի գոյութիւնը, Հայաստանի երկրորդ հանրապետութեան անվտանգութիւնը, վերացնում թուրքական վտանգը:

* Պարտիզան - Հրոսակ, պարտիզանային - հրոսակային:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ԼԵՒՈՆ ՇԱՆՔ» ԹԱՏՐԵՐԳՈՒԹԵԱՆ ՄՐԵԱՆԱԿԱՔԱՇԽՈՒԹԻՒՆ



1 / Դատակալ, 2 / Լիլիթ Գալստեան, 3 / Մրցանակակիրներ

3

17 Յուլիս 2013-ին, Հայաստանի թատերական գործիչներու միութեան դահլիճին մէջ տեղի ունեցաւ Համազգային հայ կրթական եւ մշակութային միութեան «Լեւոն Շանք» թատրերգութեան մրցանակաբաշխութեան արդիւնքներուն ամփոփումն ու մրցանակներու արժանացած թատերական ստեղծագործութիւններու հեղինակներու պարգևատրման արարողութիւնը:

2013 տարեակիզբին յայտարարուած «Լեւոն Շանք» թատրերգութեան մրցանակաբաշխութիւնը ժամանակակից հայ թատրերգութիւնը խթանելու, այդ գրական սեռին մէջ ստեղծագործող նոր անուններ, թատրերգութեան ժամանակակից ուղղութիւններ բացա-յայտելու, հայ թատերարուեստի լուսագոյն աւանդոյթները զարգացնելու նպատակն ունէր:

Մրցոյթին մասնակցած էին 51 հեղինակներ՝ Հայաստանէն, Արցախէն եւ սփիւռքէն:

Առաջին մրցանակին արժանացաւ՝ Գուրգէն Խանջեանի «Արտաւազդ-Շիդար» թատերական երկը:

Երկրորդ մրցանակին՝ Սամուէլ Խալաթեանի «Գնացքի երկու տոմս» թատերական երկը:

Երրորդ մրցանակին՝ Արմէն Ճգնատրեանի «Այլաստուածային կատակ» թատերական երկը:

Խրախուսական մրցանակներ տրուեցան՝ Հրաչ Բէեգլարեանի «Ես, Մանուէլը, համա-կարգիչը», Յուշիկ Ղազարեանի (Սուրիա), «Վաճառականներ» թատերական երկերուն:

Մրցանակաբաշխութեան ներկայացուած 12 լուսագոյն թատերական երկերը կը հրատա-րակուին առանձին ժողովածուով, իսկ առաջին մրցանակին արժանացած երկը կը բեմադրուի «Համազգային»ի աջակցութեամբ:

ԺԻՐԱՅՐ ԲԱԲԱԶԵԱՆ

ՍՓԻՒՔԻ ՄԷՋ ԲԵՄԻՆ ԾԱՌԱՅԵԼՈՒ
ԱՐԿԱԾԱԽՆՆԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ



Մշակույթը ինձի համար օդի ու ջրի պես բան մըն է:

Ժիրայր Բաբազեան ոչ առաջինն է եւ ոչ ալ վերջինը Հայաստանէն դուրս բեմական արուեստին ծառայելու իրենք զիրենք կոչողներէն: Բազմաթիւ են բեմին ծառայող հայածնունդներ, առանց առնչութեան «հայկական»ի հետ: Երբ անոնք հռչակի կը տիրանան, «աստղ» դառնան, անոնց անունը կը հոլովենք սնափառական կամ քարոզչական նպատակներով:

Պարզ է նաեւ, որ սփիւռքի մէջ հայ բեմին ծառայողները ինքնաբաւ ըլլալու յաւակնութիւն չեն կրնար ունենալ, կամ կը խամրին կամ այլ տեղ կ'երթան:

Ժիրայր Բաբազեան ուզած է միշտ ծառայել «հայ» բեմին, արուեստին, զանոնք ծանօթացնել հայկական միջավայրէ դուրս նաեւ: Բեմի կոչում մը՝ նաեւ ժառանգութիւն՝ միջավայրէ մը: Ծառայելով հանդերձ «հայ» բեմին, ան չէ ուզած սիրողական տեղքայլ ընել, մնացած է «արհեստավարժ» ոչ միայն երբ գործակցած է օտար շրջանակներու, այլ նաեւ հայկական ներկայացումներու պարագային, որպէս դերասան եւ որպէս բեմադրիչ, ինչ որ կը պահանջէ հոգեկան ուժ եւ յարատեւութիւն:

Հասկնալու համար Ժիրայր Բաբազեանի բազմերես գործունէութիւնը, միշտ պէտք է յիշել իր պարզօրէն արտայայտած ըմբռնումը. «Մշակոյթը ինծի համար օդի ու ջրի պէս բան մըն է»:

Ան հայկական Չմիւռնիոյ ժառանգութիւն է, արմատները հոնկէ են: Ծնած է 1952-ին, Եգիպտոս: Ընտանե-

կան միջավայրը, ուր եղած է աւստրիացի մեծ մայր մը, արուեստով կը շնչէր: Հայրը եղած է «անգլիասէր», ինչպէս ինք կ'ըսէ, այսինքն թեքուած դէպի անգլիական մշակոյթը: Մանկութեան բեմ կը բարձրանար եւ կը խաղար իր մօրը թարգմանած խաղերը, կը խաղար Tintin: Դպրոցական հանդէսներուն խաղցած է աւանդական «Վարտապոմպա»ն կամ «Դդումի վաճառականը»:

Առաջին տարիները կը յիշէ.

«Յիշեալ ներկայացումներէն մէկուն աւարտին, պարմանուհի մը, հազիւ տասներեք տարեկան, ժպիտով մօտեցաւ ինծի՝ ըսելով, որ շատ սիրած էր խաղարկութիւնս, եւ այնուհետեւ քովէս չհեռացաւ ամբողջ երեկոյի ընթացքին: Այդ պահուն մտածեցի, որ շատ լաւ բան է բեմ բարձրանալ, դերասան դառնալ: Այդ օրերուն պատանիներու թատերախումբ ստեղծեցի Գահիրէի մէջ»:

Թատրոնի աւանդութիւն ունեցած է ընտանիքը, Համազգայինի թատրոնի հիմնադիր Գասպար Իփէքեան իր մեծ հօր հօրեղբայրը եղած է, իսկ անոր եղբայրը, իր ընտանեկան կապերը խզելով գացած է Հայաստան եւ Արմէն Արմէնեան անունով ծառայած է բեմին. արձանը կը գտնուի Գիւմրի, ուր եղած է քաղաքի թատրոնի հիմնադիրներէն: Ընտանիքը Եգիպտոսի մէջ ունեցած է երաժշտական գործիքներու մեծ վաճառատուն, ուրկէ անցած են մեծանուն դէմքեր:

Ժիրայր Բաբազեան աւարտած է

Կիպրոսի Մելգոնեան կրթական հաստատությունը:

Ուզած է Անգլիա ուսանիլ, բայց նիթական պատճառներով ստիպւած եղած է Հայաստան երթալ: Այդ իրեն թելադրած է Մելգոնեանի իր ուսուցիչներէն Մանուէլ Քէօւէյեան: Հայաստան ուսանելու մեկնումի նախօրեակին, հանրածանօթ եգիպտացի դերասան Կամիլ Բաթիպ իրեն ըսած է. «Դուն ուսման պէտք չունիս, արդէն նախասահմանուած դերասան ես: Դպրոցի պէտք չունիս, բայց գնա՛»:

1976-ին, հինգ տարի ուսանելէ ետք կ'աւարտէ Երեսնի Թատերական Հիմնարկը, որպէս դերասան եւ բեմադրիչ: Մեծ փորձ ձեռք կը բերէ վարպետներու հետ աշխատելով: Ուսումը աւարտելէ ետք կը վերադառնայ Եգիպտոս: Ուզած է հոն հաստատուիլ, բայց ասպարէզ չկար:

Ժիրայր կը շարունակէ. «Տեղ չէի կրնար ունենալ արաբական թատրոնի



1976: Գահիրէ: Ծորն Պերնարտ Շոյի «Մարդ եւ Գերմարդ» ներկայացումը, բեմադրութեամբ եւ խաղարկութեամբ Ժիրայր Բաբազեանի (աջին), Նորա Արմանի եւ Արա Շամլեան, Եգիպտոս

մէջ, մանաւանդ լեզուական շեշտի պատճառով: Թէեւ այդպէս են նաեւ անգլիացիները եւ ամերիկացիները, տարբերութեան նկատմամբ անհանդուրժող են, ինչու չըսել՝ նաեւ որ այդ-

պես է Հայաստանի պարագան, ուր ընդհանրապես «աղբար»ի դերեր կը տրուին դուրսէն եկողներուն, որքան ալ կարելի ըլլայ տիրապետել արեւելահայերէնի, բայց միշտ կայ շեշտի առարկութիւնը: Արուեստի մեծ մայրաքաղաք է Փարիզ, եւ միակը՝ որ կ'ընդունի իր լեզուն լսել առանց դժգոհելու, երբ ան կ'արտասանուի տարբեր շեշտով: Ֆրանսական այս տիպար աւանդութիւնը կը պարտինք դերասան հայազգի Փիթոյէֆ զոյգին, որ մեծ դեր ունեցած է Ֆրանսայի թատերական կեանքի զարգացման մէջ, հակառակ անոր որ կը խաղային «օտար» շեշտով: Պատահական չէ, որ Փիթըր Պրուքի նման հանճարեղ բեմադրիչը իր միջազգային թատրոնը հիմնած էր Փարիզ, ուր հողը պատրաստ էր»:

Ժիրայր կը շարունակէ. «Օտարներու ասպարէզին մէջ նետուելէ առաջ, Միջին Արեւելքի մէջ հայկական թատրոն ստեղծելու երազանք ունէի եւ պահ մը մտածեցի Պէյրութ փոխադրուիլ: Չէի ուզեր նաեւ Խորհրդային Հայաստան բանտարկիլ: Դուրսի եւ ներսի միջեւ մեծ տարբերութիւններ կային: Նոյն ձեւով չենք մտածեր, ճաշակները նոյնը չեն»:

Ժիրայր խարխափումի շրջան մը

կ'ապրի: Լիբանանեան քաղաքացիական պատերազմը պատճառ կ'ըլլայ, որ հրաժարի հոն հաստատուելու միտքէն եւ կարճ ժամանակ մը, երկու տարի, Լոնտոն կը մնայ. կը փորձէ հոն հայկական թատրոն հաստատել, բայց ո'չ հողը կար, ո'չ ալ կեցութեան արտօնութիւն: Կը պատմէ. «Փակագիծի մէջ ըսեմ նաեւ, որ մեր սովորական կողմ-



Ժիրայր Բաբազեան Միւր Մկրտչեանի հետ

նապաշտութեամբ, այս կամ միւս կողմը կ'ուզէր, որ թատերախումբը իրեն պատկանէր: Ստիպուած Ամերիկա գացի, ուր հաստատուած էին ծնողքս: Հոն ալ քանի մը տարի փորձեցի արհեստավարժ եւ որոշ որակով հայկական թատրոն հիմնել, ՀԲԸՄի ծիրին մէջ: Զիս նշանակած էին գեղարուեստական ղեկավար: Այդ փորձն ալ չյաջողեցաւ, ոչ թէ դերակատարներու



Յակոբ Պարոնեանի «Արամնաբոյժն արեւելեան»-ը ֆրանսերէն թարգմանութեամբ ֆրանսական բեմի վրայ

պատճառով, այլ վարչութիւններու սիրողական եւ անհեռատես վերաբերումին»:

Այս առաջին դժուարութիւններէն ետք Ժիրայր Բաբազեան կը յանդգնի ինքզինք իրականացնել օտար բեմերու վրայ: Եւ երբեմն ալ սրամտութեամբ կ'ըսէ, թէ՝ «օտար շրջանակի մէջ յաջողութիւնս կը պարտիմ... հայ վարչականներու»:

Ժիրայր Բաբազեան ունի արուեստագէտի բեղուն ասպարէզ: Մեծ յանդգնութեամբ եւ յաջողութեամբ, 1980-ին, Միշկլընի Օփերային մէջ կը բեմադրէ Արմէն Տիգրանեանի «Անուշ» օփերան, ամերիկացի երգիչներու մասնակցութեամբ, Միշկլընի Օփերայի տարեկան ծրագիրներու շարքին:

Այս կը հաստատուի Հոլիվուտ, ուր կ'աշխատի մինչեւ 1990: 1986-ին, դերասանուհի Նորա Արմանիի հետ կը պատրաստեն եւ կը բեմադրեն հայ բանաստեղծութեան գոհարները, «Արարատի երգը» (Le Chant d'Ararat) ներկայացնելով անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով, որ մեծ յաջողութիւն կը գտնէ Էտիմպուրկի (Սկովտիա) եւ Ավինիոնի (Ֆրանսա) միջազգային փառատօներուն, արժանանալով մրցանակներու: «Արարատի երգը» ներկայացուած է բազմաթիւ երկիրներու մէջ, Աւստրալիայէն Եւրոպա, Հայաստան, նաեւ Լիբանան (1996):

1990-ին կը հաստատուի Փարիզ: 1997-ին կը հիմնէ «Տիգրան Չուհաճեան» ուսումնասիրական կեդրոնը,

որուն առաքելութիւնն է հայ թատրոնի ժառանգութեան արժեւորումը եւ տարածումը: 1998-2001 կը պատրաստէ եւ կը հրատարակէ Տիգրան Չուհաճեանի «Արշակ Բ.» օփերայի բնագիրը: 2000-ին ֆրանսերէնի կը թարգմանէ եւ կը ներկայացնէ Յակոբ Պարոնեանի «Ատամնաբոյժն արեւելեան» երգիծական երկը, Ֆիրմէն Ժէմիէ եւ Տէժազէ թատրոնի սրահներուն մէջ: 2001-ին, Սան Ֆրանսիսքոյի Օփերային մէջ, առաջին անգամն ըլլալով կը ներկայացուի «Արշակ Բ.»ը, ըստ բնագրի, Յասմիկ Պապեանի եւ Նորա Կիւպիշի մասնակցութեամբ: 2001-ին, կը բեմադրէ «Անուշ» օփերան, Յասմիկ Պապեանի եւ Ալին Զութանի մասնակցութեամբ, կրկին Միչըկընի մէջ, Օփերայի տնօրէնի յատուկ հրաւերով:

Ժիրայր Բաբազեան դերեր ստանձնած է բազմաթիւ օտարալեզու ներկայացումներու մէջ: Խաղցած է Մոլիերի, Կոկոլի, Պրեխտի (Իրինա Պրուքի բեմադրութեամբ), Շեքսպիրի (Միմոն Արգարեանի կամ Հապիպ Նաղմուշի բեմադրութեամբ) գործերուն մէջ: Եւ ուրիշ բազմաթիւ դերեր եւ ներկայացումներ եղած են իր ճամբուն վրայ: Ան դերեր ստանձնած է եւ կը շարունակէ



Ժիրայր Բաբազեան եւ իր խաղընկերները «Պրաքօ» ֆիլմաշարի նկարահանման դադարին (Ժիրայր Բաբազեան չախէն երկրորդը)

ստանձնել ժապաւեններու մէջ:

Բեղուն ասպարէզ մը՝ որ դեռ չէ աւարտած, հայ մշակոյթի տարածումը իր սրտին մօտ համարող Ժիրայր Բաբազեանի համար: Նախաձեռնող այս մշակոյթի գործիչին համար պակսած է ազգային նեցուկը, որուն մասին երբեմն խօսած է դառնութեամբ: Կը զրուցենք, եւ ան կը պատմէ իր անցած ուղիին եւ հեռանկարներուն մասին: Մենք սովորաբար շատ ալ ճիգ չենք ըներ ճանչնալու համար մեր ապրող արժէքները:

Ժիրայր Բաբազեան «Ատամնաբոյժն արեւելեան» (Յակոբ Պարոնեան) երգիծական թատրոնը ֆրանսերէնի թարգմանած եւ համարձակ բեմադրութեամբ ներկայացուցած է Փարիզի մէջ:

Երեք տարի առաջ, Փարիզի Սէն-Մոր քաղաքի թատերասրահին մէջ եւ Մարսիլիայի «Օտէոն» երաժշտաթատերական սրահին մէջ ներկայացուցած էր Տիգրան Չուխաճեանի «Կարինէ» (Լէպլէպիճի Հորհոր աղա) կատակերգական օփերան: Այս տարի Օտէոն թատրոնի տնօրէնը կրկին զինք հրաւիրած է «Կարինէ»ն նրակայացնելու, 9 եւ 10 Նոյեմբերին: Թատրոնը յանձն կ'առնէ սրահը տրամադրել, յայտագիրը եւ որմագոյները հրատարկել, թատրոնի աշխատատուր անձնակազմը տրամադրել եւ եկամտի իննսուն տոկոսը: Զառասուն արուեստագէտի պատուագին պէտք է վճարել, առաւել հիւրանոց եւ կեցութիւն, ծախսեր, զորս Ժիրայր Բաբազեան ինք պէտք է գոյացնէ: Նախատեսուած մուտքերէն անկախ, անմիջական կարիք կայ յաւելեալ 20,000 եւրոյի (26.000 տոլար): Եւ ի հարկէ, Ժիրայր Բաբազեան ակնկալութիւններ ունի, որ հայ արուեստասէրներ եւ մշակութային միութիւններ կ'օժանդակեն:

Ժիրայր Բաբազեան միաժամանակ կը շարունակէ իր դերասանի ասպարէ-

զը, նաեւ շարժանկարի մէջ: Արդէն դեր վերցուցած է «Տը Ֆրէնչ» ժապանին մը մէջ, Օսկարի արժանացած Ժան Տիւժարտէնի կողքին, իսկ վերամուտին զինք պիտի տեսնենք «Պրաքօ» յաջող եւ ժողովրդական ֆիլմաշարի մը մէջ, մնայուն դերով:

Եզրակացնելով, ըսենք, որ հակառակ իր մեծ եւ յանդուգն ծախսալից նախաձեռնութիւններուն, Ժիրայր Բաբազեան չի վիատիր: Օտարներու հետ նկարահանումները եթէ գործի ասպարէզ են, պիտի ընդունինք, որ հայկական բեմին իր բերած նպաստը ծառայութիւն է: Մակերեսայնութենէ անդին, պիտի կարենա՞նք գտնուիլ Ժիրայրի կողքին, որպէսզի հայ թատրոնը եւ բեմը թաղային եւ համայնքային տարբեր որակ նուաճեն:

Ժիրայր կը հաւատայ մշակոյթի ազգակերտման ուժին: «ՅԱՌԱՋ»ի 13 Յունուար 1999-ի թիով լոյս տեսած իր յօդուածին խորագիրը յատկանշական է. «Մշակոյթը որպէս ազգային եւ պետական գոյատեւման առաջնահերթութիւն»:

Յ. Պ.

3 Օգոստոս 2013
Փարիզ



ՄԻՋՂԳԱՅԻՆ ԲԵՄԵՐՈՒ ՎՐԱՅ ԱՐԴԷՆ ԱՆՈՒՆ ՆՈՒԱՃԱԾ ՄԻՄՈՆ ԱՐԳԱՐԵԱՆ ԿԸ ՎԿԱՅԷ ԺԻՐԱՅՐ ԲԱԲԱՋԵԱՆՆԻ ՄԱՍԻՆ

Եթե երախտագիտութիւնը յաճախ մեր օրերուն հեղձումի ենթակայ առաքինութիւն մըն է, կը պատահի երբեմն, որ ան պատմութեան անյուշութեան բանտերէն դուրս փախչի:

Ճանաչողութիւնը պատուոյ եւ յիշողութեան խնդիր է:

Եթե կայ աւարտ, կայ նաեւ սկզբնաւորութիւն, ծնունդ:

Բենական առաջին քայլերս կատարեցի 1983ին, Ժիրայր Բաբազեանի դեկավարած Լոս Անճելըսի ՀԲԸՄի «Արտաւագդ» սիրողական թատերախումբի շրջանակէն ներս: Ժ. Պ. Փրիսթլիէն «Վտանգաւոր Անկլինադարձ» վերնագրով թատերախաղ մըն էր:

Եթե ոչ տաղանդը՝ ապա հրայրքը անպայմանօրէն փոխանցիլ է: Ժիրայրը այդ փոխանցեց ինծի. թատրոնի՝ իր հրայրքը:

Քսան տարիներէ աւելի է որ կը գործեմ եւ կը կը զարգանամ վերջ չունեցող այդ տարածքին մէջ, ուր տգիտութեան դէմ մղուող պայքարը դաժան է եւ անխնայ:

Երբեք պիտի չմոռնամ ինչպէս Ժիրայրը, իր արուեստին նուիրուած այդ արուեստագէտը, յայտնաբերեց եւ ներմուծեց զիս իր ընտանիքէն ներս (խօսքս միայն «Արտաւագդ»ի ընտանիքին մասին չէ):

Ան կը գործէր պարկեշտօրէն, եւ կը շարունակէ անխոնջ ու անընդմէջ գործել ի նպաստ Մարդկութեան «համայնք»ին:

Ճակատագիրն այնպէս է որ երկուքս ալ հայ ենք, եւ որ մեր ուղիները խաչաձեւութեան թատրոնի ճանապարհին, արքայի ճանապարհին:

Անհաւանական նաւագներու խումբի մը գլուխն անցած, ան տեսողութեամբ կը նաւար-



կեր ովկէանի մը վրայ, ուր ակներեւ էին բազմաթիւ խութերը՝ ... Լոս Անճելըսահայ գաղութը:

Եթե Աստուածները մեզի թելեր կու տան, ապա հարկ է մկրատներն խուսափիլ գիտնալ, եւ դեռ հարկ է թռիչք կատարելու համար երկինքը գտնել: Հարկ է քաջութիւն ունենալ դուրս գալու այն վանդակէն, որ կը պաշտպանէր եւ սակայն կը բանտարկէր զմեզ միաժամանակ:

Ժիրայրը այդպէս ալ ըրաւ:

Ինչ կը վերաբերի ինծի, եթէ վանդակս թողելով սաւառնաթեւ սլացայ, խուսափելով զիս ալ հսկող դարանած մկրատներու վոհմակէն, այդ կարողացայ ընել շնորհիւ այն բանին, որ ինծի ցոյց տրուեցաւ երկնքի ուղին:

Շնորհակալութիւն Ժիրայր:

Սիմոն Արգարեան, Հոկտեմբեր 2005

Գրուած՝ ՀԲԸՄի «Արտաւագդ» Թատերախումբի 25 ամեակին առթիւ, որ բնականաբար երբեք չհրապարակուեցաւ: